

1845

0.175/150

Լ. Մ. ՍԱԲՍՈՎԻՉ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Խ Ս Յ Մ



Տ Ա Ր Ո Ւ Յ Հ Ե Տ Ո

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

338.98(47)  
Ա-12

U21576

1930/8  
2802/8

L. Մ. ՍԱԲՈՒՎԻԶ

338.98(47)

U-12

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Խ. Ս. Հ. Մ.

15

ՏԱՐՈՒՑ ՀԵՏՈ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԼԱՆԻ ՎՈՐ-  
ՊԵՍ ԽՍՀՄ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՋՄ  
ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՊԼԱՆԻ  
ՀԻՊՈԹԵԶ

Յեկրոյ դ հրատարակութեան հիւր Վ. ՓՈԹԵՅԱՆ



2802-8

հայր. 8

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1929



56033-66

ՊԵՏՐԱՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ  
Գրառեսպ. № 2748 (բ.) Հր. № 1068 Պատվ. № 1013  
Տիրաժ 4000

### ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ընկ. Ստրսովիչի գրքույկը արդյունք է այն աշխատանքի, վոր նա կատարել է ԽՍՀՄ ընդհանուր պլանի ժամանակաշրջանի արտագրանքի մասշտաբների հիպոթեզի վրա:

Բանն այն է, վոր ապագայի նախագծումներում ժողովրդական տնտեսության ուրվագծումը հենց սկզբից չափազանց մեծ դժվարությունների յե հանդիպում արտադրանքի ապագա մասշտաբները վորոշելու հարցում: Այդ ուրվագծումը ել ավելի դժվար է մանավանդ այնպիսի հեռավոր ապագայի նկատմամբ, ինչպես ԽՍՀՄ 15 տարուց հետո, վորի ընթացքում հաղթական պրոլետարիատի առաջին յերկիրը աշխարհում բուռն թափով ծավալում է իր տնտեսությունը, արձակելով դարերով կաշկանդված իր անդամները և աշխարհում չտեսնված թափով վերակառուցելով սոցիալ-տնտեսական հարաբերությունները:

Իսկ վորո՞նք են այդ ուրվագծման չափանիշները:  
Անցյալի փորձը, ցարական Ռուսաստանի փորձը չի կարող մեզ համար որինակ ծառայել: Մեզ համար չափազանց խրատական ու հետաքրքրական է առաջավոր կապիտալիստական յերկրները—Գերմանիայի, Հյուսիս. Ամեր. Միացյալ Նահանգների փորձը և հատկապես այն յերիտասարդ կապիտալիստական յերկրների փորձը, վորոնք իրենց զարգացման ուղին—կիսաֆեոդալական հարաբերություններից մինչև արդի կապիտալիզմի մակարդակը—անցան յերկու-յերեք տասնամյակում, ինչպես, որինակ, Ճապոնիան: Սակայն տնտեսագիտական հարցերում տարրական գրագիտություն ունեցող մարդը մեզ կասի, վոր այդ փորձը մեզ համար որենք չե: Ժխտել այն տեսակետը—նշանակում է ժխտել կապիտալիզմի զարգացման մարքսիստական թեորիան, վորի վրա հենվելով և վորով, վորպես ճանաչողություն ամենաճիշտ գործիքով, ղեկավարվելով ԽՍՀՄ պրոլետարիատը կատարեց իր պատմական հեղաշրջումը. այդ տեսակետի ժխտումը հավասարազոր է կապիտալիզմի ջատագովություն, այդ նշանակում է պնդել, վոր պլանայնորեն-կազմակերպված ռացիոնալիստորեն ղեկավարվող տնտեսությունը չի կարող իր տեմպերով և տեխնիկական ու սոցիալ կենցաղային նվաճումներով գերազանցել ժամանակակից կապիտալիզմից: Յեթե մենք այդ տեմպերը (կապիտ. յերկրն.) չափանիշ

ընտրենք ընդհանուր պլանի արտադրանքի մասշտաբները վորոշելիս, ապա ամեն մի գիտակից պրոլետար իրավամբ մեզ կարող եր ուղղել իր նշանավոր «Ինչի՞ համար պաշքարեցինք» հարցը:

Այդ տեմպերը չեն ձեռք բերված հոկտեմբերյան մարտիկներին արյունով և քաղաքացիական պատերազմի հերոսական զոհերով: Արդի կապիտալիզմի ներքին բաղխումները, կապիտալիստական մրցության ու անկազմակերպվածության անիմաստ զոհերը, վորոնք կապիտալիստական տեխնիկայի այնպիսի հսկաների, ինչպես Ֆորդի գործարաններն են, ստիպում են կանգ առնել կամ լրիվ բեռնվածությամբ չաշխատել, անարտադրողական ծախքերի թրաչեղիան, տեմպերի կասեցումները և խոր փլուզումները ժողովրդական տնտեսության զարգացման մեջ, — վորոնք պայմանավորված են կապիտալիստական ձգնաժամերով, — այս ամենը հաղթահարված են պրոլետարական մեծ հեղափոխության կողմից և ՄՍՀՄ համար ընդմիշտ արխիվ են հանձնված:

Ել ավելի նշանակալից ե մեզ համար մեր սեփական փորձը, հատկապես այն տարիների փորձը, յերբ մենք հիմնականում ավարտելով պատերազմներից քաջբայլած մեր տնտեսության մոտավոր վերականգնումը, ձեռնարկեցինք հնի վերակառուցման և նորի կառուցման աշխատանքներին, — 1926—1929 թ. թ. փորձը: Այդ փորձը, մի կողմից ցույց ե աալիս լերկրի տիրոջ, պրոլետարիատի կամքը՝ չնվազեցնել ժողովրդական տնտեսության ծավալման այն տեմպերը, վորով մենք ընթանում ենք վերջին տարիներում, մյուս կողմից մեզ համար ամենահզոր մեթոդոլոգիական սկզբունքն ե արտադրանքի այն մասշտաբները վորոշելու համար, վորով մենք պետք ե պատկերացնենք ժողովրդական տնտեսության ծավալումը:

Արտադրանքի մասշտաբների հիպոթեզի կառուցման այդ նպատակին ել հիմնականում ծառայում ե ընկ. Սաբսովիչի աշխատանքը:

Սակայն մարտիկի և սոցիալիստական հասարակություն կառուցողի խառնվածքը նրա մեջ կանխեց \*) հանգիստ հետազոտողին և պլան-կառուցողին: Յեվ չսպասելով պլանի կառուցման կոնկրետ աշխատանքներին, վորին մենք պետք ե ձեռնարկենք մեր լերկրի կուտակված նյութական արժեքների, բնական հարստությունների և մարդկային արտադրող ուժերի կոնկրետ հաշվառման հիման վրա, ինչպես նաև համաշխարհային տեխնիկայի նորագույն նվաճումների և այդ տեխնիկան մեր Միությունը փոխադրելու կոնկրետ մեթոդների ու ձևերի հաշվառման հիման վրա, — ընկ. Սաբսովիչը, լինելով մասշտաբների

այդ նախնական հիպոթեզից, ուրվագծեց նաև տնտեսական հարաբերությունների պատկերը, տարածելով իր հիպոթեզը նաև գների, ժողովրդական յեկամուտների բաշխման վրա, և փորձելով նշմարել ապագայի նոր մարդու դեմքը՝ տարածեց նաև կենցաղի ու կուլտուրայի հեղափոխության վրա:

Այսպիսով, աշխատանքը իր յերկրորդ մասով միայն մի համարձակ հայացք ե դեպի առաջ, ապագայի վարագույրը բարձրացնելու մի հանդուզն փորձե, վորը իր տնտեսական կառուցվածքներում դեռ չի հիմնավորված ճարտարագետի կոնկրետ հաշիվներով:

Սակայն այդ աշխատանքի հսկայական արժեքն ել հենց այն համարձակությունն ե, վորը մեզ հնարավորություն ե տալիս, թեկուզ առանց պատշաճ հիմնավորման, թեկուզ և մասամբ, պատկերացնելու և մեր առաջ դնելու այն նպատակը, վորը, վորպես ընդհանուր պլանի կառուցման արդյունք, կանգնելու յե մեր առաջ, վորպես ռեալ խնդիր:

Յեթե սոցիալ-տնտեսական բովանդակության տեսակետից այդ աշխատանքը միայն հեղինակի ազատ կառուցվածքն ե, ապա քաղաքական խնդիրների տեսակետից նա ընթանում ե վերակառուցման պլանի այն մեթոդոլոգիայի հետքերով, վորն ընդունված ե ընդհանուր պլանի հանձնաժողովի կողմից և վորը այդ պլանը նկատում ե, վորպես նոր սեփեսական բաղաձայնություն պլան, վորպես սոցիալիզմի կառուցման պլան:

Ն. Կավալեվսկի

\*) Բնագրի «определл» բառը, պետք ե յենթադրել, տպագր. սխալ ե: Մ. Բ.

## Գ Լ ՈՒ Խ I.

«Պետք է բանվորներին և գիտակից գյուղացիներին մասսային հրապուրել 10—20 տարվա մեծ ծրագրով, հրապուրել պարզ ու ցայտուն (իր հիմքում լիովին գիտական) հեռանկարով»:

Վ. Ի. Լենին

## Ն Ե Ր Ա Մ ՈՒ Յ Յ ՈՒ Ն

Արդյունաբերութեան կամ ժողովրդական տնտեսութեան պլանավորման աշխատանքներով զբաղված կամ այդ գործին ծանոթ ամեն մեկին հայտնի չե, թե ինչ դժվարությունների հետ է կապված այդ պլանավորումը, թե վորքան դժվար է նոր տնտեսական տարվա սկզբից 2—3 ամիս առաջ կադմել այդ տարվա բավականաչափ ճիշտ ստուգել թվերը, հայտնի չե, թե հաճախ մենք ինչպիսի սխալներ ենք անում մերձավոր տարվա մեր հնարավորությունները վորոշելիս: Բնականաբար, ել ավելի մեծ դժվարությունների հետ է կապված հնգամյա շրջանի ճիշտ պլան կազմելը: Այստեղ սխալների քանակն ու չափը բավական շատ է, քան տարեկան պլանավորման ժամանակ: Հետագայում յես բերում եմ մի քանի որինակներ, վորոնք ցույց են տալիս, թե մի տարվա և նույնիսկ մի քանի ամիսների ընթացքում վորքան խիստ կերպով փոխվել են մերձավոր հնգամյակի մեր զարգացման հնարավորությունների գնահատականները: Իսկ քանի անգամ ավելի դժվար է ճիշտ կերպով գնահատել մեր զարգացման հնարավորությունները ավելի յերկարատև շրջանի նկատմամբ, մանավանդ, յեթե այդ շրջանի համար մենք վորեւ լուրջ խնդիրներ առաջադրենք:

Ամենեւին չթաղցնելով մեզնից այդ բոլոր դժվարությունները, միանգամայն պարզ կերպով գիտակցելով, վոր նույնիսկ առանձին մարդու, թվում է թե՛ ամենաանզուսպ յերեակայությունը չափազանց աղքատ կարող է համարվել մեր զարգացման այն իրական «հրաշքների» համեմատութեամբ, վոր մեր իրականությունը հրամցնում է մեզ ամեն տարի, ամեն ամիս և նույնիսկ ամեն որ, յես այնուամենայն-

նիվ վստահացա կողմիտ հաշիվներով ուրվագծելու մեր Միութեան զարգացման ընդհանուր պլանի հիպոթեզը:

Ի՞նչ պատճառներից դրդված յես վճռեցի հանդես գալ մի այդպիսի վոչ բավականաչափ մշակված և, անշուշտ, ավելի քան անկատար հիպոթեզով. պատճառը իմ այն ամենախոր համոզումն է, վոր մենք՝ իրոք, ամենակարճ պատմական շրջանում կհասնենք առաջավոր կապիտալիստական յերկրներին և նրանցից առաջ կընկնենք, վոր մոտավորապես 15 տարվա ընթացքում մենք իսկապես կկառուցենք սոցիալիզմը մեր յերկրում և, հետևապես, մեր յերկրի զարգացման ընդհանուր պլանը մենք պետք է կազմենք, վորպես սոցիալիզմի կառուցման պլան:

Այս համոզումը առաջով դեռ ամենևին լայն չափերով տարածված չէ, չեթե նույնիսկ մի կողմ թողնենք մեր հեռանկարների վերաբերյալ այնպիսի պատկերացումը, վոր արտահայտել է մեր «մոլորված» ընկերներից մեկը—«մեր յերկիրը գեղջկական է, մեր բանակը գեղջկական է, ինդուստրացման համար հարչուրավոր տարիներ են հարկավոր», \*) ապա պետք է դարձչալ ընդունել, վոր շատ քիչ թվով մարդիկ կոնկրետ կերպով պարզում են իրենց համար, թե ինչ է նշանակում ամենակարճ պատմական շրջանում հասնել ու անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներից, թե ինչպես պետք է կոնկրետ կերպով պատկերացնել սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում: Յեվ շատ քիչ թվով մարդիկ են պատկերացնում, վոր այդ խնդիրների իրագործումը կարող է հնարավոր լինել մի այնպիսի շրջանի ընթացքում, ինչպես որինակ, 15 տարին է: Ընդհակառակը, հսկայական մեծամասնությունը անշուշտ, սոցիալիզմը պատկերացնում է վորպես մի ինչվոր հեռավոր նպատակ, դեպի վորը մենք աստիճանաբար գնում ենք և պետք է գնանք, սակայն վորի իրականացման հետ դժվար է կապել մեր այս կամ այն կոնկրետ խնդիրները, այսուրվա այս կամ այն կոնկրետ ձեռնարկումները: Յեվ շատ քիչ թվով մարդիկ կան, վորոնց զբաղեցնում է համեմատաբար մոտիկ ապագայում սոցիալիզմի իրականացման հնարավորության հարցը: Մինչդեռ՝ այդ մեծ սխալ է:

Ճիշտ կերպով է մատնանշել ընկ. Յոս. Ստալինը կուսակցության XV համագումարում մեր աշխատանքի թերությունների մասին խոսելիս. «Այդ թերությունն այն է, վոր մեր մի շարք ընկերները ուզում են հոսանքի համեմատ լողալ, սահուն ու հանգիստ լողալ, առանց հեռանկարների, առանց ապագային նայելու... աղնվաբար թիավարում

են, առանց դադար առնելու, լողում են սահուն, չենթարկվելով հոսանքին, իսկ թե ուր են գնում, նրանք վոչ միայն այդ չգիտեն, այլև մինչև անգամ չեն ուզում իմանալ: Աշխատել առանց հեռանկարների, աշխատել առանց դեկի և առանց առաջաստի,—հա ինչ հետևանքներ է ունենում անպայման հոսանքի համեմատ լողալու ցանկությունը: Իսկ արդյունքը, արդյունքը պարզ է,—սկզբում նրանք բորբոսով են ծածկվում, հետո նրանք գորշանում են, հետո նրանց քաշում, կըլանում է քաղքենիության տիղմը, իսկ հետո նրանք դառնում են ամենասովորական քաղքենիներ: Այս էլ հենց իսկական ալլասերման ուղին է»:

Այդ բառերը խորապես ճիշտ են. «անհեռանկարության» դեմ անխնա պայքար պետք է հայտարարել: Ֆեհրաթեզ է, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կուսակցական, յուրաքանչյուր արհգործիչ, յուրաքանչյուր ճեպավար մածի մեր հեռանկարների մասին, մեր մերձավոր ապագայի խնդիրների մասին, այդ խնդիրների հետ կապելով այսուրվա ամեն մի կոնկրետ բայլ չեվ անելիք, չեվ գրանց գնահատի մեր «վաղվա» ճեսակեթից: Վորովհետև այդ «վաղը» մոռանալը, այսուրվա գործնական աշխատանքի մեջ ամբողջովին խորասուզվելը այն մեծ վտանգներն է պարունակում, վոր ընկ. Յոս. Ստալինն է մատնանշել:

Սոցիալիզմի կառուցումը ամենալայն բանվորական մասսաների հսկայական ստեղծագործական խանդավառություն է պահանջում. սակայն այդպիսի ստեղծագործական խանդավառություն չի կարող լինել առանց մեր մերձավոր խնդիրների մասին կոնկրետ պատկերացում ունենալու, առանց մեր եչական հնարավորությունների ճիշտ գնահատության: Մասսաների յեռանդն ու ակտիվությունը կուսակցում, կենտրոնացվում չեվ Եարժման մեջ է գրվում միայն այն ժամանակ, յերբ մասսաների առաջ կոնկրետ չեվ Երանց համար հասկանալի խնդիրներ են գրված: 1917 թ. փետրվար-մարտ ամիսներում այդպիսի կոնկրետ և մասսաների համար հասկանալի խնդիր եր—ինքնակալության տապալումը. 1917 թ. հոկտեմբերին—կապիտալիստների և կալվածատերերի եքսպրոպրիացիան և իմպերիալիստական պատերազմի դադարեցումը, քաղաքացիական պատերազմի շրջանում (1918—20 թ.)—հեղափոխության նվաճումների պաշտպանությունը ներքին սպիտակ գվարդիականների վտանգություններից և կապիտալիստական պետությունների միջամտությունից. ՆեՊ. ի առաջին տարիներում—քաջացված տնտեսության վերականգնումը և պրոլետարիատի գիլտատուրայի առաջին պետության ներքին ու արտաքին թշնամիների պատճառած ծանր վերքերի ապաքինումը:

\*) Բերում եմ Ա. Ի. Ռիկովի 1928 թ. սեպտեմբերի 30-ին Լենինգրադի կուսակցական կոնգրեսի 30-ին Լենինգրադի կուսակցության ակտիվի ժողովում արած ղեկուցումից:

Ներկայում մենք բեկման մոմենտ ենք ապրում: Մեր տնտեսութեան վերականգնումն ավարտված է: Մենք թևակոխել ենք նոր շրջան—տնտեսութեան վերակառուցման շրջանը և ապրում ենք նրա առաջին տարիները, չերբ ժողովրդական տնտեսութեան ոգտին մեծ ներդրումներ են կատարվում, վորոնք, սակայն, անմիջական արդյունք չեն տալիս, ուստի և մեծացնում են մեր զարգացման դժվարությունները: Արդյունաբերական ապրանքների դեֆիցիտը, հացամթերման անկանոնություններն ու յեղեղները—այդ դժվարությունների արտահայտությունն են: Սրան ավելանում է նաև դասակարգային պայքարի սրուժը,—կուլակը և ավարտել է իր «վերականգնման շրջանը», լավացնելով քաղաքացիական պատերազմի տարիներում ընկած իր տընտեսությունը, նա ևս ուզում է իր «վերականգնման շրջանը» թևակոխել, այսինքն մանր կապիտալիստից խոշոր կապիտալիստ դառնալ, խորհրդային իշխանությունը թույլ չի տալիս նրան այդ անել իսկ կուլակը դրան պատասխանում է դասակարգային սուր պայքարով ընդդեմ պրոլետարիատի դեկտատուրայի: այդ պայքարի սրման մասնակի արտահայտությունը հացի նենգադուլի (սաբոտաժի) կազմակերպումն է: Այս դասակարգային պայքարը էլ ավելի չի ծանրացնում մեր զարգացման դժվարությունները, բարդացնելով «այսորվա» կացությունը, այդ դժվարությունների արդյունքն այն վորոշ չերբ-րումներն ու տատանումներն են, վորոնք և կուսակցություն մեջ ևս իրենց արտահայտությունը գտան հանձինս աջ թեքման:

Այդ տատանումներին, այդ թեքմանը չենթարկվեցին այն ընկերները, վորոնք չափազանց խորասուզվեցին այսորվա գործնական աշխատանքի մեջ, վորոնք «վոչ միայն չգիտեն, այլև չեն ուզում իմանալ թե ուր են գնում», վորոնք իրերը գլխի վայր են գնում և մեր ապագան այսորվա կացության տեսակետից են գնահատում, կամ ավելի ճիշտ, գնահատում են արդեն անցած ասրիների կացության տեսակետից («ինդուստրացման համար հարյուրավոր տարիներ են հարկավոր»), փոխանակ հասկանալու և ճիշտ կերպով գնահատելու այսորվա դժվարությունները մեր ամբողջ զարգացման և մեր մերձավոր ապագայի իրական հեռանկարների տեսակետից:

Հեսեվապես այժմ, ճերֆին գծվարությունների ուժեղացման յեվ սիջազգային հարթերությունների մրնոլորթի խսացման այս ցուցանում, առանձնապես կարեվոր է, վորպեսզի ամբողջ բանվոր գասակարգի առաջ գրվի սոցիալիզմի կառուցման խնդիրը, վորպես ռեալ, ամենալայն բանվորական մասսաների համար միանգամայն կոնկրետ յեվ հասկանալի խնդիր:

Բանվոր դասակարգը պետք է իմանա, վոր սոցիալիզմն արդեն մի ինչ վոր հեռավոր ապագայի իրեալ չէ, այլ մի գործնական խնդիր է, վոր իրագործվել կարող է մերձավոր մեկուկես տասնյակ տարիները ընթացքում: Բանվոր դասակարգը պետք է հասկանա, թե ինչու կոմունիստական կուսակցություն ղեկավարությունը ցա կարող է մասավորապես 15 արուց իեո սոցիալիզմ կառուցել յեվ ինչպես ցա կկարողացա սեղծել ու կսեղծի այդ սոցիալիզմը:

Ահա, այն ժամանակ էլ, յերբ բանվոր դասակարգը կիմանա ու կըմբռնի սոցիալիզմի կառուցումը, վորպես մի ռեալ ու կոնկրետ խնդիր, վորը մեճ պեճ է իրագործեճ այժմ, անհապաղ յեվ վորը մեճ կկարողանաճ իրագործել 15 արուց իեո, ահա եեճ այդ գիտակցությունը էլ պեճ է բարձրացնի պրոլետարիատի սեղծագործական խանգավառությունը չեսեված չափերով, պեճ է ասացապակի ցա ուժերը, պեճ է ցա մեջ հասաս, անհողզող կամ առաջ բերի՝ ինչ գնով էլ ինի իրագործելու այդ խնդիրը, պեճ է ցա մեջ հավաս, վաստակություն առաջ բերի այն մասին, վոր ցա այդ խնդիրը կիրագործի:

Այդպիսի շարժմանը, այդ առաջխաղացմանը աջակցելու անհրաժեշտության գիտակցությունն էլ, ահա, ստիպում է հանդես գալ ընդհանուր պլանի այս նախնական հիպոթեզով, չնայած նրա միանգամայն ընական և անխուսափելի խոշոր դժվարություններին: Այս հիպոթեզի իմաստն ու նշանակությունը, իհարկե, նրա մեջ բերվող թվերի ճիշտ հիմնավորումը չէ, այս հիպոթեզի հիմնական նպատակն է,—1) ցուց տալ, թե ինչպիսի մասշտաբներով մենք պետք է չափենք մեր զարգացումը մերձավոր 15—20 տարիների ընթացքում, ինչպիսի վիթխարի խնդիրներ են կանգնած մեր առաջ ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում, և այդ խնդիրների իրագործման համար ինչ պայմաններ կան: 2) ապացուցել, վոր մոտավորապես 15 տարվա ընթացքում մենք կկարողանանք սոցիալիզմ կառուցել, հիմնվելով գլխավորապես ներքին ռեսուրսների վրա և վոր, չնայած այդ անհրաժեշտ միջոցների ամբողջ վիթխարիությանը, մենք կկարողանանք ինքներս ստեղծել այդ միջոցները, քանի վոր չերկիր հարստությունը աշխատանքով է ստեղծվում, իսկ ժողովրդական աշխատանքն ոգտագործելու համար մեր պայմաններն անսահման ավելի նպաստավոր են, քան կապիտալիստական յերկրներում: Յեվ չեթե ցարիզմի ժամանակ մեր յերկիրը աղքատ էր, և մենք աղքատ յերկիր ժառանգություն ստացանք ցարիզմից, ապա միայն այն պատճառով, վոր ցարական Ռուսաստանում ժողովրդական աշխատանքը բարբարոսաբար էր ոգտագործվում և այլ կերպ չէր կարող ոգտագործվել:

Հասարակութեան սոցիալիստական կազմակերպումը պահանջուի յերկրի արտադրողական ուժերի հզոր զարգացում և դրա համեմատելի յերկրի հարստութեան բավականաչափ բարձր մակարդակ: Մենք կկարողանանք ինքներս ստեղծել այդ հարստութիւնները, կկարողանանք արտադրողական ուժերը զարգացնել մինչև անհրաժեշտ մակարդակը, առաջավոր կապիտալիստական յերկրներէից վոչ ցած, և կկարողանանք մոտավորապէս 15 տարուց հետո սոցիալիզմ կառուցել: Սհա, այդ հեռանկարներէ սպասուցեմանն ու հիմնավորմանն էլ նվիրված ե ընթերցողին տաճարկիող ընդհանուր պլանի այս հիպոթեզը, վորպէս սոցիալիզմի կառուցման պլանի հիպոթեզ:

Անհրաժեշտ եմ համարում կրկին ընդգծել, վոր բոլոր բերվող հաշիվները մոտավոր-ոժանդակ բնույթ ունեն և գլխավորապէս նպատակ ունեն ցույց տալու մեր զարգացման իրական մասշտաբները մերձավոր ապագայում՝ ըստ հիմնական գլխավոր գծերի:

Անհրաժեշտ ե մի դիտողութիւն ևս անել. այս հիպոթեզում գընահատվում են ժողովրդական տնտեսութեան զարգացման գլխավոր հեռանկարները խաղաղ պայմաններում. կապիտալիստական պետութիւններէ կողմից ԽՍՀՄ դեմ մղվելիք հնարավոր պատերազմը կամ այս կամ այն յերկրում ծագելիք պրոլետարական հեղափոխութիւնը, իհարկէ, հիմնական փոփոխութիւններ կմտցնեն Միութեան զարգացման նշված հեռանկարներէ մեջ:

Գ Լ Ո Ւ Խ II

Տ Ե Մ Պ Ե Ր Ի Հ Ա Ր Յ Ը

Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու խնդիրն անխղելի կերպով մկայված ե մեր մի այլ խնդրի հետ—ամենակարճ պատմական շրջանում հասնել առաջավոր կապիտալիստական յերկրներին և անցնել նրանցից, վորովհետև սոցիալիզմ կառուցել կարելի չե միայն չափազանց բարձր տեխնիկայի հիմքի վրա, արտադրողական ուժերի զարգացման չափազանց բարձր մակարդակի վրա: Միայն զարգացման չափազանց բարձր տեխնիկական ու անտեսական մակարդակի հասնելով՝ մենք կկարողանանք վերջնականապէս կերպարանափոխել մեր յերկրի սոցիալական կառուցվածքը, վոչնչացնել նրանում գոյութիւն ունեցող դասակարգերը և այն դասակարգային հակասութիւնները, վորոնք մեր յերկրում դեռ այժմ ել կան:

Մեզ առաջավոր կապիտալիստական յերկրներէից, հատկապէս Հ.Ա.Մ. Միացյալ Նահանգներէից բաժանող տարածութիւնը հսկայական ե: Բավական ե մատնանշել, վոր Միաց. Նահ. արդյունաբերական արտադրանքը մերից մոտավորապէս 20—25 անգամ ավելի չե, վոր ամերիկական բանվորի կյանքի իրական մակարդակը մեր բանվորի կյանքի մակարդակից բարձր ե 3,5—4 անգամ. ամերիկական բանվորի աշխատանքի արտադրողականութիւնը 6—8 անգամ բարձր ե. յերկաթի և պողպատի սպառումը 1925 թ. Միաց. Նահանգն. բնակչութեան մի շնչին ընկնում եր 468 կգ., իսկ մեզանում ընդամենը 14 կգ., Միաց. Նահանգների յուրաքանչյուր 10,000 բնակչին 1924 թ. ընկնում եր 35,9 կլմ. յերկաթուղային ճանապարհ, իսկ մեզանում ընդամենը 5,2 կլմ., այսինքն մոտ 8 անգամ պակաս, իսկ յեթե նկատի ունենանք տեղիտորիան, ապա Հյուս. Ամեր. յուրաքանչյուր 100 քառ. կլմ. ընկնում ե 5,1 կլմ. ճանապարհ, իսկ մեզանում ընդամենը 0,4, այսինքն 13 անգամ քիչ, և այլն: Բնական ե, վոր շատ կարճ ժամանակամիջոցում այդ տարածութիւնն անցնել հնարավոր չե: Իսկ ինչպիսի՞ տևողութեամբ պետք ե չափվի այդ «ամենակարճ պատմական շրջանը»: հարյուրամյակով, բազմամիով տասնամյակներով, թե՞ մի քանի հնգամյակներով:

Ինչպէս հայտնի չե, մեր բոլոր հնգամյակները կառուցվել են այսպէս կոչված «մարող կորագծով». արտադրանքի աճման համեմատաբար բարձր տեմպերը նշվել են հնգամյակի առաջին-չերկրորդ տարվա համար, իսկ հետո արտադրանքի յուրաքանչյուր տարվա աճման թափը խիստ կերպով նվազել ե, և շատ մեծ թվով ընկերներ, վորոնք մասնակցել են այդ հնգամյակները կազմելու աշխատանքներին, յենթադրել են, վոր մենք հետագայում կիջնենք մինչև յուրաքանչյուր տարվա աճման «նորմալ», թեկուզ և կապիտալիստական յերկրներում սովորական համարվող նորմայից մի քիչ բարձր 6-7 տոկոսին: Սակայն, յեթե նույնիսկ մի կողմ թողնենք այդ «հոռետեսներին» և արդյունաբերութեան հետագա զարգացման համար վերցնենք տասնտոկոսյա տարեկան աճումը (ԺՏԻՄ առաջին հնգամյակի վերջին տարվա աճումը), իսկ Հյուս. Ամեր. համար միայն 5 տոկոս, ապա մենք Հյուս. Ամեր. արտադրութեան արդի մակարդակին կհասնենք մոտավորապէս 35 տարուց հետո, իսկ Հյուս. Ամերիկայից անցնել կկարողանանք միայն 70 տարուց հետո:

Ի՞նչ են այդ—մեր զարգացման պայմանների համար—աստղաբաշխական շրջանները (յեթե ընդունենք այդ շրջանները): Նրանք նըշանակում են, վոր մենք քիչ շատ իրական, մերձավոր շրջանում վոչ



միայն առաջ ընկնել, այլև հասնել չենք կարող առաջավոր կապիտալիստական յերկրներին, հետևապես և մենք չենք կարող մեր առաջնակ ալդալիսի խնդիր դնել: Այդ շրջանները նշանակում են, վոր այն անսահման առավելությունները, վոր ունի տնտեսության սոցիալիստական կազմակերպությունը կապիտալիստականի հանդեպ, թեկուզ այն սաղմային ձևով, վոր գոյություն ունի անցման շրջանում, այդ առավելությունները միայն վերացական թեորեստիկ տեսակետներ են և չեն կարող կյանքում կիրառվել: Նրանք ցույց են տալիս, վերջապես, վոր մենք մեզ համար իրապես տեսանելի պատմական ժամանակաշրջանում չենք կարող տնտեսությունն ու հասարակությունը սոցիալիստական հիմունքներով կազմակերպել:

Սակայն, իրոք, այսպես են մեր ունի հեռանկարները, իրոք մենք պետք է հրաժարվենք մեր առաջադրած խնդրից—ամենակարճ պատմական շրջանում հասնել և առաջ ընկնել կապիտալիստական առաջավոր յերկրներից:

Այդ հարցին պատասխանելու համար պետք է ամենից առաջ, թեկուզ մոտավորապես պատկերացնել, թե ինչ է նշանակում իրագործել առաջադրած խնդիրը, այն է՝ ամենակարճ պատմական շրջանում հասնել և առաջ ընկնել կապիտալիստական առաջավոր յերկրներից:


Միության ժողովրդական տնտեսության զարգացման տեմպի հրարավորության հարցի քննությունը պետք է սկսել արդյունաբերության զարգացման տեմպերից, վորովհետև արդյունաբերության զարգացումը զգալի չափով նախորոշում է ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի զարգացման հնարավոր տեմպերը:

Վերջին տարիներում բուռն վեճեր են տեղի ունեցել այն հարցի շուրջը, թե վորքան արագ կարող է զարգանալ մեր արդյունաբերությունը: Մասնագիտ-ճարտարագետների և բուրժուական տնտեսագետների մեծամասնությունը ապացուցում էր, վոր մենք կարող ելինք արագ թափով ընդարձակել մեր արտադրությունը միայն այսպես կոչված՝ վերականգնման շրջանում, այսինքն մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք լրիվ բեռնվածությամբ չեյինք աշխատեցնում մեր գործարանները, վորոնք իր ժամանակ կառուցված ելին ուս և ոտար կապիտալիստների կողմից, քանի դեռ մենք չեյինք հասել արտադրության մոտավորապես մինչպատերազմյան չափերին: Նրանք նախագուշակում ելին, վոր հենց վոր մենք հարկադրված լինենք մեր արտադրությունն ել ավելի զարգացնել մեր ուժերով, վոչ «ուրիշների հաշվին», մեր զարգացման տեմպն անխուսափելիորեն խիստ կդան-

դաղի, քանի վոր մենք բավականաչափ միջոցներ չենք ունենա արդյունաբերության մեջ դնելու համար, նոր գործարանները շատ չերկար ժամարակամիջոցում կկառուցվեն և կսկսեն աշխատել միայն յերկար տարիներից հետո, մենք բավականաչափ ներքին հումք չենք ունենա, իսկ արտասահմանից ել շատ բան մենք ներմուծել չենք կարող և այլն: Այս բոլոր կարծիքները հիմնավորվում ելին ներքին մեծ համոզումով, յեռանդով մատնանշվում ելին մեր ճանապարհին կանգնած բազմաթիվ դժվարությունները և այդ տեսակետների հեղինակները բոլորին ապացուցում ելին, վոր մեր զարգացման համար ներքին նախադժած համեստ հեռանկարներն ամենից ավելի ունի և ճիշտ հեռանկարներն են: Իսկ մեր այն առարկությունը, թե մեր հեռանկարները բավական ավելի նպաստավոր են, նրանց կողմից գնահատվում ելին վորպես վորևե հողից, հիմքից զուրկ ֆանտազյորություն:

Պետք է նկատել, վոր «Իրական լինիլու» այդպիսի հավակնությամբ կառուցված առաջին հնգամյակը կազմվեց դեռևս 1923 թ. և կրում էր «ՌՍՖՍՀ մետաղարդյունաբերության ուղենիշ հեռանկարային հնգամյա պլան, սկսած 1923 թ. մինչև 1927 թ. ներառյալ» վերնագիրը: Վորովհետև սև մետաղագործության այս հեռանկարային զարգացումը կառուցվել է այն հաշիվների համեմատ, թե ինչ հավանական չափերով կզարգանա ու կաճի արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար անհրաժեշտ մետաղի սպառման քանակը, ուստի այդ հնգամյակն ըստ ելության ամբողջ ժողովրդական տնտեսության հեռանկարային ուղիվազի՞ծն է հանդիսանում: Այդ առաջին հնգամյակի ընդգրկած շրջանն արդեն անցել է և մենք հնարավորություն ունենք դատելու այն մասին, թե վորքան էր համապատասխանում իրականության այդ չափավոր հնգամյակը, վոր հավակնություն ունի ամենից ավելի որչիկտիվ և ունի լինելու: 1-ին դիագրամը ցույց է տալիս, թե թուղի ձուլվածքի իրական զարգացումը ինչ չափով է գերազանցել մատնանշված հնգամյակի յինթադրություններից:

Թուղի արտադրությունը հիշյալ 4 տարվա ընթացքում ավելացել է վոչ թե 3,6 անգամ, ինչպես նշում ելին պլանի հեղինակները, այլ 10 անգամ, հասնելով մինչպատերազմյան մակարդակի 70,4 %-ի: Գնալ մետաղարդյունաբերության առաջին հնգամյակով նշված 24,5% -ի հանդեպ: Պետք է նկատի ունենալ, վոր այդ նույն ժամանակամիջոցում պլանի համաձայն 1 բանվորի արտադրանքը պետք է կրկնապատկվեր, այնինչ փաստորեն այդ քանակությունն ավելացել է 3,8 անգամ:



1 Թուղի ձուլվածքը

1. Թուղի ձուլվածքը:

Վերոհիշյալ հնգամյակը կազմելիս—ըստ յերևույթին՝ 1923 թ. սկզբին—մեզ մինչպատերազմյան մակարդակից բաժանող տարածությունը հսկայական էր. պե՛տ էր բուլի արագուրությունն ավելացնել 15 անգամ, վորպեսզի մենք հասնեյինք մինչպատերազմյան մակարդակին: Նախագծի հեղինակները, վորոնք, անշուշտ, իրենց դատում էին մեր զարգացման իրական պայմանները և իրական հնարավորություններն զգաստորեն հաշվի առնող «ռեալիստները» շարքը, գտնում էին, վոր մինչպատերազմյան մակարդակին մենք կհասնենք միայն շատ հեռավոր ապագայում: Յեթե ուղադրության առնենք թուղի ձուլվածքի նրանց նշած մարող կորագիծը, ապա մինչպատերազմյան մակարդակին մենք հասնել կարող էինք առնվազն 15 տարուց հետո, այսինքն՝ մոտավորապես այնքան ժամանակում, վոր ընդգրկում է մեր

ընդհանուր պլանը: Յիվ, անկասկած, յեթե 1923 թ զուգվե մեկը վրասահանար պնդել, վոր 4 տարվա մեջ (մինչեվ 1927 թ. ներառյալ) մենք կկարողանանք բուլի ձուլվածքն ավելացնել վոյ բե 10 անգամ, այլ 3,6 անգամ, ինչպես նախագծի հեղինակներն էին վորոշում, վոր մենք այդ ժամանակամիջոցում կհառագայակենք յեվ վոյ բե կիրկնապասկենք աշխատանքի արագուրականությունը, ապա այդպիսի մարզուն անուշտ մենք կանվանեյինք իրական հողից զուրկ Փանագյուր յեվ ունայիտ, վոր չունի իրականություն վորեվե հոսառուրում: Իսկ յեթե այդ յերևակայական խիզախ անձնավորությունը վստահանար նաև պնդել, վոր 10 տարուց հետո, այսինքն՝ 1932/33 թ. մենք վոչ միայն կհասնենք, այլև բավականաչափ կանցնենք մինչպատերազմյան մակարդակից, թուղի ձուլվածքն ավելացնելով 1923 թ. համեմատությամբ 35 անգամ (իսկ հենց այս էլ նշում են ԺՏԳԻ հնգամյակի ստուգիչ թվերը), ապա այդպիսի մեկին ուղղակի կանվանելին խելագար, վորն ակնհայտնի ուտոպիական այնպիսի յերևակայական հաշիվներ է անում, վոր դուրս ուղադրության անգամ արժանացնել պետք չէ:

56033-66

Մինչդեռ 1923—1927 թ. «ուտոպիան» դարձավ փաստ, և կոնկրետ իրականությունը շարաչար կերպով ծաղրեց այն մարդկանց, վորոնք ամենից շատ իրականությունից «կտրվելուց» էին վախենում և հավակնություն ունեյին իրենց տեսակետը զուտ գիտական և ամենաորբեկտիվը համարելու:

Մասնագետների այդ, իբր թե, «որյեկտիվ» սակավահավատությունը, վորի տակ թագնվում էր պրոլետարիատին խորթ իդեոլոգիան, ցայտուն կերպով անդրադարձավ արդյունաբերության և ժողովրդական տնտեսության առաջին հեռանկարային պլանների վրա: Այդ խորթ իդեոլոգիային այս կամ այն չափով գերի ընկան նաև մի քանի կոմունիստներ: Առանձնապես խիստ կերպով այդ խորթ իդեոլոգիային յենթարկվեց այն «մոլորված» ընկերը, վորի նամակից չէ մեջ բերի վերը հիշված բառերը. այդ ընկերն իր նամակում գրում է. «մեր յերկիրը գեղջկական է, բանակը գեղջկական, ինդուստրացման համար հարյուրամյակներ են հարկավոր. վերընթաց շարժման տեմպը նույնը չէ, ինչ վոր վայրընթաց շարժման տեմպն էր, հրաշքներ գործել կարելի չէ միայն այն ժամանակ, յերբ գործի զենքն արգեն պատրաստիք (ընդգծումն իմն է, Լ. Ս.) յեվ այն էլ՝ միայն մինչև վորոշ սահմաններ. մեծ ձեփորմները պատրաստի նյութ են պահանջում և վերջանում են այնտեղ, վորտեղ սկսվում է նորի որդանական աճումը»: Մեջբերումն արված է ըստ Ա. Ի. Ռիկովի 1928 թ. նոյեմբերի 30-ի զեկուցման:



Այս խորթ իդեոլոգիան մերկացնել և հաղթահարել միանգամից չի հաջողվում, սակայն հնգամյա պլանի չուրաքանչյուր նոր նախագիծ կազմելով, մենք մի քայլ առաջ ելինք գնում դեպի այդ իդեոլոգիայի հաղթահարումը: 1-ին աղյուսակում չես բերում եմ մի քանի թվեր, վորոնք ցույց են առլիս, թե ինչպես աստիճանաբար ուղղվել է «մարդ կորագիծը» հեռանկարային պլանի հաջորդական նախագրծերի մեջ:


**Աղյուսակ I.**

Ընդհանուր արտադրանքի քանակական անուժը՝ նախորդ տարվա համեմատությամբ տկոսներով:

Տ Ա Ր Ի Ն Ե Ր	1 հնգամյակ (1927 թ. կեսերը)	Հնգամ. սո. թվ. 1 վարյ. (1927 թ. վերջ)	Հնգ. սո. թվ. ոգոսամ. վար. (1928 թ. ոգ.)	Հնգ. սո. թվ. 11 վարյանտ (1928 թ. դեկտ.)
1927/28	16,3	18,0	24,9	24,9
1928/29	13,1	16,6	19,7	21,9
1929/30	13,7	17,6	17,3	20,2
1930/31	10,5	13,8	17,7	21,8
1931/32	10,0	12,8	17,5	22,6
1932/33	—	—	14,4	22,4
1927/28—1931/32	82,1	108,0	142,7	173,4
1928/29—1932/33	—	—	121,0	167,7

Ընդամենը մեկուկես տարի առաջ՝ 1927—28 տնտեսական տարվա հենց սկզբին յենթադրվում էր, վոր այդ տարվա ընթացքում արտադրանքն աճելու չէ 16,3 տոկոսի չափով, իսկ նույն տարվա նոյեմբերին, այսինքն այն ժամանակ, յերբ 1927—28 տնտես. տարին արդեն սկսվել էր, յենթադրվում էր, վոր արտադրանքն աճելու չէ 18,1 տոկոսով: Արտադրանքի աճումն այդ տարվա ընթացքում կազմեց մոտ 24—25 տոկոս, մեկուկես անբամ գերադանցելով առաջին հնգամյակում նշված չափից: Այս 1928—29 ընթացիկ տարվա համար առաջին հնգամյակով նախատեսված էր արտադրանքի 13,1 տոկոս աճում, իսկ հնգամյակի ստուգիչ թվերը, վորոնք կազմված էլին մի

տարի առաջ, նշում էլին 16,6 տոկոս աճում: Փաստորեն մենք ընթացիկ տարում կունենանք 21-22 տոկոս աճում: «Մարդ կորագիծ» այդ աստիճանական շտկումը յերևում է 2-րդ դիագրամից: Այսպիսով իրական կյանքը խիստ կերպով կործանում է բոլոր, իբր թե «որչեկտի» հոռետեսական կառուցվածքները, վորոնց իրական լինելուն մեղուցում էլին համոզել, և ցույց է տալիս, վոր մեր իրական հեռանկարներն անհամեմատ ավելի նպաստավոր են:



2 Ընդհանուր արտադրանքի տարեկան աճումը (նախորդ տարվա համեմատությամբ տոկոսներով):


Մեր հնարավորությունների նուշնալիս թերազնահատություն կատարվում էր նաև աշխատանքի արտադրողականության, ինքնարժեքի իջեցման, արդյունաբերության հումքային բազալի զարգացման, արդյունաբերական ապրանքների արտածման և սարքավորման ու հումքի ներմուծման հնարավորությունների, արդյունաբերության սե-

փական կուտակումների չափի նկատմամբ և այլն\*): 3-րդ դիագրամները ցույց են տալիս, թե ինչպես սուր կերպով փոփոխվել են արդյունաբերության վաստակների վերաբերյալ յենթադրուկումները ըստ հընգամյակի առաջին տարիների:

Իհնչով և բացատրվում այս հանդամանքը: Այն ամբողջ շարք առավելութուններով, վոր կազմակերպված պլանային տնտեսութունն ունի տարերային կապիտալիստական տնտեսության համեմատությամբ: Մենք կարող ենք շատ ավելի լավ ոգտագործել մեր գործարանները, քան կապիտալիստն եր ոգտագործում, կարող ենք լիովին բեռնավորել մեր սարքավորումը, աշխատեցնելով յերկու, յերեք հերթի, իսկ այնտեղ, վորտեղ կարելի յե նաև անընդհատ աշխատանքի անցնել: գոյություն ունեցող ձեռնարկություններն ընդարձակելու և վերասարքավորելու միջոցով, արտադրության պրոցեսսի ուսցիտակցման ու կանոնավոր կազմակերպման միջոցով, շինվածքների ստանդարտիզացիայի, գործարանների մասնագիտացման և նման այլ ձեռնարկումների միջոցով մենք կկարողանանք հսկայական չափերով ավելացնել գոյություն ունեցող ձեռնարկությունների արտադրական կարողութունը և անհամեմատ ավելի արտադրանք ստանալ, քան այդ յենթադրվում եր առաջ:

Մեր իրական հնարավորութունների ավելի ճիշտ գնահատությունը այն արդյունքն ունեցավ, վոր հնգամյա պլանի վերջին ստուգիչ թվերը, վոր ԽՍՀՄ ԺՏԳԽ կողմից ներկայացված ելին ԽՍՀՄ Պետպլանին 1928 թ. դեկտեմբերին,\*\*) 1930/31 և 1931/32 թ. թ. համար նշում են մոտավորապես 22 տոկ. աճում՝ հանդեպ առաջին հընգամյակի 10 տոկոսի, այսինքն՝ նախատեսվում եր արտադրության յերկու անգամից ավելի արագ աճում, քան յենթադրվում եր ընդամենը սրանից մեկ ու կես տարի առաջ: Միաժամանակ պետք է ընդգծել, վոր հնգամյակի վերջին ստուգիչ թվերը նշում են արտադրության տարեկան մոտավորապես 22 տոկ. աճում ամբողջ հնգամյակի ընթացքում, վոր միայն առանց վորևե նվազումի հնգամյակի վերջում, այլ նույնիսկ վորոշ վերելքով, մոտավորապես մինչև 22,5 տոկ.:

\*) Տես «Торг.-Пром. Газ.»-ում տպված իմ հոդվածները— «Հնգամյակի ստուգիչ թվերի մասին»—1928 թ. ոգոստ. 19-ին, № 192 և «Մի նոր քայլ առաջ»—1928 թ. դեկտեմբեր 16-ին, № 292, ինչպես նաև ընկ. Կուլբիշևի հոդվածը— «Հնգամյա պլանի աշխատանքների առթիվ»—«Торг.-Пром. Газ.» 1929 թ. հունվ. 18-ին, № 15:  
 \*\*) Արդյունաբերության 1928/29—1932/33 թ. թ. հնգամյա պլանի ստուգիչ թվերը.—ընկ. Կուլբիշևի գեկուցումը Արհեստակց. Միությունների Համաժողովինական 8-րդ համագումարում», իր հավելվածներով. Մոսկվա, 1929 թ.:



3. Արդյունաբերության վաստակ վաստակը ըստ ԽՍՀՄ ԺՏԳԽ հնգամյակների (միլիոն սովետական ռուբլի):

Այսպիսով, մեր զարգացման «մարդ կորագծի» անխուսափելի-  
 ության թեորիան, վոր պահպանողական մասնագետները մեծամաս-  
 նության և բուրժուական, այլև բուրժուական իդեոլոգիայի հակված  
 տնտեսագետների կողմից համարվում էր անառակելի ճշմարտութուն  
 և հրամցվում էր վորպես որչեկտիվ և գիտականորին հիմնավորված  
 իրողութուն,—այդ թեորիան գուրս լեկավ մի ութուցից լեգեզգա,  
 մեացածից մի հաւիվ, վոր վոչ մի առնչութուն չունի իրականու-  
 քյան հետ: Հնգամյա պլանի ստուգիչ թվերը վճականապես վերջ  
 տվին «մարդ կորագծերի» թեորիային, գեթ մերձավոր հնգամյակի  
 վերաբերմամբ, նշելով նույնիսկ արտադրութւան աճման վորոշ արա-  
 դացում հնգամյակի վերջին: Յեվ այդ պատահական բան չէր, վորով-  
 հետև ըստ հնգամյա պլանի ստուգիչ թվերի գործող հիմնական կապի-  
 տալի աճումը, վոր 1928/29 թ. 10 տոկ. է, իսկ 1929/30 թ. 14 տոկ.,  
 հնգամյակի հաջորդ չերեք տարիների ընթացքում հասնելու յե 21—  
 23 տոկ.: Այստեղ պետք է նշել, վոր հնգամյակի վերջին ստուգիչ  
 թվերը ևս մեծ չափով թերագնահատում են գործող հիմնական կապի-  
 տալի եֆեկտիվութունը. այսպես՝ ընթացիկ տարում ըստ այդ թվե-  
 րի՝ եֆեկտը հավասար է լինելու մոտավորապես 11 տոկ., յեկող տա-  
 րի—գարձյալ մոտավորապես 5 տոկ., իսկ հաջորդ տարիներում մնում  
 է միևնույն մակարդակի վրա: Այս հաշիվը, ի հարկե, սխալ է և չի  
 կարող բավարար չափով հիմնավորվել. այս կարելի չէ տեսնել հենց  
 թեկուզ միայն նրանից, վոր ստուգիչ թվերը թեթև արդունաբերու-  
 թյան նկատմամբ՝ գործող կապիտալի աճում են նշում նաև հաջորդ  
 տարիների համար, իսկ ընդամենը հինգ տարվա ընթացքում—43 տո-  
 կոս. գլխավոր թերագնահատութունը, անշուշտ, տեղի չէ ունենում  
 ծանր արդունաբերութւան նկատմամբ: Ուստի պետք է միանգամայն  
 անվիճելի համարել, վոր հնգամյակի վերջին ստուգիչ թվերով նշված  
 հիմնական ներգրումները և գործող հիմնական կապիտալի աճումը  
 հնգամյակի վերջին տարիներում ապահովում են արտադրութւան աճ-  
 ման ավելի մեծ տոկոս, քան 22 տոկ. է, այսինքն՝ փաստորեն կան-  
 խորոշում են արտադրութւան աճման տեմպի արագացումը հնգամյա-  
 կի վերջին: Այսպիսով, չարաբաստիկ «մարդ կորագիծը» իրականում  
 վեր է ածվում իր սեփական հակադրութւան՝ մերձավոր հնգամյակի  
 ընթացքում:

Իսկ ի՞նչ հեռանկարներ ունի մեր հետագա զարգացումը: Յեթե  
 մերձավոր հնգամյակի նկատմամբ պետք է հրաժարվել «մարդ կո-  
 րագծերի» թեորիայից, ապա հենց վոր խոսքը վերաբերում է մեր հե-  
 տագա զարգացմանը, այդ թեորիան անհապաղ հարություն է առնում,  
 և նախագուշակութուններ են լինում այն մասին, թե մերձավոր հըն-  
 դամյակից հետո աճման տեմպերն անխուսափելի կերպով իջնելու չեն:  
 Այդ տեսակետը հիմնավորելու համար, վորպես գլխավոր պատճառա-

նություն, բերում են արդեն վոչ թե մեր աղքատութւունն ու հետա-  
 քնացութւունը, այլ ուղղակի այն, վոր վոչ մի չերկիր այդպես արագ  
 կերպով չի զարգացել, և մեր Միությունը, հնգամյակի վերջում հաս-  
 նելով մոտավորապես արտադրութւան մինչպատերազմյան չեռապա-  
 տիկ մակարդակին, այնուհետև այլևս չի կարող այնպես արագ զար-  
 գանալ, ինչպես առաջին հնգամյակում. «այլապես, իբր թե, հապա-  
 ի՛նչ հետևանքների կհասնենք մենք 20—30 տարուց հետո և մասնա-  
 վանդ 100 տարուց հետո»:

Այս պատճառարանութւան մեջ արդեն, անկասկած, իր արտա-  
 հայտութւունն է գտնում մտքի քաղքենիական յերկչառութւունը,  
 իր սահանափակ մանր-բուրժուական նեղ հորիզոնից կտրվելու չեր-  
 կյուղը. մարդիկ վախենում են իսկապես իրենց հաշիվ տալու այն  
 ճշմարիտ վոր՝ վիթխարի առավելութւունների մասին, վոր ունի և  
 քանի գնա՝ այնքան ավելի կունենա պլանայնորեն-կազմակերպված,  
 սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող տնտեսութւունը տա-  
 րերալին, անկազմակերպ կապիտալիստական տնտեսութւան հանդեպ:

Յես գտնում եմ, վոր մերձավոր հնգամյակից հետո մեր արդյու-  
 նաբերութւունը, իսկ նրա հետ դուզընթաց նաև մեր ամբողջ ժողո-  
 վրդական տնտեսութւունը կկարողանան նույնպիսի արագ թափով  
 դարգանալ, ինչպես առաջին հնգամյակում: Ինչպիսի պայմաններ են  
 անհրաժեշտ դրա համար: Ամենից առաջ, գործող հիմնական կապիտա-  
 լի համապատասխան աճումը, վորի համար անհրաժեշտ է չուրաքան-  
 չուր տարի վորոշյալ չափով ավելացնել հիմնական աշխատանքներն  
 արդյունաբերութւան մեջ: Դրա համար, իր հերթին, պետութւունը  
 պետք է այնպիսի միջոցներ ունենա իր տրամադրութւան տակ, վո-  
 րոնք հնարավորութւուն տան կատարելու հեռուհեռու ավելացող այդ  
 ծախքերը արդյունաբերութւան մեջ, նաև հնարավորութւուն տան արագ  
 կերպով զարգացնելու մեր գյուղատնտեսութւունը,—մասնավորապես,  
 արդյունաբերութւան համար գյուղատնտեսական հումք արտադրելու  
 ուղղութւամբ,—հնարավորութւուն արագ ստույգ կերպով զարգացնելու  
 տրանսպորտի բոլոր տեսակները, արագութւամբ բարձրացնելու բան-  
 վորների կյանքի իրական մակարդակը, արագութւամբ բարձրացնելու  
 բնակչութւան կուլտուրական մակարդակը և այլն: Կարծի ենք, արդյոք,  
 մենք մտածել, վոր մեր պետութւունը կունենա այդպիսի միջոցներ:

Յես գտնում եմ և կաշխատեմ ապացուցել, վոր մենք անպայ-  
 ման կունենանք այդ միջոցները, ուստի և կսկսենք զարգանալ կա-  
 պիտալիստական յերկրների պատմութւան մեջ չտեսնված արագ թա-  
 փով, և վոր շնորհիվ ամբողջ ժողովրդական տնտեսութւան զարգաց-  
 ման ու վերակառուցման այդ արագ թափի մենք անհամեմատ ավելի  
 արագ կկարողանանք մեր չերկրում սոցիալիզմ կառուցել, քան այժմ  
 մենք այդ մասին մտածել կարող ենք:

Գ Լ ՈՒ Խ III

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՃՄԱՆ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ուրվագծելով արտադրութեան մոտավոր աճուժը ընդհանուր պլանի շրջանում, յետ յեւակետ ետ ունեցել հետևյալ նկատառումները:

Ամենից առաջ, յեթե առաջին հնգամյակում, վորոշ հիմնական ներդրումների շնորհիվ, մենք զարգացման աստիճանաբար արագացող տեմպ ունենանք, ապա այդպիսի աստիճանաբար արագացող տեմպ մենք առավել ևս նախագծել կարող ենք նաև հետևյալ հնգամյակների համար: Ուստի յետ գտնում եմ, վոր ճիշտ կլինեն, յեթե մենք նախագծենք արտադրանքի տարեկան աճման այսպիսի բարձրացող կորագիծ.— I հնգամյակի վերջին՝ մոտավորապես 23,5 օ/օ, II հնգամյակի վերջին—մոտավորապես 27 օ/օ, III հնգամյակում— մոտավորապես 27,5 օ/օ, IV հնգամյակում—մինչև տարեկան աճման 30 օ/օ-ը:

Այնուհետև, քանի վոր չերկրի ինդուստրացման խնդիրները պահանջում են, վորքան հնարավոր ե՛ արագ կերպով ընդարձակել արտադրութեան գործիքները և միջոցները արտադրութեանը, ուստի ծանր արդյունաբերութեան համար (Ա. խումբ) նախագծված է արտադրանքի աճման ավելի արագ տեմպ, քան թեթև արդյունաբերութեան համար (Բ. խումբ): Մակայն, յետ ճիշտ չեմ համարում այն տեսակետը, թե պետք է չափազանց մեծ տարբերութեան սահմանել ծանր և թեթև արդյունաբերութեան աճման միջև,—չերկու հիմնական պատճառներով. 1) մեր պայմաններում չերկրի ինդուստրացման արագ ընթացքը հնարավոր է միայն այն ժամանակ, չերք մենք արագութեամբ կբարձրացնենք աշխատավորութեան կյանքի ռեալ պայմանները, տարբերվելով կապիտալիստական արդյունաբերութեանից, վորտեղ զարգացման ընթացքը կապված է գլուխացիութեան և քաղաքային մանր-բուրժուազիայի հսկայական մասսաների ազդատացման հետ, կապված է գործազուրկների մեծ պահեստի բանակ ստեղծելու հետ, և հաճախ վատթարացնում է բանվորների դրութեանը: Մակայն աշխատավորութեան կյանքի ռեալ մակարդակն արագութեամբ բարձրացնելու համար անհրաժեշտ է բավականաչափ արագութեամբ բարձրացնել թեթև արդյունաբերութեան արտադրանքի աճումը, վորպեսզի հնարավոր լինի բավարարել բնակչութեան անմիջական կարիքը արդյունաբերական ապրանքների ասպարիղում. 2) չերկրորդ նկատառումն այն է, վոր հատկապես թեթև արդյունաբերութեանն է, վոր պետք է իր վրա

կրի այն միջոցները կուտակման սուսվիլագույն ֆունկցիաները, վորոնք անհրաժեշտ են վորչ միայն ծանր արդյունաբերութեան, այլ նաև թեթև արդյունաբերութեան, իսկ զգալի չափով նաև ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերի զարգացման համար. ուստի և պետք է արագացնել թեթև արդյունաբերութեան զարգացման տեմպը:

Այդ նկատառումներով չես առաջին յերեք հնգամյակների ընթացքում ծանր և թեթև արդյունաբերութեան արտադրանքի տարեկան աճման միջև տարածութեան եմ թողնում 3.5 օ/օ-ի չափով (I հնգամյակի վերջին ըստ Ա. խմբի 25 օ/օ, իսկ ըստ Բ. խմբի—29 օ/օ, II հնգամյակի վերջին ըստ Ա. խմբի—29 տոկ., իսկ ըստ Բ. խմբի—25 տոկ., III հնգամյակի վերջին ըստ Ա. խմբի—30 տոկ., իսկ ըստ Բ. խմբի—25 տոկ.): Մակայն յետ գտնում եմ, վոր թեթև և ծանր արդյունաբերութեան զարգացման միջև այսպիսի փոխհարաբերութեան կարող է գոյութեան ունենալ միայն վորոշ շրջանի ընթացքում,—այնքան ժամանակ, մինչև անհատական սպառման համար հատկացված ապրանքների բավարարումը կհասնի բարձր մակարդակի. հետագայում արդեն հանրային, կոլլեկտիվ ոգտագործութեան բարիքների (փոխադրութեան միջոցներ, սանատորիումներ և հանգստի տներ, թանգարաններ, հանրային պալատներ, նոր կատարելագործված քաղաքներ, այգիներ և այլն) սպառման աճումը զգալի չափերով կզերազանցի անհատական սպառման բարիքների կարիքից. ուստի չորրորդ հնգամյակում չես խիստ լիցեցնում եմ թեթև արդյունաբերութեան աճման տեմպը (IV հնգամյակի սկզբում արտադրանքի աճումը կազմում է 20 տ., իսկ այդ հնգամյակի վերջին տարում—5 տոկ. չե հասնում), իսկ ծանր արդյունաբերութեան տարեկան աճումը համապատասխան չափով չես ավելացնում եմ, մոտավորապես, մինչև տարեկան 40 տոկ.:

Այս պայմաններում ընդհանուր արտադրանքի քանակական աճումը (միլիարդ ուրբլ. ըստ 1926/27 թ. գործարանային անփոփոխ ինքնարժեքի) կարտահայտվի 2 աղյուսակում բերված թվերով (չերես 26):

Ինչպես չերևում է այդ թվերից, տարեկան աճման տեմպերը մի փոքր բարձրացող կորագիծ են կազմում, և խոստ արդյունաբերութեան արագացումը I հնգամյակի վերջին պես է ավելանա 2,6 անգամ (23,5 միլիարդ ուրբլի), II հնգամյակի վերջին՝ մոտավորապես 8 անգամ (72 միլիարդ ուրբլ.), III հնգամյակի վերջին՝ 27,5 անգամ (244 միլիարդ ուրբլ.) իսկ IV հնգամյակի վերջին՝ 100 անգամ (885 միլիարդ ուրբլ.) ըստ 1927 թ. անփոփոխ ինքնարժեքի: Ըստ այսմ 15 տարուց հետո քեքեվ արդյունաբերութեան արագացումը կավելանա մոտավորապես 22 անգամ, իսկ ծանր արդյունաբերութեան արագացումը—35 անգամ. 20 տարուց հետո քեքեվ արդյունաբերութեան արագացումը կավելանա մոտավորապես 40 անգամ, իսկ ծանր արդյունաբերութեան արագացումը—մոտավորապես 185 անգամ:

Ընդհանուր արտադրանքի քանակական անումը

(միլիարդ տոննայի մեջ 1926/27 թ. գործարան. անփոփոխ գներով)

ՏԱՐԻՆԵՐ	Ծանր արդյունաբ.		Թեթև արդյունաբ.		Ամբողջ արդյունաբ.	
	Միլիարդ տոննայի	Տար. աճման %/0	Միլիարդ տոննայի	Տար. աճման %/0	Միլիարդ տոննայի	Տար. աճման %/0
1927—28	3,7	—	5,2	—	8,9	—
1928—29	4,53	22,5	6,14	18	10,67	20,0
1929—30	5,55	22,5	7,25	18	12,80	20,0
1930—31	6,83	23	8,70	20	15,53	21,3
1931—32	8,47	24	10,53	21	19,00	22,3
1932—33	10,59	25	12,85	22	23,44	23,4
Արտադր. աճի 5 տ. հետո	—	2,86	—	—	—	2,63
1933—34	13,24	25	15,68	2,47	28,92	23,4
1934—35	16,68	26	19,29	22	35,97	24,4
1935—36	21,18	27	23,92	23	45,10	25,4
1936—37	27,11	28	29,90	24	57,01	26,4
1937—38	34,97	29	37,38	25	72,35	26,9
Արտ. աճի 10 տ. հետո	—	—	—	7,18	—	8,12
1938—39	45,46	9,46	46,73	25	92,19	27,4
1939—40	59,10	30	58,41	25	117,51	27,5
1940—41	76,83	30	73,01	25	149,84	27,5
1941—42	99,88	30	91,26	25	191,14	27,6
1942—43	129,84	30	114,08	25	243,92	27,6
Արտ. աճի 15 տ. հետո	—	5,1	—	21,9	—	27,4
1943—44	175,32	35	136,90	20	312,22	28
1944—45	243,96	39	158,80	16	402,76	29
1945—46	345,73	42	177,86	12	523,59	30
1946—47	486,80	41	193,87	9	680,67	30
1947—48	651,31	40	203,56	5	854,87	30
Արտ. աճի 20 տ. հետո	—	184,2	—	39,1	—	99,4

Ծանր և թեթև արդյունաբերության արտադրանքի այս աճումը պայմանավորված է տրված 4 դիագրամի մեջ (տ. գրքի վերջում):

Խոնչ և նշանակում արտադրության այս աճումը: Ամենից առաջ այն, վոր արդյունաբերական արտադրության մասշտաբով մենք արդեն 15 տարուց հետո բավական կգերազանցենք ամենաառաջավոր կապիտալիստական յերկրի—Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգների զարգացման արդի մակարդակից, իսկ 18—20 տարուց հետո մենք անհամատ կգերազանցենք այն մակարդակից, վորին նա այդ ժամանակ հասած կլինի, յերբ նա շարունակի զարգանալ կապիտալիստական պայմաններում, այսինքն՝ յիթե այնտեղ այդ ժամանակամիջոցում սոցիալիստական հեղափոխություն չծագի, վորովհետև արտադրության կապիտալիստական պայմանները, նույնիսկ ամենապատասխան դեպքում, հազիվ թե ապահովին արտադրության ավելի արագ և միաժամանակ անխափան աճում, քան տարեկան 5 տոկոս: Այսպիսով, արտադրության ծավալման նշվող նախագիծը համապատասխանում է մեր առաջադրած խնդրին—ամենակարճ պատմական ժամանակաշրջանում հասնել ու առաջ ընկնել առաջավոր կապիտալիստական յերկրներից:

Սակայն բնական է, վոր արդյունաբերության այսպիսի վիթխարի աճման իրականացման հնարավորությունը կախված կլինի ամենից առաջ այն հիմնական աշխատանքներից, վոր մենք այդ ժամանակաշրջանում կկարողանանք կատարել արդյունաբերության մեջ: Իսկ ի՞նչ չափի աշխատանքներ են դրանք:

Գ Լ ՈՒ Խ IV

ԳՈՐԾՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՇՐԱՔԵՇՏ ՉԱՓԸ

Արդյունաբերական արտադրության այդպիսի վիթխարի չափերի հասնելու համար անհրաժեշտ է համապատասխան չափով ավելացնել արդյունաբերության հիմնական կապիտալը, վորովհետև յես յինթաարդյունաբերության հիմնական կապիտալը եֆեկտիվությունը ընդդրում եմ, վոր գործող հիմնական կապիտալը ավելանալու յե վորոչ չահանուր պլանի տևողության ընթացքում ավելանալու յե վորոչ չափով (առաջին հնգամյակում 15 տոկ., յերկրորդ հնգամյակում 10 տոկ., յերրորդում 10 տոկ. և չորրորդ հնգամյակում 10 տոկ.), ապա գործող հիմնական կապիտալը պետք է մի փոքր դանդաղ աճի, քան արտադրանքը: Այսպես հաշվելով, յես յերկար ունեյի հետևյալ նկատառում-

ները: Տեխնիկական մակարդակը կապված է կապիտալի որդանակա-  
կազմի բարձրացման հետ, և ամենից առաջ, հիմնական կապիտալիս-  
բաժինն ավելանալու հետ: Հիմնական կապիտալի մասսայի ավելանա-  
լը չերկու ձևով է ազդում արտադրանքի վրա: Մի կողմից՝ կապիտալի  
այն մասը, վոր ծախսվում է հումքի ու նյութերի փոխադրության և  
նախապատրաստման մեքինացման, պատրաստի աւտադրանքի ծը-  
րարման ու փոխադրության վրա և այլն, անմիջական ազդեցութուն  
չի գործում արտադրանքի ավելացման վրա. ուստի այդ ծախքերի հե-  
տևանքն է լինում գործող հիմնական կապիտալի եֆեկտիվության  
կամ արտադրողականության նվազումը, այսինքն՝ նվազում է գործող  
հիմնական կապիտալի մեկ ուրբլուն ընկնող արտադրանքը: Մյուս կող-  
մից, բազմահերթ աշխատանքների անցնելը, գործարանների մասնա-  
գիտացման և շինվածքների ստանդարտիզացիայի հետևանքով սերիա-  
լական (серийное) և մասսայական արտադրանքի կիրարկութունը,  
արտադրության պրոցեսի ավելի ճիշտ կազմակերպումը (մասնավո-  
րապես՝ կոնվեյերը), արտադրության մեջ ավելի ուսցիտնալ տեխնոլո-  
գիական պրոցեսների կիրարկութունն ու արագացումը և այլն,—այս  
բոլորը, հսկայական չափերով ավելացնելով արտադրանքի պատրաստ-  
ման հնարավորութունը, միաժամանակ, միշտ էլ կապված չեն մեծ  
հիմնական ծախքերի հետ և զգալի չափով ավելացնում են գործող հիմ-  
նական կապիտալի եֆեկտիվութունը կամ արտադրողականութունը,  
այսինքն՝ ավելացնում են գործող հիմնական կապիտալի 1 ուրբլուն  
ընկնող արտադրանքը:

Մեր պայմաններում, յերբ մենք ձգտում ենք և, տարբերվելով  
կապիտալիստական չերկրներից, կարող ենք առավելագույն չափերով  
լիովին ոգտագործել արդյունաբերության կանխիկ կապիտալի ուժը,  
չերկրորդ կարգի պրոցեսները, անշուշտ, ունեն և ունենալու չեն գե-  
րակշռող նշանակութուն, վորը հատկապես սուր կերպով արտահայտ-  
վելու չէ առաջին հնգամյակում: Առաջին հնգամյակի համար ճիշտ կը-  
լինեի գործող հիմնական կապիտալի եֆեկտիվության ավելացումն ըն-  
դունել մոտավորապես 35—45 տոկ: Յեթե չես առաջին հնգամյակի հա-  
մար ավելացումն ընդունեցի միայն 15 տոկ, ապա այն պառճառով,  
վոր յեղակետային 1927/28 թ. հիմնական կապիտալը չես վերցրել եմ  
ըստ հաշվեկշռային գնահատության (վոր փաստորեն չափազանց նվա-  
զեցված է) և վոչ թե ըստ վերականդնման արժեքի, վորը բավական  
գժվար է վորոշել (սրանով էլ, գլխավորապես, բացատրվում է այն  
տարբերութունը, վոր կա մերձավոր հնգամյակի վերաբերյալ իմ յեն-  
թադրութունների և արդյունաբերության հնգամյակի վերջին սուո-

գել թվերի միջև. վերջին թվերը, բացի դրանից, բավական թերազը-  
նահատում, պակաս են հաշվում հիմնական ներդրումների եֆեկտիվու-  
թյունը, հատկապես ծանր արդյունաբերության նկատմամբ):

Վորովհետև առաջին հնգամյակի վերջին, շնորհիվ իմ մատնանը-  
շած չեղանակի, կապիտալի հաշվեկշռային գնահատության նվազեցու-  
մը հավասարվում է մոտավորապես գերոյի, ապա հետևյալ յուրաքան-  
չյուր հնգամյակի համար չես հնարավոր եմ համարում գործող հիմնա-  
կան կապիտալի եֆեկտիվության ավելացումը ընդունել մոտավորապես  
10 տոկոս:

Այսպիսով, գործող հիմնական կապիտալի անհրաժեշտ աճումը  
հաշվելով արտադրության վերը նախագծված աճման հետ վորոշ հա-  
բաբերությամբ և այնուհետև հաշվելով հիմնական աշխատանքների  
տարեկան այն քանակը, վորը անհրաժեշտ է գործող հիմնական կա-  
պիտալը անհրաժեշտ չափերի հասցնելու համար, յես հաշվի չեմ առնում  
նաև այն, վոր հիմնական կապիտալի ֆիզիկական և հատկապես բարո-  
յական մաշվածքը՝ արագ տեխնիկական պրոգրեսի պայմաններում,  
պետք է վերցնել բարձրացված չափով, ուստի և վերցրի, վորպես հիմ-  
նական կապիտալի յուրաքանչյուր տարի պակասող մաս. բացի դրա-  
նից, վորովհետև հաջորդ տարիները փոխանցվող՝ չավարտված հիմնա-  
կան աշխատանքների չափը, բնականաբար, պետք է տարեցտարի աճի,  
ուստի չես ընդունեցի, վոր չավարտված հիմնական աշխատանքների  
գումարը պետք է կազմի կատարվող հիմնական աշխատանքների տա-  
րեկան գումարի 50—40 տոկոսը ըստ Ա խմբի և մոտավորապես 30 տոկ.  
ըստ Բ խմբի:

Այսպիսի չենթադրությամբ՝ գործող հիմնական կապիտալի աճու-  
մը ըստ ծավալի (ըստ նրա արժեքի՝ 1927-28 թ. գներով) և հիմնական  
աշխատանքների անհրաժեշտ աճումը (գարձյալ 1927-28 թ. անփոփոխ  
գներով) կարտահայտվի հետևյալ մեծութուններով (տես 3 աղյուս.  
յեր. 31):

Այսպիսով, արդյունաբերական արտադրությունը վերը նախա-  
գծված չափերով ծավալելու համար անհրաժեշտ է գործող կապիտալը  
15 տարուց հետո ավելացնել և հասցնել մի հսկայական գումարի—մո-  
տավորապես 140 միլիարդ ուրբլու, այսինքն՝ ավելի քան 20 անգամ  
(ըստ Ա խմբի՝ մոտավորապես 25 անգամ և ըստ Բ խմբի՝ 15 անգամ),  
իսկ 20 տարուց հետո գործող հիմնական կապիտալը ավելացնել մինչև  
500 միլիարդ ուրբլի կամ մոտավորապես 75 անգամ (ըստ Ա խմբի՝ ա-  
վելի քան 110 անգամ և ըստ Բ խմբի՝ մոտավորապես 26 անգամ):

Այս զեպքում 15 տարուց հետո՝ միայն վերջին տարվա ընթաց-



բում դուրս յեկած (պակասած) կապիտալի գումարը կհավասարվի այժմ գործող ամբողջ հիմնական կապիտալի համարյա կրկնապատիկ արժեքին, իսկ հիմնական աշխատանքների գումարը նրանից 6,5 անգամ ավելի կլինի. 20 տարուց հետո 1 տարվա ընթացքում դուրս յեկող կապիտալի արժեքը կգերազանցի այժմ գործող ամբողջ հիմնական կապիտալից մոտավորապես 6 անգամ, իսկ այդ տարվա հիմնական աշխատանքների գումարը այժմ գործող ամբողջ հիմնական կապիտալից կը գերազանցի ավելի քան 25 անգամ:

Արտադրութան անձան, գործող հիմնական կապիտալի ավելացման և հիմնական աշխատանքների չափերի վերաբերյալ վերոհիշյալ թվերը ապշեցնում են իրենց բացառիկ, սոսալին հայացքից՝ համարյա աստղաբաշխական մեծությամբ և կարող են չերկու հարց առջ բերել: Առաջին հարց. կարող ենք, արդյոք, մենք արդյունաբերության այդպիսի հսկայական աճում նախագծել 15—20 տարվա համար. արդյոք այդ աճումը չի անջատի, չի կտրի մեր արդյունաբերությունը ժողովրդական տնտեսութան մյուս ճյուղերից. արդյոք արտադրության գործիքների ու միջոցների և անձնական սպառման առարկաների այդ հսկայական մասսան կարող և սպառում, կիրարկություն գտնել. և չերկրորդ հարց. չի՞նք նույնիսկ արդյունաբերության այդպիսի աճումը նպատակահարմար ել լինի, ապա կարող ենք, արդյոք, մենք իրագործել այդ ծրագիրը, նկատի ունենալով մեր աղքատությունը և արտաքին խոշոր միջոցների հայթայթման բացակայությունը. և այդ ծրագրերն իրագործելով՝ մենք արդյոք չենք մերկացնի ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը, մոռացության չենք մասնիկ այդ ճյուղերը և պետությունը միջոցով չերկրի ամբողջ միջոցները չենք հատկացնի միայն արդյունաբերությանը:

Յես առաջիկա կանգ չեմ առնի առաջին խմբի հարցերի վրա. նըրանց բավականաչափ սպառիչ կերպով պատասխանում ե այս հիպոթեզի ամբողջ հետագա շարադրանքը. չերկրորդ հարցի վրա չես անհրաժեշտ եմ համարում կանգ առնել այժմ և չեթ:

Ճիշտ ե, արդյոք, վոր մենք այնքան աղքատ ենք, վոր առանց դրսից խոշոր միջոցներ ստանալու մեր չերկիրը չի կարող արագ զարգանալ. և ճիշտ ե, արդյոք, ընդհանրապես հարց դնել մեր աղքատության մասին:

Մեր աղքատության վերաբերյալ թեղիսին յես հակադրում եմ մի այլ թեղիս. — աբխասագնի արագորդականության բավականաչափ արագ աճման ու ինքնարժեքի բավականաչափ արագ իջեցման պայմաններում, նայել կուսակման համապատասխան բաղադրականու-

Յ. Ա. Մ. Ի. Ե. Ր. ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԳԻՐՈՒՄՆԵՐ ԹԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐՊԵՏԼԻ ԸՆՈՒՄՆԸ (Միլիարդ ուրբիներով 1927 — 28 թ. անփոփոխ գնահատություններ)

Տ Ա Մ Ի Ե Ր	Ա կ խումբ		Բ խումբ		Ա կ խումբ		Մ կ խումբ	
	Երկրորդ	Մեծագույն	Երկրորդ	Մեծագույն	Երկրորդ	Մեծագույն	Երկրորդ	Մեծագույն
	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ	արդյունաբեր. մեջ
1927-28	3,8	6,6	2,8	6,6	3,8	6,6	3,8	6,6
1928-29	4,69	7,85	3,16	7,85	4,69	7,85	4,69	7,85
1929-30	5,53	9,14	3,61	9,14	5,53	9,14	5,53	9,14
1930-31	6,60	10,79	4,19	10,79	6,60	10,79	6,60	10,79
1931-32	7,96	12,80	4,93	12,80	7,96	12,80	7,96	12,80
1932-33	9,63	15,49	5,86	15,49	9,63	15,49	9,63	15,49
1937-38	28,6	44,0	15,4	44,0	28,6	44,0	28,6	44,0
1942-43	94,4	137,0	42,6	137,0	94,4	137,0	94,4	137,0
1947-48	428,0	500,6	72,6	500,6	428,0	500,6	428,0	500,6
1954-55	140,2	201,1	60,9	201,1	140,2	201,1	140,2	201,1
1959-60	624,8	789,9	115,1	789,9	624,8	789,9	624,8	789,9

քուն գաւելու գեպում (վորոշ տարածութիւնն թողնելով ինքնարժեքի իջեցման և գների իջեցման միջև) արագորոքյան արագ անման պրոցեսը ինքն և սեղծում այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են նրա ընդարձակման յեզ վերաբարձրութեան համար,—յեզ այն էլ այնպիսի չափերով, վոր արդունաբերութիւնը վոյ միայն բուռնից Քի-նանսավորում յի պահանջում, այլ նուրնիսկ կարող է բավական գգալի հավելլալ միջոցներ բաժին հանել ժողովրդական սնեստութեան մյուս նյութերին Քի-նանսավորելու համար:

Հարցը այսպէս դնելիս՝ ծանրութեան կենարոնը փոխադրվում է աշխատանքի արտադրողականութեան բարձրացման և, վորպէս նրա հետեանք, ինքնարժեքի իջեցման պրոբլէմի վրա:

Գ Լ Ո Ւ Խ V

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Աշխատանքի վերաբերմամբ յիս հետևյալ ցուցանիշներն են նըշում (հարաբերական թվերով, 1927-28 թ. տվյալները ընդունելով վորպէս 100):

ՏԱՐԻՆՆԵՐ	1 բանվորն ուղարանքի անումը	Բանվոր. որվա տեղութիւնը ժամերով	Նվաղագ. աշխատավարձի անումը	Ռեալ աշխատավարձի անումը	Բանվորների թվի անումը.
1927-28	100	8	100	100	100
1932-33	220	7	135	160	119,5
1937-38	440	6	180	250	385
1942-43	800	5	240	400-600	145

Իսկ այս ցուցանիշների գինասիրական վորոշակի ցույց է տրված 5 գիւղաբնում:

Մեկ բանվորին ընկնող արագրանքի համար յես հնաբավոր են համարում նախագծել 120% աճելացում առաջին հնգամյակի ընթացքում՝ յորժամյա բանվորական որվա անցնելու գեպում, կրկնապատկումը յերկրորդ հնգամյակի ընթացքում՝ վեցժամյա բանվորական որվա անցնելու գեպում յեզ 80% աճելացում յերկրորդ հնգամյակում՝ 5-ժամյա բանվորական որվա անցնելու գեպում:

Աշխատանքի արտադրողականութեան անման նկատմամբ շատ մեծ չափերով տարածված է նույն այն ռեակցիոն նախապաշարմունքը, վոր ղրութիւնն ունի արտադրութեան անման նկատմամբ. շատերը




4. Բանվորների թվի, աշխատանքի արտադրողականութեան և անվանական ու ռեալ աշխատավարձի անումը (1927-28 թ. մակարդակի համեմատութեամբ, վոր ընդունված է, վորպէս 100):

գտնում են, վոր աշխատանքի արտադրողականութիւնը (1 բանվորին ընկնող արտադրանքը) պետք է աստիճանաբար դանդաղի (հուշակավոր «մարող կորագիծը»), վորովհետև, իբր թե, հետզհետե սպառվում են աշխատանքի արտադրողականութեան այն պահեստի միջոցները, վորոնք կային վերականգնման շրջանում: Այս տեսակետը իր արտահայտութիւնը գտավ արդյունաբերութեան համարյա բոլոր հըն-  
 ԽՍՀՄ 15 տարուց հետո—3

գամյակներում, և կյանքի ազդեցութեան տակ այս տեսակետը նույն-  
պիսի փոփոխութիւններ կրեց, ինչպես և արտադրութեան աճման վերա-  
բերյալ համանման կարծիքը.—1927-28 թ. համար, որինակ ժՏԳՊ հըն-  
գամյակը աշխատանքի արտադրողականութեան աճումը նշել է 10,9<sup>0</sup>/<sub>0</sub>,  
իսկ հնգամյակի ստուգիչ թվերը, վորոնք կազմված են 1927 թ. հո-  
յեմբերին, —14,8<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ ոգոստոսյան (1928 թ.) վարիանտը—16,4<sup>0</sup>/<sub>0</sub>.  
ընդամենը մեկ—մեկուկես տարի առաջ ընթացիկ 1928-20 թ. համար  
այդ նույն հնգամյակները աշխատանքի արտադրողականութեան ա-  
ճումը նշում էին 8—8,5<sup>0</sup>/<sub>0</sub>, հնգամյակի ստուգիչ թվերի ոգոստոսյան  
վարիանտը, վոր կազմված է դրանից 4 ամիս առաջ, նշել է 14,4<sup>0</sup>/<sub>0</sub>,  
իսկ ընթացիկ տարվա վերջին դիտեկտիվները—17<sup>0</sup>/<sub>0</sub>-ից վոչ պակաս:  
Կյանքի այս դասերի ազդեցութեան տակ փոխվել են նաև աշխատանքի  
արտադրողականութեան հնարավոր աճման վերաբերյալ ընդհա-  
նուր պատկերացումները հնգամյակում (1927-28, 1931-32 թ. թ.). այս-  
պես՝ ժՏԳՊ առաջին հնգամյակը աշխատանքի արտադրողականու-  
թեան ամենաբարձր ավելացումը հնգամյակի ընթացքում հաշվում  
եր մեկ և կես անգամ, հնգամյակի ստուգիչ թվերի առաջին վարիան-  
տը (1927 թ. հոյեմբեր)—63<sup>0</sup>/<sub>0</sub>, ոգոստոսյան վարիանտը—87<sup>0</sup>/<sub>0</sub>, հըն-  
գամյակի վերջին ստուգիչ թվերը (1928 թ. դեկտեմբեր)—կրկնապա-  
տիկը, ընդվորում վերջիններն արդեն լիկվիդացիայի յեն լենթարկում  
«մարող կորագիծը» և աշխատանքի արտադրողականութեան հավասա-  
րաչափ աճումը նշում են տարեկան 14<sup>0</sup>/<sub>0</sub> աճման մակարդակից մի փո-  
քըր ցած: Մարող կորագիծի այս աստիճանական շտկումը ակնառու  
կերպով արտահայտված է 6 դիագրամի մեջ:

Հնգամյա պլանի վերջին ստուգիչ թվերում ևս անպայման սը-  
խալներ կան: Յեթե ընթացիկ տարում, նույնիսկ յերբ արդյունաբե-  
րութեան մի շարք ճյուղերում արգեն իդուր վարձված բանվորներ  
կան, մենք հնարավոր գտանք նպատակ գնել մեկ բանվորին ընկնող  
արտադրանքն ավելացնել տոնվազն 17<sup>0</sup>/<sub>0</sub>-ով, ապա հետագա տարինե-  
րում, յերբ անխնիական վերակառուցման արդյունքներն ավելի ուժգին  
կերպով յերևան կգան, յերբ ավելի մեծ թվով գործարաններ կսկսեն  
աշխատել, յերբ մենք ավելի ու ավելի մեծ չափով կկարողանանք  
կիրարկել արտադրութեան սերիայական և մասսայական մեթոդները,  
կոնվեյերի սիստեմը և այլն,—առաջին հնգամյակի հաջորդ տարիներում  
աշխատանքի արտադրողականութեան տարեկան աճումը 17<sup>0</sup>/<sub>0</sub> ից իջ-  
նել չի կարող: Այս ել, ահա, աշխատանքի արտադրողականութեանը  
կավելացնի առաջին 5 տարում մոտավորապես 120<sup>0</sup>/<sub>0</sub> և այս առաջա-  
դրութեանը պետք է համարել նվազագույն և անպայման իրագործելի:

Յերկրորդ հնգամյակի համար 1 բանվորին ընկնող արտադրան-  
քի ավելացումը չես նախադժում եմ կրկնակի չափով՝ արդյունաբե-  
րութեան մեջ վեցամյա բանվորական որվա անցնելու դեպքում: Յե-  
թե, ինչպես այդ ցույց տրվեց վերևում, արդյունաբերութեան գործող  
հիմնական կապիտալը 1 հնգամյակի ընթացքում ավելանալու չե մո-  
տավորապես 2,3 անգամ, ապա 10 տարվա ընթացքում (յերկու հըն-



5. 1 բանվորի արտադրանքի տարեկան աճումը ըստ ԽՍՀՄ ժՏԳՊ հնգամյակների  
(<sup>0</sup>/<sub>0</sub>-ով նախորդ տարվա համեմատութեամբ).—  
 Գամայակում) կավելանա ավելի քան 6,5 անգամ, և այժմ ունեցած մեր  
 սարքավորումից վոչինչ չի մնա, իսկ այժմ դրվող սարքավորման մի  
 մեծ մասն ել արխիվ կհանձնվի (ըստ իմ նշումների | հնգամյա-  
 կում հիմնական կապիտալի կազմից դուրս յեկող մասը կկազմի 4,4  
 միլիարդ ուրբի, իսկ II հնգամյակում—12 միլիարդ ուրբի):  
 Բոլորովին նոր սարքավորումը, վոր կհամապատասխանի արտա-

սահմանյան գիտութեան և տեխնիկայի վերջին նվաճումներին, անշուշտ, մեզ հնարավորութիւն կտա Ո հնդամշակի ընթացքում կրկնապատկելու 1 բանվորին ընկնող արտադրանքը՝ նաև բանվորական ուրբ 1 ժամով կրճատելու դեպքում:

Գուցե ավելի ճիշտ լիներ հետևյալ կարծիքը. արդյունաբերութեան մեջ ստեղծելով բոլորովին նոր կապիտալ, վորը 6,5 անգամ ավելի կլինի 1927-28 թ. հիմնական կապիտալից, և կիրարկելով առաջավոր յերկրների բոլոր այժմյան նվաճումները, ինչպես և այն նվաճումների մի մասը, վորոնք ձեռք կբերվեն այդ յերկրներում 10 տարվա ընթացքում, մենք կարող ենք մեր առաջ խնդիր դնել 10 տարվա ընթացքում հասնել առնվազն ամերիկյան բանվորի աշխատանքի միջին արտադրողականութեան այժմյան մակարդակին: Ամենևին անհնար չհամարելով այդ, յես գերադասում եմ սակայն, այս ուրվագծում վորոշ գոուշութեամբ մոտենալ այդ հարցին, ուստի և նախագծում եմ բանվորի որական աշխատանքի արտադրողականութեան ավելացում 4,4 անգամ, իսկ մի ժամվանը—5,8 անգամ (վեցժամյա բանվորական որ կիրարկելու դեպքում):

Վերջապես, յես նախագծում եմ, վոր 1 բանվորին ընկնող արտադրանքը ավելանալու յե յերրորդ հնգամյակում 80%օով, յեթե մենք անցնենք 5-ժամյա բանվորական րովա և արդյունաբերութեան հիմնական կապիտալը 15 տարվա ընթացքում ավելացնենք ավելի քան 20 անգամ: Այսպիսով, յերրորդ հնգամյակի վերջին ըստ այս ուրվագծի մենք կհասնենք մոտավորապես այն դրութեան, յերբ մեր 1 բանվորի արտադրածը հավասար կլինի ամերիկյան 1 բանվորին ընկնող արտադրանքին կամ մի փոքր ավելի, սակայն մեղանում բանվորական ուրբ զգալի չափով պակաս կլինի ամերիկյան ուրից:

Բանվորի մի ժամվա արտադրանքը 15 տարվա ընթացքում պետք է ավելանա մոտավորապես 12—13 անգամ, յեթե նկատի ունենանք, վոր վերջին 10—15 տարում 1 բանվորին ընկնող արտադրանքը Ամերիկայում համարյա կրկնապատկվել է, յեթե վոչ թե ավելի, վոր հաջորդ 15 տարվա մեջ Ամերիկան այս ասպարիզում, անշուշտ, ել ավելի առաջ կանցնի, իսկ մենք հսկայական չափերով հիմնական ծախքեր կատարելով և չափազանց արագ կերպով սարքավորումը փոխելով՝ կողտագործենք այդ ոուչն Ամերիկայի տեխնիկական նվաճումները, յեթե նկատի ունենանք, վոր մեր զարգացման արագ թափի շնորհիվ մենք 15 տարուց հետո կունենանք ամբողջապես գիտութեան ու տեխնիկայի վերջին խոսքի համեմատ կառուցված կապիտալ, մինչդեռ Ամերիկայում այդ ժամանակ, ինչպես և այժմ, կապիտալի ելական մասը համեմա-

տարար հնացած կլինի, ապա կարելի յե համենայն դեպս միանգամայն իրագործելի, յեթե վոչ չափազանց համեստ, համարել մեր առաջադրված խնդիրը—15 տարվա ընթացքում 1 բանվորի որական արտադրանքն ավելացնել մոտավորապես մինչև այժմյան ամերիկյան մակարդակը՝ սակայն 5-ժամյա բանվորական որ կիրարկելով, իսկ մեկ ժամվա արտադրանքը բարձրացնել մոտավորապես մինչև այն մակարդակը, վոր Հյուսիս Ամերիկան, հավանականաբար, կունենա 15 տարուց հետո:

Աշխատանքի արտադրողականութեան այսպիսի աճման հետ զուգընթաց յես անհրաժեշտ ու հնարավոր եմ գտնում մեր բանվորի կյանքի իրական մակարդակը բարձրացնել առնվազն 4—6 անգամ: Այս իրագործել կարելի յե այն ժամանակ, յերբ նոմինալ աշխատավարձը մենք ավելացնենք մոտավորապես 2,5 անգամ և համապատասխանորեն իջեցնենք այն արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների դները, վորոնք մտնում են բանվորի բյուջեի մեջ: Փաստորեն, ըստ այս ուրվագծի, բանվորի կյանքի մակարդակը չորս անգամից բավական ավելի կբարձրանա, քանի վոր ապրանքների գներն իջեցնելուց հետո ոուչն ուղղութեամբ կսկսեն ազդել կյանքի նաև ընդհանուր պայմանները, վորոնք մինչև այդ զգալի չափով փոխված կլինեն: Յեթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը (վորի վրա յես ավելի մանրամասնորեն կանգ կառնեմ հետագայում), վոր բանվորի ընտանիքի բոլոր աշխատունակ անդամները աշխատանք կունենան, վոր նրա բնակարանային պայմանները անսահման չափերով կբարելավվեն, վոր նրա կարիքների զգալի մասը կհանրայնանա (հանրային գործարան-խոհանոցներ, հասարակական լվացքատներ և այլն), ապա կարելի յե ընդունել, վոր յերրորդ հնգամյակի վերջում բանվորի կյանքի իրական մակարդակը կբարձրանա ավելի քան 6 անգամ, այսինքն՝ ամերիկյան բանվորի կյանքի այժմյան մակարդակից բավականաչափ բարձր կլինի: Արտադրութեան մոտավորապես 27,5 անգամ ավելացնելու հետևանքով և 1 բանվորին ընկնող արտադրանքը 8 անգամ ավելացնելուց հետո խոշոր արդյունաբերութեան մեջ զբաղված բանվորների թիվը պետք է ավելանա մոտավորապես 3,5 անգամ:

Աշխատանքի ցուցանիշների վրա յես կանգ առա միայն առաջին յերեք հնգամյակների նկատմամբ. չորրորդ հնգամյակում, զործող հիմնական զբաղակալները մինչև 500 միլարդ ավելանալու և ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերի համապատասխան աճման դեպքում, այնպիսի հսկայական վորակական փոփոխութեաններ պետք է տեղի ունենան, վոր այժմ նրանց չափի մասին խոսելը դժվար է:

Գ Լ Ո Ւ Խ VI

ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՉԵՑՈՒՄԸ

Յես անցնում եմ ընդհանուր պլանի ամենահիմնական հարցերից մեկին—ինքնարժեքի իջեցման հարցին:

Առևտրական ինքնարժեքի իջեցումը նշվում է հետևյալ չափերով (5 աղյուսակ).

Աղյուսակ 5.

ՏԱՐԻՆԵՐ	Հստ Ա. խմբի	Հստ Բ. խմբի	Ամբողջ արդյունաբեր.
1927-28	100	100	100
1928-29	92,5	93.0	93.0
1929-30	85,0	88.0	86.8
1930-31	77,5	83.5	80.7
1931-32	70.0	77.0	73.8
1932-33	63.5	70.0	66.9
Հնդ. 5 տար.	-36.5	-30.0	-33.1
1937-38	44.5	50.0	47.3
Հնդ. 10 տար.	-55.5	-5.00	-52.7
1942-43	33.3	37.5	35.2
Հնդ. 15 տար.	-66.7	-62.5	-64.8
1947-48	25.0	30.0	26.0
Հնդ. 20 տար.	-75.0	-70.0	-74.0

Առաջին հնգամյակի համար յես ինքնարժեքի իջեցումը նշում եմ 33%: Ինքնարժեքի իջեցման հնարավոր չափերի հարցը արդեն ունի իր պատմությունը: Ընդամենը սրանից մեկը—հեղուկես տարի առաջ ինքնարժեքի հնարավոր իջեցման ամենից ավելի ռեալ թիվը հնգամյակի համար վորոշվում էր 17-17,5%: Այս թիվը նշվում էր թե պետականի առաջին հնգամյակի մեջ և թե ժՏԳԽ հնգամյակում, վորը մշակված էր 1927 թ. կեսերին: ԺՏԳԽ կողմից 1927 թ. վերջին մշակված՝ հնգամյա պլանի ստուգելի թվերը ինքնարժեքի իջեցումը հնգամյակի համար նշել են 24,20%-ի չափով, և այս թիվը համարվել է չափա-

դանց լարված և դժվար իրագործելի, ինչպես կարծում էր ժՏԳԽ և Պետպլանի աշխատակիցների մեծամասնությունը: 1928 թ. այս հարցը սուր բեկման յենթարկվեց. ժՏԳԽ ՊՏՎ (ՈԾՅ) դիրեկտիվները, վորոնք կազմված են 1928 թ. ապրիլին, ինքնարժեքի իջեցումը նշել են մոտավորապես 27%: Ընդվորում Պետպլանը արդեն այդ թիվը անբավարար համարեց և անհրաժեշտ գտավ հարցը ավելի մանրամասնորեն վերամշակել և ինքնարժեքը ելավելի մեծ չափերով իջեցնելու միջոցներ գտնել: ԺՏԳԽ հնգամյակի վերջին ստուգելի թվերում ինքնարժեքի իջեցման թիվը հնգամյակի համար նշվում է 32%-ի չափով: Այդ բեկումը յերևան յեկավ նաև 1928-29 թ. ստուգելի թվերի վերաքննության ժանանակ, վորոնց մեջ ժՏԳԽ-ը սկզբում ինքնարժեքի իջեցումը ընթացիկ տարվա համար նշում էր 6%: Իսկ կառավարության կողմից ինքնարժեքի իջեցման թիվ սահմանվեց 7%: Վորն անպայման պետք է ի կատար ածվի: Այսպիսով, ընդհանուր առմամբ այժմ ինքնարժեքի իջեցման թիվը ընդունված է 33%: Վոր հնգամյակի համար յես առաջադրել եմ դեռևս ընթացիկ տարվա սկզբին\*), և վորոնք հետո ժխտվում էլին ոգոսոսին, յերբ քննության էլին առնվում ժՏԳԽ կողմից Պետպլան ներկայացված՝ հնգամյակի ստուգելի թվերը: Այս տոկոսը առաջին հնգամյակի համար յես վոր միայն չափազանցված չեմ համարում, այլև գտնում եմ, վոր նույնիսկ վորոշ չափով նվազեցված է:

Յերկրորդ հնգամյակի համար ևս ինքնարժեքի իջեցումը 5 տարվա ընթացքում նախագծում եմ մոտավորապես 30%: Վորով ինքնարժեքը 1927|28 թ. համեմատությամբ կիջնի ավելի քան կրկնակի չափով: Յերկրորդ հնգամյակի համար յես իջեցումը նշում եմ մոտավորապես 25%: Վորով ինքնարժեքը 1927|28 թ. մակարդակից կիջնի մեկ յերրորդից մի փոքր ավելի չափով: Վերջապես՝ չորրորդ հնգամյակի համար յես ինքնարժեքի իջեցումը նշում եմ մոտավորապես դարձյալ 25%: այնպես վոր 20 տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը պետք է այդ հաշվով իջնի 4 անգամից մի փոքր պակաս: Միաժամանակ յես գտնում եմ, վոր ծանր արդյունաբերություն մեջ ինքնարժեքի իջեցումը կարելի յե մի փոքր ավելի նշել, քան թեթև արդյունաբերություն մեջ, վորը հումքի ասկետից կախման մեջ է գտնվում գյուղատնտեսությունից:

Հնարավոր է, արդյոք, այսպիսի իջեցում: Յես այդ իջեցումը անպայման հնարավոր եմ համարում և հիմնավորում եմ կարևորագույն

\*) «Ինդուստրացման ուղիները» ժուռնալ, 1928 թ. № 6— «Արդյունաբերության ներքին կուտակման խնդիրները» հոդվածը:

տարրերի արտադրութեան նախահաշիվի մոտավոր վերլուծութեամբ: Իհարկէ, այդպիսի վերլուծութիւն կարելի չէ կատարել միայն ամենաընդհանուր և կոպիտ գծերով, և ստորև բերվող մեծութիւններից յուրաքանչյուրը ցույց կտա միայն թվերի մոտավոր կարգը և վոչ թե ճիշտ մեծութիւնը, վորը փոփոխութիւնների չի կարող յենթարկվել: Այդ վերլուծութիւնը յես տալիս եմ առանձին-առանձին ըստ ծանր և թեթև արդունաբերութեան, վորովհետև թե հումքի ծագումը և թե դերը նրանց մեջ տարբեր են: Վորպես յելակետ յես վերցնում եմ 1927/28 թ. արտադրութեան նախահաշիվը ըստ միութենական արդունաբերութեան, վորը կազմված է ավելի մեծ և մանրամասնորեն վերամշակված նյութերի հիման վրա՝ 1927/28 թ. արդունաբերական — ֆինանսական պլանը կազմելիս: Այս վերլուծութիւնը, յես կարծում եմ, բավական է կատարել առաջին յերեք հնգամյակների համար:

**Ա. ԻՆՔՆԱՐՓԵՔԻ ԻՋՏՅՈՒՄԸ ԺԱՆՐ ԱՐԿՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ըստ Ա. խմբի յես նշում եմ արտադրութեան կառուցվածքի (СТРУКТ.) հետևյալ փոփոխութիւնները (պլյուս ամորտիզացիան), ընդունելով վորպես 100 1927/28 թ. ծախքերի արժեքը (տես 6 աղյուս.):


**Աղյուս. 6**

**Արտադրութեան ծախքերի կառուցվածքը ծանր արդյունաբերութեան մեջ (Ա. խումբ)**

	1927/28 թ. ծախքերը ընդունելով 100				Յուրաք. տարվա ծախքերը ընդունելով 100		
					1927/28 թ.	1937/38 թ.	1942/43 թ.
	1927/28 թ.	1932/33 թ.	1937/38 թ.	1942/43 թ.	1927/28 թ.	1937/38 թ.	1942/43 թ.
Հումք, հիմն. նյութեր և կիսաֆաբրիկատներ	16,5	9,4	5,9	4,0	14,8	13,3	12,0
Ռժանդակ նյութեր	9,3	5,0	3,3	2,1	7,9	7,4	6,3
Վառելիք և եներգիւ	6,7	3,5	2,4	1,4	5,5	5,4	4,2
Աշխատավարձ	37,2	22,8	15,2	11,1	35,9	34,1	33,4
Սոցիալ. ծախքեր	8,3	4,9	3,2	2,3	7,7	7,2	6,9
Այլ ծախքեր	11,7	8,7	6,1	4,7	13,7	13,7	14,1
Ամորտիզացիա	10,3	9,2	8,4	7,7	14,5	18,9	23,1
<b>Ընդամենը</b>	<b>100</b>	<b>63,5</b>	<b>44,5</b>	<b>33,3</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>

Արտադրութեան ծախքերի մատնանշված փոփոխութիւնները ըստ կարեւորագույն տարրերի ակնառու կերպով ցույց են տրված 7 դիագրամում:

Ըստ «հումք, հիմնական նյութեր և կիսաֆաբրիկատներ»



7. Արտադրանքի արժեքի իջեցումը ծանր արդյունաբեր. մեջ ըստ հիմնական տարրերի (Ա. խումբ)  
հողվածի յես հնարավոր եմ գտնում առաջին հնգամյակի համար նախագծել հումքի տեսակարար ծախքերի իջեցում (կամ նրա լավագույն ոգտագործում) մոտավորապես 15%: Հումքի ոգտագործման լավացումը կամ նրա տեսակարար ծախքերի իջեցումը չափազանց մեծ չափերով հնարավոր է նավթարդունաբերութեան մեջ, մեքենաշինարա-

բության մեջ, փայտամշակման ասպարիզում, ազրեստալին արդյունաբերութեան մեջ, Ա. և Բ խմբի քիմիական ճյուղերում, մասնակիորեն՝ սև մետաղագործութեան մեջ, շինանյութերի արտադրութեան մեջ և այլն: Այս չափազանց մեծ ռեզուլտից չես առաջին հնգամյակի համար նշում եմ մոտավորապես 15<sup>0</sup>/<sub>0</sub>, յերկրորդ հնգամյակի համար—մոտավորապես 23<sup>0</sup>/<sub>0</sub> (1927/28 թ. մակարդակից) և յերրորդ հնգամյակի համար—մոտավորապես 30<sup>0</sup>/<sub>0</sub>: Թյուրիմացութունները առիթ չտալու համար անհրաժեշտ եմ համարում ընդգծել, վոր այս դեպքում չես հնարավոր եմ համարում, վոր գործնականում բավական մեծ չափերով վորոշ կարգի նյութեր կփոխարինվեն այլ նյութերով, վորովհետև յերբ մենք խոսում ենք ինքնարժեքի իջեցման մասին, ապա մենք ամենևին նկատի չունենք այսինչ և ճիշտ այսքան քանակութեամբ նյութերից շինված վորևե առարկայի արտադրութեան արժեքի իջեցումը, այլ նկատի ունենք հենց այնպիսի առարկաների արտադրությունը, վորոնք միևնույն նշանակութունն ունեն և կարող են նույն չափով բավարարել առաջադրված պահանջը կամ կարիքը: Այդպիսի դեպք մենք կունենանք, որինակ, յեթև ավելորդ ծանր հորինվածքի դազգասը, վորը կարող է միքանի ասանյակ տարիներ ծառայել, փոխարինենք նույնպիսի դազգասով, վորը սակայն ավելի թեթև կառուցվածք ունի և նույնքան լավ կարող է ծառայել, սակայն ավելի կարճ ժամանակ (արագ տեխնիկական պրոգրեսի դեպքում դազգասը բարոյապես մաշվել կարող է 5—8 տարում), վորի արտադրութեան համար ավելի քիչ քանակութեամբ նյութեր են պահանջվում: Հույսով ոգտագործման լավացման զուգընթաց չես նախագծում եմ նրա արտադրութեան արժեքի իջեցում մոտավորապես հետևյալ չափերով—A հնգամյակի համար—33<sup>0</sup>/<sub>0</sub>, B հնգամյակի համար—58,5<sup>0</sup>/<sub>0</sub> (1927/28 թ. մակարդակից) և B հնգամյակի համար—65<sup>0</sup>/<sub>0</sub>. այսինքն՝ մի փոքր պակաս, քան ինքնարժեքի իջեցումը ըստ Ա. խմբի: Վորովհետև Ա. խմբում համարյա ամբողջ հումքը արդյունաբերական ծագում ունի, ուստի նրա վերաբերմամբ չես նախագծում եմ մոտավորապես նույն արդյունքները, ինչպիսի ծանրը արդյունաբերութեան այլ արդյունաբերական շինվածքների արտադրութեան նկատմամբ (Ա. խումբ): Այս յերկու գործոնների ազդեցութեան հետևանքով հումքը, վոր 1927/28 թ. արտադրութեան նախահաշվում 16,5 կետը եր զբաղեցնում, առաջին հնգամյակի վերջում կզբաղեցնի ընդամենը 9,4 նույնպիսի կետ, յերկրորդ հնգամյակի վերջին—5,9 կետ և յերրորդ հնգամյակի վերջին—ընդամենը 4 կետ:

«Ոժանդակ նյութեր» հողվածի նկատմամբ չես հնարավոր եմ համարում նախագծել մի փոքր ավելի իջեցում՝ նրանց ծախսման տե-

սակարար նորմաների մտքով—առաջին հնգամյակում մոտավորապես 20<sup>0</sup>/<sub>0</sub>, յերկրորդ հնգամյակում 25<sup>0</sup>/<sub>0</sub> և յերրորդ հնգամյակում մոտավորապես 32<sup>0</sup>/<sub>0</sub> (1927/28 թ. մակարդակից). միաժամանակ մոտավորապես նույն չափով ել, ինչպես նաև ըստ առաջին հողվածի, իջնում են նրանց արտադրութեան արժեքը: Հետևանքն այն է լինում, վոր 1927/28 թ. արտադրութեան նախահաշվի մեջ 9,3 կետ զբաղեցնող ոժանդակ նյութերը յերրորդ հնգամյակի վերջին իրենց չափը իջեցնում են մինչև 2,1 կետ:

«Վառելիք և եներգիտ» հողվածի նկատմամբ իջեցումը, նրանց ծախսման տեսակարար նորմաների խմաստով, անշուշտ, ել ավելի կլինի: ԺՏԳԽ առաջին հնգամյակի համաձայն տեսակարար նորմաների իջեցումը նշվում եր մոտավորապես 17<sup>0</sup>/<sub>0</sub>, հնգամյակի ստուգելի թվերի համաձայն—մոտավորապես 24<sup>0</sup>/<sub>0</sub>: Հնգամյակի ստուգելի թվերի վերաբերյալ հետագա աշխատանքներն այստեղ յերևան հանեցին ել ավելի մեծ չափերով հնարավորութուններ, վորոնք հաշվի չեն առնված: Բացի դրանից, մեծ նշանակութուն կունենա շոգին լայն չափերով ելեկտրական եներգիտով փոխարինելը: Ուստի առաջին հնգամյակի համար չես վառելիք և եներգիտ տեսակարար ծախքերի իջեցումը ընդունում եմ 30<sup>0</sup>/<sub>0</sub>, յերկրորդ հնգամյակի համար—45<sup>0</sup>/<sub>0</sub> և յերրորդ հնգամյակի համար—55—60<sup>0</sup>/<sub>0</sub>: 1927/28 թ. յեկեկատային տարվա տեսակարար նորմաների համեմատութեամբ: Վառելիքի և եներգիտի արժեքի իջեցումը չես ընդունում եմ ավելի համեստ չափերով՝ առաջին հնգամյակի համար—25<sup>0</sup>/<sub>0</sub>, յերկրորդ հնգամյակի համար—35<sup>0</sup>/<sub>0</sub> և յերրորդ հնգամյակի համար—50<sup>0</sup>/<sub>0</sub>: Հետևանքն այն է լինելու, վոր «Վառելիք և եներգիտ» հողվածը, վոր 1927/28 թ. 9,7 կետ եր զբաղեցնում, 15 տարուց հետո պետք է իջնի մինչև 1,4 կետի:

«Աշխատավարձ» հողվածը, վոր 1927/28 թ. 37,2 կետ եր զբաղեցնում, փոխվում է անվանական աշխատավարձի համեմատութեամբ ուղիղ հարաբերականութեամբ և աշխատանքի արտադրողականութեան համեմատութեամբ՝ հակառակ հարաբերականութեամբ (աշխատավարձի և աշխատանքի արտադրողականութեան նախագծված փոփոխությունները բերված են վերևում, աշխատանքի ցուցանիշները հատվածում): Այս յերկու հակադիր գործոնների ազդեցութեան հետևանքով «Աշխատավարձ» հողվածը 32,2 կետից իջնում է մինչև 11,1 կետի:

«Մոցիլալական ծախքեր» հողվածը 8,3 կետից իջնում է մինչև 2,3 կետի, ընդհանուր առմամբ փոփոխվելով «Աշխատավարձ» հողվածի նկատմամբ ուղիղ հարաբերականութեամբ: Այստեղ չես մի փոքր ավելի

իջեցում նշեցի այն հողվածների հաշվին, վորոնք կարող են կրճատվել (կախյալ ծախքեր):

Մնացած ծախքերի նկատմամբ յես առաջին հնգամյակի համար նշում եմ 25% իջեցում, II հնգամյակի համար—50% և յերրորդի համար—60% (1927/28 թ. մակարդակից): Այս իջեցումը յես նվազագույն եմ համարում և գտնում եմ հնարավոր ել ավելի կրճատել, յեթե զգալի չափով փոփոխության չենթարկվեն այնպիսի հողվածներ, ինչպես հումքի վրա դրվող բաժը, կոճղատուրքը, ընդերքների տուրքը և այլն, վորոնք բոլորը այս խմբի մեջ են մտնում:

Վերջապես, ամորտիզացիայի բաժինը նվազում է գործող հոմնական կապիտալի եֆեկտիվության նախագծված աճման հետ համեմատական չափով:

Այս բոլոր հողվածների փոփոխության հետևանքով ստացվում է արտադրության ինքնարժեքի այն ընդհանուր իջեցումը ըստ հնգամյակների, վորը նախագծված է վերկում:

Յեթե արտադրության ծախքերը (պլյուս ամորտիզացիան) չուրքանչուր տարվա համար ընդունենք 100 և հետևենք առանձին տարրերի տեսակարար կշիռների փոփոխությանը, ապա մենք կտեսնենք, վոր հումքի, նյութերի և վառելիքի բաժինը շատ ուժեղ կիրպով իջնում է 32,5 %-ից մինչև 22,5%), աշխատավարձի բաժինը իր վերադիրներով քիչ չափով է իջնում (45,5% մինչև 40,3%), մյուս ծախքերի բաժինը համարյա նույն այն մակարդակի վրա յե մնում, վորին հասնում է առաջին հնգամյակի վերջին (13,7%—14,1%), իսկ ամորտիզացիայի բաժինը արեակարգ չափերով աճում է, այն է՝ 10,3%-ից հասնում է 23,1%-ի. այս արդյունք է կապիտալի որդական կազմի չափազանց մեծ աճման:

**Բ. ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԻՋԵՑՈՒՄԸ ԹԵՔԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Թեթև արդյունաբերության մեջ յես արտադրության ծախքերի կառուցվածքի (պլյուս ամորտիզացիան) և նրանց բաղադրիչ տարրերի տեսակարար կշիռների հետևյալ փոփոխություններն եմ նշում, դարձյալ վորպես 100 ընդունելով 1927/28 թ. ծախքերի արժեքը (տես 7 աղյուսակը):

Թեթև արդյունաբերության ասպարիզում արտադրության նախահաշվի փոփոխությունները վերլուծելիս պետք է գլխավորապես կանգ առնել «Հումք» հողվածի վրա, վորովհետև մնացած հողվածների համար պայմանականորեն կարելի յե ընդունել նույն գործակիցները (КОЭФФИЦ.), վորոնք ընդունված են Ա. խմբի համար:

Թեթև արդյունաբերության հումքի նկատմամբ ևս յես զգալի նվաճումներ եմ նշում հումքի ոգտագործության բարելավման ասպարիզում: Անշուշտ, մենք շատ մեծ պաշարներ ունենք բոլոր տեկտիլ արտադրություններում, ինչպես՝ վուլշի, բրդի, ջուլթի, մետաքսի արտադրություններում, գուցե միայն բամբակի բացառությամբ: Սակայն այստեղ ևս կանխիկ բամբակացման ուղղությամբ կատարված գերմանական վերջին փորձերը (կոտոնիզացիա) չափազանց լայն հեռանկարներ են բաց անում թանկ բամբակյա հումքը մասնակի ձևով համեմատաբար ավելի եժանկ կանեփով փոխանակելու իմաստով. մեծ հեռանկարներ են բացվում նաև այլ կեղելվածքներ \*) գործածելու տեսակետից (քենդիր և այլն):

աղյուսակ 7.

Արտադրության ծախքի կառուցվածքը քերիկ արդյունաբերության մեջ.

	1927—28 թ. ծախքերը ընդունելով 100.				Ցուրաք. տարվա ծախք. ընդուն. 100		
	1927—28 թ.	1932—33 թ.	1937—38 թ.	1942—43 թ.	1932—33 թ.	1937—38 թ.	1942—43 թ.
Հումք, հիմն. նյութեր և կիսաֆաբրիկատ . . . . .	40,0	32,4	23,5	18,0	46,2	47,0	48,0
Ոժանդակ նյութեր . . . . .	11,0	5,9	3,9	2,5	8,4	7,8	6,7
Վառալիք և եներգիտ . . . . .	4,5	2,3	1,6	0,9	3,3	3,2	2,4
Աշխատավարձ . . . . .	23,4	14,3	9,6	7,0	20,5	19,2	18,7
Սոցիալական ծախքեր . . . . .	7,0	4,1	2,7	1,9	5,9	5,4	5,0
Այլ ծախքեր . . . . .	8,1	6,0	4,2	3,2	8,6	8,4	8,5
Ամորտիզացիա . . . . .	6,0	5,0	4,5	4,0	7,1	9,0	10,7
Ընդամենը . . . . .	100	70,0	50,0	37,5	100	100	100

Հսկայական հեռանկարներ են բացվում արհեստական մանաթել պատրաստելու ասպարիզում: Ուստի կարելի յե ասել, վոր յեթե մենք ամբողջ տեկտիլ արդյունաբերության մեջ ղեռ կանգնած ել չենք

\*) Лубяное волокно.




չափազանց արմատական հեղաշրջումների առաջ, ապա համեմայն դեպքս մենք հսկայական հեռանկարներ ունենք հումքը լավագույն ձևով ոգտագործելու և նրա վորոշ տեսակները այլ տեսակներով փոխարինելու իմաստով: Մեծ հեռանկարներ ունենք մենք կարի, կաշվի, չուղագործական, շաքարի և այլ արդյունաբերությունների ասպարիզում:

Այդ նկատի ունենալով, չես առաջին հնգամյակի համար հումքի ոգտագործության լավացումը նախագծում են  $12-15\%$ , իսկ նրա գուղընթաց եփանացումը՝  $8,5-5\%$  (մասնակի եփանացում—իհաշիվ մթերունների արժեքի իջեցման, մասնակի եփանացում—ի հաշիվ հումք արտադրողին անմիջաբար վճարվող գների վորոշ իջեցման). յերկրորդ հնգամյակի համար—հումքի ոգտագործության լավացում— $20-26,5\%$ , միաժամանակ եփանացնելով հումքը ի հաշիվ նույն աղբյուրների  $26,4-20\%$ , և յերրորդ հնգամյակի համար—հումքի ոգտագործության լավացումը— $30\%$  (1927/28 թ. նորմաների համեմատությամբ) և նրա եփանացում— $35-36\%$ : Սրա հետևանքով «Հումք», հողվածք, վոր 1927/28 թ. արտադրության նախահաշվի մեջ 40 կետ եր զբաղեցնում, առաջին հնգամյակի վերջին իջնում ե մինչև 32,4 կետի, յերկրորդ հնգամյակի վերջին—մինչև 23,5 կետի և յերրորդ հնգամյակի վերջին—մինչև 18 կետի:

Այս փոփոխությունները պարզ ցույց են տրված 8 դիագրամում:

Սակայն չեթե ուշադրություն դարձնենք հումքի տեսակարար կշռի վրա (արտադրության ընդհանուր ծախքերը ամորտիզացիայի հետ միասին ընդունելով վորպես 100), ապա այդ կշռը  $40\%$ -ից կբարձրանա  $49\%$ -ի: Այստեղ դեր ե խաղում այն հանգամանքը, վոր իմ կարծիքով, գյուղատնտեսության մեջ տեխնիկական պրոգրեսը վորոշ չափով յետ ե մնում արդյունաբերության տեխնիկական պրոգրեսից այն պատճառով, վոր գյուղատնտեսության ասպարիզում պրոգրեսը անհամեմատ ավելի մեծ դժվարություններով ե հաղթահարում ընական տարերային պայմանները: մյուս հանգամանքը, վոր նույնպես նշանակություն ունի հումքի տեսակարար կշռի բարձրացման տեսակետից, այն ե, վոր գյուղատնտեսական հումքը մի փոքր պակաս չափով ե եփանանալու արդյունաբերական ծագում ունեցող հումքի համեմատությամբ: Սակայն, հնարավոր ե, վոր այս յենթադրությունը չարդարանա, և գյուղատնտեսության մեջ տեխնիկական մեծ կատարելագործությունների շնորհիվ գյուղատնտեսական հումքի եփանացումը արդյունաբերական հումքի եփանացումից պակաս չլինի. այն ժամանակ հնարավոր կլինի արդյունաբերական արտադրանքի ինք-

նարժեքը ել ավելի իջեցնել գյուղատնտեսական հումքի գները մեծ չափով իջեցնելու հաշիվին:



8. Արտադրության արժեքի մոտավոր իջեցումը ըստ թեթև արդյունաբերության տարրերի (Ա խումբ),

Աշխատավարձի ու նրա վերադիրների տեսակարար կշռը  $30,4\%$ -ից իջնում ե  $23,7\%$ -ի, մյուս ծախքերի տեսակարար կշռը մոտավորապես կայուն վիճակում մնում ե  $8,1-8,5\%$  սահմաններում, իսկ ամորտիզացիայի տեսակարար կշռը թեև բարձրանում ե ( $6\%$ -ից— $10,7\%$ ), սակայն ավելի քիչ քան ծանր արդյունաբերության մեջ: Այստեղ դարձյալ աղբում ե այն հանգամանքը, վոր թեթև արդյունաբերության որգանական կազմը համեմատաբար ցած ե, քան ծանր արդյունաբերության մեջ:



ցում և այլն): Այս նկատառումով հնգամյա պլանի վերջին ստուգիչ թվերը բավական շոշափելի չափերով մեզ մոտեցնում են շինարարության արժեքի 50% իջեցման՝ հնգամյակի ընթացքում: Մոտավորապես նույնպիսի և մինչև իսկ ավելի իջեցում յես վերցնում եմ նաև ընդհանուր պլանի առաջին հնգամյակի համար, — մասնավորապես յեղակետ ունենալով շինանյութերի ինքնարժեքի նախագծվող խոշոր իջեցումը:


Մարքավորման արժեքի իջեցումը ևս յես ավելի մեծ չափով եմ նախագծում, քան այդ առայժմ նշված և մետաղարդյունարերություն նախագծերում: Այս կապակցությունը յես հիմնական աշխատանքների արժեքի ընդհանուր իջեցումը առաջին հնգամյակի համար ընդունում եմ 40%, մոտավորապես հեռեյալ կերպով բաշխելով ըստ տարիների. —

Հիմնական աշխատանքների արժեքի իջեցում

Տարիներ	Տոկոս. հարաբ.
1927/28 . . . . .	100
1928/29 . . . . .	93
1929/30 . . . . .	85
1930/31 . . . . .	77
1931/32 . . . . .	69
1932/33 . . . . .	60
5 տարում . . . . .	40

Այս իջեցումը յես համարում եմ վոչ միայն չչափազանցված, այլ նաև գուցե և վորոշ չափով նվազեցված: Արդեն ընթացիկ տարում մենք հրահանգ ունենք շինարարական ինդեկսը 15% -ով իջեցնելու մասին (մի տարվա ընթացքում), իսկ այդ, հաշվի առնելով ինքնարժեքի նախագծված իջեցումը ըստ Ա. խմբի (մեքենաշինարարությունը ինքնարժեքի ավելի մեծ իջեցում և սալիս, քան Ա. խմբի միջինը), հրահանգը լիովին կատարելու դեպքում արդեն առաջին տարում կտա հիմնական աշխատանքների արժեքի ավելի քան 70% իջեցում:

Յերկրորդ հնգամյակի համար, յեխնելով նույն նկատառումները և հաշվի առնելով շինարարական գործի տեխնիկայի զգալի բարձրացումը, յես շինարարության արժեքի իջեցումը նախագծում եմ մինչև 40% 1927/28 թ. մակարդակի համեմատությամբ, յերրորդ հնգամյակի համար — մինչև 30% և չորրորդ հնգամյակի համար — մինչև 22% 1927/28 թ. մակարդակի համեմատությամբ: Հիմնական աշխատանքների



9. Հիմնակ. աշխատանքների չափը ըստ Ֆելդիկակ, ծավալի (միլ. ուղղ.) 1927—28 թ. գներով և նյութայն արժեքը (միլ. ուղղ.), նկատի առնելով շինարարության երկամսյակային ինդեքսը:

րի ավելացումը ըստ ծավալի և ըստ արժեքի ընդհանուր պլանի ժամանակաշրջանում, հիմնական աշխատանքների վերոհիշյալ եժանացման հաշվառմամբ, ցույց է տրված 9 դիագրամում: Չնայած այդպիսի իջեցման ամբողջ հսկայակաճուրջան, չպե՛ս է այ՛քարոզ անել այճ հանգամանքը, վոր նույնիսկ ըստ այս նախագծման մեճք 15 տարուց հետո միայն մի փոքր ավելի եժան կկառուցեճք, քան այճ քաճարվում եր մինչգրասերագմյան քոջանում:

Գ Լ Ո Ւ Խ VIII

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄ

Հաշվի առնելով ինքնարժեքի այն իջեցումը, վորի մասին խոսք չեղավ վերևում, յես գործարանային (ОТРУСН.) մեժածախսի գնների իջեցումը արդյունաբերական ապրանքների համար նախագծում եմ հետևյալ չափերով (1927/28 թ. գների մակարդակը ընդունելով վորմիս 100) —

Աղյուս. 9.

Տարիներ	Ա խումբ	Բ խումբ	Ամբողջ արդյունաբ.
1927/28	100	100	100
1928/29	95,7	100	98,2
1929/30	90,0	98	94,6
1930/31	82,5	95	89,6
1931/32	75,6	90	83,6
1932/33	70,0	85	73,2
<hr/>			
Ընդամենը 5 տար.	-30,0	-15	-21,8
1937/38	55,0	70	62,6
<hr/>			
Ընդամենը 10 տար.	-45,0	-30	-37,4
1942/43	45,0	60	51,8
<hr/>			
Ընդամենը 15 տար.	-55,0	-40	-48,2
1947/48	38,0	50	40,7
<hr/>			
Ընդամենը 20 տար.	-62,0	-50	-59,3

Գների այդպիսի իջեցում նախագծելով, յես հետևյալ նկատառումները եմ չեղնում: Ամենից առաջ յես գտնում եմ, վոր արտա-

դրության գործիքների ու միջոցների գծով (Ա խումբ) մենք շոհտգըրգոված ենք, վորպեսզի գներն ամենաարագ կերպով իջեցնենք, քանի վոր արտադրության գործիքներն ու միջոցները յերկրի ինդուստրացման արագ պրոցեսի և նրա արտադրողական ուժերի բարձրացման հիմնական պայմաններից մեկն են հանդիսանում: Ուստի գների առավելագույն իջեցումը պետք է տեղի ունենա արդյունաբերական ու տրանսպորտային սարքավորման, գյուղատնտեսական մեքենաների ու պարարտացման, շինանյութերի և վառելիքի ասպարիզում, վորոնք կենտրոնացված կարգով սպառվում են պիտական հատվածի կողմից, և այլն. այս արդյունաբերական շինվածքների գների իջեցումը պետք է կատարվի համարյա ինքնարժեքի իջեցման համեմատ: Գների իջեցման և ինքնարժեքի իջեցման միջև մի փոքր ավելի մեժ տարբերություն յես թույլ եմ տալիս Ա խմբի ապրանքների նկատմամբ, վորոնք ավելի յերկրորդական նշանակություն ունեն ժողովրդատնտեսական արտադրության համար, ինչպես որինակ, լաչն շուկայի համար հատկացված միքանի շինանյութեր, մետղի միքանի շինվածքներ, քիմիական արդյունաբերության միքանի արտադրանքներ և այլն, վորոնք նույնպես լաչն շուկայի համար են հատկացված: Համեմատաբար ել ավելի պակաս գների իջեցում յես նախագծում եմ Ա խմբի ճյուղերում արտադրվող ապրանքների համար, վորոնք սակայն, անձնական, անմիջական ըսպառման են հատկացվում. այս խմբի մեջ պետք է հաշվել այնպիսի ապրանքներ, ինչպես կահույքը, հեժանիմները, ինքնայնուր, թուջե և պղնձե ամանները, ճրագները և այլն: Գների իջեցման և ինքնարժեքի իջեցման միջև վորոշ տարբերություն պետք է, բնականաբար, թողնել նաև մեր շահավետ արտածման ապրանքների նկատմամբ (որինակ, նավթամթերքները և այլն). այս խմբի մեջ հետզհետե, ինքնարժեքի իջեցման համեմատ, կմտնեն ավելի ու ավելի մեժ թվով արտածվող մթերքներ:

Վերոհիշյալ նկատառումներով յես գների և ինքնարժեքի իջեցման հետևյալ հարաբերությունն եմ նշում ըստ Ա խմբի (1927/28 թ. մակարդակից, վորը ընդունված է, վորպես 100). —

Տարիներ	Ինքնարժեքի իջեցում	գների իջեցում	տարբերություն
1932/33	36,5	30	6,5
1937/38	55,5	45	10,5
1942/43	66,7	55	11,7
1947/48	75,0	62	13,0

նաբերության մեջ, վորը առավելագուստ անձնական սպառման առարկաներ և արտադրում (Բ խումբ), մեծ տարբերություն և զրկում ինքնարժեքի իջեցման և գների իջեցման միջև, նույնը կատարվում է նաև Ա խմբի համանման ապրանքների նկատմամբ: Բ խումբը, ինչպես այդ կատարվում է այժմ, պետք է մեծ չափերով կուտակման ֆունկցիաներ կատարի, ուստի և այստեղ գների իջեցումը պետք է ավելի դանդաղ թափով տեղի ունենա: Մյուս կողմից, անձնական սպառման ապրանքների արտադրության համեմատական անբավարար քանակը դեռ յերկար ժամանակ տեղի չէ ունենալու:

Իհարկե, չի կարելի ասել, թե ապրանքային սովը կամ արդյունաբերական ապրանքների դեֆիցիտը մեր դարգացման որեւիցէ և սակայն պետք է նկատի ունենալ, վոր այնպիսի արժեքների և գյուղական բնակչության զբաղման յեկամուտների բավական արագ աճման պայմաններում (իսկ այդ չափազանց մեծ չափերով է տեղի ունենալու) և այն ժամանակ, յերբ անհրաժեշտ է առավելագուց չափով արագացնել ծանր արդյունաբերության անումը, քանի վոր այն՝ ամբողջ ժողովրդական ցեղանության զարգացման ամենանեղ սեղն է, — մենք դեռ յերկար ժամանակ չենք կարողանալու թեթև արդյունաբերությունն այնպիսի չափերով ծավալել, վոր նա կարողանա լիովին ծածկել բնակչության վճարունակ պահանջը:

Այդ նկատառումներով էլ չես նախադժուհեմ թեթև արդյունաբերության ապրանքների գների իջեցման և նրանց ինքնարժեքի իջեցման միջև հետևյալ հարաբերությունը (1927/28 թ. մակարդակի համեմատությամբ, վոր ընդունված է վորպես 100). —

Տարիներ	ինքնարժ. իջեցում	գների իջեցում	տարբերություն
1932/33	30	15	15
1937/38	50	30	20
1942/43	62,5	40	22,5
1947/48	70	50	20


Յեկ գտնում եմ, վոր առաջին հնգամյակում թեթև արդյունաբերության մեջ գները իջեցնել կարելի չէ միայն 15% ափելի մեծ իջեցումը չես քիչ իրական եմ համարում վերը բերված նկատառումներով, նաև այն պատճառով, վոր հնգամյակի առաջին տարում (ընթացիկ տարին) մենք Բ խմբի գները չենք իջեցնում, իսկ հաջորդ տարում, չեթե իջեցումը հնարավոր էլ լինի, ապա խիստ աննշան չափերով:

Թեթև արդյունաբերության ապրանքների գները չես հնարավոր եմ համարում 15 տարվա համար իջեցնել 40%-ով, այսինքն՝ իմ

փոքր ավելի մինչպատերազմյան մակարդակից, արդյունաբերական ինդեքսը ընդհանուր առմամբ 48,40%, այսինքն՝ մինչպատերազմյան մակարդակից մի փոքր իջեցնելու դեպքում: Գտնումս ժամանակա-

ՏԱՐԻՆԵՐ	Ինքնարժեքի իջեցում	Գների իջեցում	Տարբեր
1932/33	-33,1	-21,8	-11,3
1937/38	-52,7	-37,4	-15,3
1942/43	-64,8	-48,2	-16,6
1947/48	-74,0	-59,3	-14,7

28-29 30-31 32-33 34-35 36-37 38-39 40-41 42-43 44-45 46-47 47-48 49-50 51-52 53-54 55-56 57-58



Թվերի վերին շարքը — գների իջեցում  
Թվերի ներքին շարքը — ինքնարժեքի իջեցում

10. Ինքնարժեքի իջեցում և գների իջեցում ամբողջ արդյունաբերության մեջ և նրանց տարբերությունը (սյունյակների սև մասը) ըստ տարիների:

շրջանի համար Բ խմբի ապրանքների գների իջեցումը յես նշում եմ կրկնակի չափով, արդյունաբերական ապրանքների գները մոտ 60% իջեցնելու դեպքում (մինչև այդ ժամանակ ապրանքների արժեքի զրամական չափումը, ըստ յերևույթին, կփոխարինվի աշխատանքային միավորներով, և այդ շրջանի համար մատնանշված գործակիցները կարելի չե ընդունել միայն պատմականորեն):

Ընդհանուր առմամբ, ինքնարժեքի իջեցման և գների իջեցման տարբերությունը (1927/28 թ. մակարդակի համեմատությամբ) լուրաքանչյուր հնգա յյակի վերջում կարտառայովի այն չափերով, վորոնք ցույց եր տրված 10-րդ դիագրամում (յեր. 55):

Ինքնարժեքի իջեցման և գների իջեցման հակադրությունը ամբողջ արդյունաբերության վերաբերմամբ և նրանց տարբերությունը ըստ տարիների արտահայտված են նույն 10-րդ դիագրամում:

Վորովհետև գները այդպիսի իջեցումը մեղ հնարավորություն և տալիս 15 տարուց հետո 4—6 անգամ բարձրացնելու բանվորի կյանքի մակարդակը, իսկ գյուղական աշխատավորի կյանքի մակարդակը կարող ենք ել ավելի բարձրացնել, քանի վոր 15 տարուց հետո կյանքի իրական մակարդակը գյուղում և քաղաքում պետք ե մոտավորապես հավասար լինեն,— ուստի յես միանգամայն ընդունելի չեմ համարում գների իջեցման նախագծված թափը:

Գ Լ Ո Ւ Խ IX

ԱՌԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՃՈՒՍԸ

Առևտրական (коммерч.) ինքնարժեքի և գործարանային գների իջեցումը նախագծելով, մենք կարող ենք սահմանել արդյունաբերության կուտակումների չափերը ընդհանուր պլանի շրջանում: Պարզեցման համար յես վերցնում եմ վորպես կուտակում՝ ապրանքների ամբողջ մասսայի գործարանային գների և նրանց արտադրության արժեքի ամբողջ տարբերությունը (հաշված, իհարկե, նաև ամորտիզացիան), հաշվի չառնելով այն հանգամանքը, վոր ապրանքների մի մասը մնում ե տարվա ընթացքում չիրացված: Այս տեսակետը անպայման ճիշտ ե, քանի վոր ապրանքների կուտակումը առևտրական

ցանցում պետք ե վոչ թե արտադրությունն պրոցեսի հետ կապել, այլ շրջանառություն: Իսկ այժմ, յերբ մենք ունենք սինդիկատային և կոոպերատիվ առևտրի զարգացած ցանց, արտադրական կազմակերպությունների մոտ մնացող ապրանքների քանակությունն արդեն նվազագույն չափերի չե հասցված, իսկ հետագայում ապրանքների այդ մասը կարող ե միայն ել ավելի պակասեցվել:

Ինքնարժեքի և գործարանային գների այդպիսի իջեցում նախագծելու դեպքում ամբողջ ապրանքային մասսայի արժեքը, ըստ համապատասխան տարիների գործարանային գների, և կուտակումների չափերը հետևյալ պատկերը կունենա (միլիոն ռուբլիներով):

Աղյուսակ 10.

ՏԱՐԻՆԵՐ	Ա խումբ		Բ խումբ		Ընդամենը	
	Ապրանք, արտադրվ. համար. տար. գործարան. գները.	Կուտակում	Ապր. արտ. համար. տար. գները. գործարան. գները.	Կուտակում	Ապր. արտադր. համար. տար. գները.	Կուտակում
1927 28	3,535	235	4,889	565	8,424	800
1928 29	4,190	450	5,770	990	9,960	1,440
1929 30	4,820	600	6,670	1,370	11,490	1,970
1930 31	5,440	720	7,750	1,710	13,190	2,430
1931 32	6,170	880	8,890	2,100	15,060	3,040
1932 33	7,160	1,170	10,240	2,770	17,400	3,940
Ընդամ. I հնգամ.	27,780	3,820	39,320	9,000	67,100	12,820
1937 38	18,550	4,680	24,500	8,990	43,050	13,670
Ընդամ. II հնգամ.	64,250	14,470	87,280	29,450	151,530	43,920
1942 43	56,350	17,890	64,060	28,520	120,410	46,410
Ընդամ. III հնգամ.	189,610	56,570	227,290	96,350	416,900	152,920
1947 48	249,670	97,940	95,600	44,910	345,270	142,850
Ընդամ. IV հնգամ.	741,120	275,530	438,650	204,180	1,179,770	479,710
Ընդամ. 15 տար.	281,640	74,860	353,890	134,800	635,530	209,660
Ընդամ. 20 տար.	1,022,760	350,390	792,540	338,980	1,815,300	689,370

Աղյուսակի այդ թվաշարքերը ցույց են տալիս, վոր ինքնարժեքի արագ իջեցման և գների մի փոքր դանդաղ, սակայն բացարձակապես շատ մեծ և միանգամայն բավարար իջեցման դեպքում արդա-

զրուծյան արագ աճումը ստեղծում է արտակարգ չափերով հսկայական կուտակումներ, վորոնք առաջին հնգամյակում կազմելով 12,8 միլիարդ ռուբլի, յերկրորդ հնգամյակում հասնում են 44 միլյարդի, յերրորդ հնգամյակում—153 միլյարդի և 480 միլյարդի—չորրորդ հնգամյակում: Ընդհանուր առմամբ 15 տարվա մեջ այդ պայմաններում կուտակումների գումարը կազմում է մոտ 200 միլյարդ ռուբլի, իսկ 20 տարվա ընթացքում—մոտ 700 միլյարդ ռուբլի:

Այսպես կոչված կուտակման նորման, յեթե կուտակման գումարը համեմատենք ապրանքային մասսայի իրացման արժեքի և ապրանքային մասսայի ինքնարժեքի հետ, կկազմի հետևյալ սովորը.

Աղյուս. 11

Կուտակման նորման սովորով

	Իրացման արժեքից			Առևտրակ. արժեքից		
	Ս. Ըստ խմբի	Բ. Ըստ խմբի	Նմրող. արդ.	Ս. Ըստ խմբի	Բ. Ըստ խմբի	Նմրող. արդ.
1927—28 թ.	6,6	11,6	9,5	7,1	13,1	10,5
I հնգամյակ.	13,7	22,9	19,1	15,9	29,7	23,6
II »	22,6	33,8	29,0	29,1	51,0	40,6
III »	29,8	42,4	36,7	42,5	73,5	58,0
IV »	37,2	46,5	40,7	59,2	87,2	68,5

Կարելի՞ չե, արդյոք, ասել, թե այժմյան համեմատությունները կուտակման (վաստակի) սովորի այդ արտասովոր ավելացումը նորմալ է:

Պետք է ասել, վոր հարցի հենց այդ դրվածքը սխալ է: Կուտակման չափի և նրա ու արտադրված մասսայի արժեքի հարաբերությունը հարցը պետք է դնել վոչ թե «նորմալություն» մակարդակի, այլ բացառապես նպատակահարմարության մակարդակի վրա: Յեվ այդ տեսակետից կուտակման սովորի այդ բարձրացումը պետք է համարել միանգամայն ճիշտ, նպատակահարմար և մեր յերկիրը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու խնդիրներին միանգամայն համապատասխան: Չե՞վոր այս կուտակումը Միուծյան աշխատավոր բնակչության հավելյալ արտադրանքի մի մասն է, վոր ծառայում է Միուծյան ամբողջ ժողովրդական տնտեսության ընդլայնված սոցիալիստական վերարտադրության գործին: Այս կուտակման մեջ բացի բանվորի ստեղծած հավելյալ արժեքից, իհարկե, մտնում է նաև

Միուծյան մնացած աշխատավոր բնակչության հավելյալ արտադրանքի բավական զգալի բաժինը, վորովհետե մենք արհեստականորեն բավական շոշափելի տարբերություն ենք սահմանում ինքնարժեքի իջեցման և գների իջեցման միջև: Յեթե մենք, բավական զգալի չափով բարձրացնելով աշխատավոր բնակչության կյանքի մակարդակը, միաժամանակ կարող ենք հավելյալ արտադրանքի շատ մեծ մասը հատկացնել հետագա սոցիալիստական ընդլայնված վերարտադրության, ապա այդ ել հենց այն հսկայական պլյուսն է, վոր սոցիալիստական յերկիրն ունի կապիտալիստական յերկրների հանդեպ:

Արդյունաբերության և պետական տնտեսության մյուս հատվածներում սահմանելով կուտակման այնպիսի չափեր, վորոնք առավելապես նպատակահարմար են պրոլետարիատի շահերի և սոցիալիստական շինարարության գործի համար,—պետք է վորոշ, առավելագույն չափերով բարենպաստ հարաբերություն սահմանել աշխատավորության կյանքի մակարդակի հնարավորության չափ ամենաարագ բարձրացման տեմպի և արդյունաբերության ու ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման հնարավորության չափ ամենաարագ տեմպի միջև, վորովհետե մեկի և մյուսի միջև սերտ փոխհարաբերություն գոյություն ունի.—յերկրի արտադրողական ուժերի արագ աճումը կարող է ապահովել միայն աշխատավորության կյանքի մակարդակի բավականաչափ արագ բարձրացման պայմաններում. մյուս կողմից, յեթե կամենայինք տվյալ մոմենտում կամ ժամանակի տվյալ հատվածում աշխատավորության կյանքի մակարդակը վորոշ ոպտիմալ սահմանից ավելի բարձրացնել, իսկ այդ կարելի չե անել միայն ի հաշիվ կուտակումների նվազեցման, այսինքն՝ իհաշիվ հավելյալ աշխատանքի այն մասի, վորը հատկացվում է հետագա ընդլայնված վերարտադրության,—ապա մենք դրանով կդանդաղեցնենք յերկրի արտադրողական ուժերի աճման ընթացքը, իսկ դրանով նվազեցրած կլինենք աշխատավորության կյանքի մակարդակը հետագայում բավականաչափ արագ բարձրացնելու հնարավորությունը, այսինքն՝ մեր առաջադրած արդյունքների հակառակը կստանայինք:

Վերոհիշյալ նկատառումներով ել չես վերցրել եմ, իմ կարծիքով, այն առավել կամ պակաս ոպտիմալ հարաբերությունը, վոր պետք է լինի աշխատավորության կյանքի մակարդակի բարձրացման տեմպի և կուտակումների աճման տեմպի միջև: Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր գների քաղաքականությունը անցման շրջանում ամենահար և ամենաճկուն միջոցն է, վորով բնակչության հավելյալ արտադրանքը մոբիլիզացիայի պետք է յենթարկվի հետագա ընդլայն-





Տարիներ	Արդյունաբեր. անհրաժ. ներք.		Արդյունաբերության կուտակ.		Արդյունաբերության կուտակ.		Արդյունաբերության կուտակ.		Արդյունաբերության կուտակ.		Արդյունաբերության կուտակ.	
	Հարկավոր	Հարկազուտ	Հարկավոր	Հարկազուտ	Հարկավոր	Հարկազուտ	Հարկավոր	Հարկազուտ	Հարկավոր	Հարկազուտ	Հարկավոր	Հարկազուտ
1928/29	1,62	0,30	1,92	0,53	1,44	1,97	0,05	0,61	0,05	0,61	0,05	0,61
1929/30	1,86	0,34	2,20	0,56	1,97	2,53	0,33	0,43	0,33	0,43	0,33	0,43
1930/31	2,05	0,46	2,51	0,67	2,43	3,10	0,59	0,40	0,59	0,40	0,59	0,40
1931/32	2,29	0,49	2,78	0,71	3,04	3,75	0,97	0,41	0,97	0,41	0,97	0,41
1932/33	2,54	0,54	3,08	0,74	3,94	4,68	1,60	0,29	1,60	0,29	1,60	0,29
Հնդամենը I հնդամյակ	10,36	2,13	12,49	3,21	12,82	16,03	3,54	2,14	3,54	2,14	3,54	2,14
1933/34	2,81	0,61	3,42	0,90	5,09	5,99	2,57	0,09	2,57	0,09	2,57	0,09
1934/35	3,18	0,77	3,95	1,00	7,55	8,55	4,60	0,68	4,60	0,68	4,60	0,68
1935/36	3,74	0,98	4,72	1,15	8,11	9,26	4,54	0,43	4,54	0,43	4,54	0,43
1936/37	4,47	1,18	5,65	1,34	10,59	11,93	6,28	0,76	6,28	0,76	6,28	0,76
1937/38	5,43	1,46	6,89	1,59	13,67	15,26	8,37	1,16	8,37	1,16	8,37	1,16
Հնդամենը II հնդամյակ	19,63	5,00	24,63	5,98	45,01	50,99	26,36	2,94	26,36	2,94	26,36	2,94
1938/39	6,68	1,75	8,43	2,1	17,8	19,9	11,4	0,90	11,4	0,90	11,4	0,90
1939/40	7,48	2,09	9,57	2,5	22,8	25,3	15,7	3,37	15,7	3,37	15,7	3,37
1940/41	9,20	2,45	11,65	3,0	28,9	31,9	20,3	4,51	20,3	4,51	20,3	4,51
1941/42	11,02	2,87	13,89	3,5	37,0	40,5	26,6	6,45	26,6	6,45	26,6	6,45
1942/43	12,75	3,98	16,13	4,1	47,4	51,5	35,4	9,47	35,4	9,47	35,4	9,47
Հնդամենը III հնդամյակ	47,13	12,54	59,67	15,2	153,9	169,1	109,4	25,70	109,4	25,70	109,4	25,70
1943/44	15,2	4,1	19,3	5,4	58,4	63,8	44,5	13,2	44,5	13,2	44,5	13,2
1944/45	20,1	5,2	25,3	6,8	73,2	80,0	54,7	18,4	54,7	18,4	54,7	18,4
1945/46	24,9	6,6	31,5	8,7	91,4	100,1	68,6	27,9	68,6	27,9	68,6	27,9
1946/47	31,5	8,2	39,7	10,7	113,8	124,5	84,8	40,8	84,8	40,8	84,8	40,8
1947/48	37,6	9,3	46,9	13,2	142,9	156,1	109,2	64,1	109,2	64,1	109,2	64,1
Հնդամենը IV հնդամյակ	129,3	33,4	162,7	44,8	479,7	524,5	361,8	164,4	361,8	164,4	361,8	164,4
Հնդամենը 15 տարում	77,1	19,7	96,8	24,4	211,7	261,1	139,3	26,5	139,3	26,5	139,3	26,5
Հնդամենը 20 տարում	206,4	53,1	259,5	69,2	691,4	760,5	501,1	190,9	501,1	190,9	501,1	190,9

Վերջապես, հիմնական աշխատանքները, վորոնք վերստի բերված են 1927/28 թ. անփոփոխ գներով, հետագայում հաշված են համապատասխան տարիների գներով: Մատնանշված մոտավոր, կոպիտ-ուղենիչ հաշիվներով հետևյալ հարաբերությունն է ստացվում արդյունաբերության (հաշված և ամորտիզացիան) կուտակումների և հիմնական ու շրջանառու կապիտալների անհրաժեշտ ներդրումների (գլխավորապես նյութական շրջանառու միջոցներն ավելացնելու նպատակով) միջև—միլիոն ռուբլիներով (տես 12 աղյուսակը):

Վերոհիշյալ հաշիվներից յեղրակացություններ հանելուց առաջ լինա բերում են նաև յուրաքանչյուր հնգամյակի վերաբերյալ հանրագումար տվյալներ ըստ Ա և Բ խմբերի, վորպեսզի ցույց տամ, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում կուտակումներն ու անհրաժեշտ ներդրումները ծանր և թեթև արդյունաբերության մեջ (միլիարդ ռուբլիներով), (տես 13 աղյուսակը):

Աղյուս. 13


	Արդյունաբ. անհր. ներդրումներ			Արդյուն. կուտակ.			Կուտակումների և անհրաժեշտ ներդրումների ասպեկտ.
	Հիմն. կապիտ.	Նյութ. շրջ. կապիտ.	Ընդամենը	Ամորտիզացիա	Վաստ. (կուտ.)	Ընդամենը	
<b>Ծանր արդյունաբ.</b>	<i>(Միլիարդ ռուբ. համապ. տարիների գնահատությամբ)</i>						
I հնգամյակ . . . . .	6,80	1,11	7,91	1,95	3,82	5,77	- 2,14
II . . . . .	13,12	2,78	15,90	3,82	15,02	18,84	+ 2,94
III . . . . .	33,42	7,69	41,11	10,24	56,57	66,81	+ 25,70
IV . . . . .	115,7	31,1	146,8	35,7	275,5	311,2	+ 164,4
15 տարում . . . . .	53,3	11,6	64,9	16,0	75,4	91,4	+ 26,5
20 տարում . . . . .	169,0	42,7	211,7	51,7	350,9	402,6	+ 190,9
<b>Թեթև արդյուն.</b>							
I հնգամյակ . . . . .	3,56	1,02	4,58	1,26	9,00	10,26	+ 5,68
II . . . . .	6,52	2,21	8,73	2,16	29,99	32,15	+ 23,42
III . . . . .	13,71	4,85	18,56	4,91	97,35	102,26	+ 83,70
IV . . . . .	13,57	2,29	15,86	9,0	204,1	213,1	+ 197,2
15 տարում . . . . .	23,7	8,1	31,8	8,3	136,3	144,6	+ 112,8
20 տարում . . . . .	37,3	10,4	47,7	17,3	40,4	357,7	+ 310,0

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս աղյուսակի վերաբերմամբ պետք է միջանկ զիտու-  
ղություններ անել հնարավոր թյուրիմացությունների տեղիք շտալու համար՝ հատ-  
կապես Ննգամյակի նկատմամբ: Առաջին հնգամյակում, իմ հաշվով, արդյունաբերու-  
թյան ավելցուկները արդյունաբերության անհրաժեշտ ներդրումներից զերազանցում  
են 3,5 միլիարդ ուրբով, մինչդեռ հնգամյակի առաջին ստուգիչ թվերի համաձայն  
(Վ. Ի. Մեծխուկի հանձնաժողովի 1927 թ. վերջում կատարած աշխատանքները) ար-  
դյունաբերության և պետության փոխադարձ հաշիվների մնացորդը հոգուտ արդյու-  
նաբերության՝ հնգամյակում տալիս եր մոտավորապես 700 միլ. ուրբով, իսկ հնգամ-  
յակի վերջին ստուգիչ թվերի համաձայն զուտ մնացորդը հոգուտ արդյունաբերության  
հավասար է մոտավորապես 2,4 միլիարդ ուրբով: Այս տարբերությունները բացա-  
տրվում են, նախ, նրանով, Վոր իմ հաշիվներով բավական մեծ կուտակումներ են նա-  
խագծվում (մոտ 2 միլիարդ), շնորհիվ շահաբեր թեթև արդյունաբերության համե-  
մատաբար ավելի մեծ աճման, շնորհիվ նրա ապրանքների ինքնարժեքի ավելի մեծ-  
իջեցման և գների մի փոքր ավելի պակաս իջեցման հնգամյակի վերջին տարիներ-  
ում: Երկրորդ՝ նրանով, Վոր հնգամյակի վերջին ստուգիչ թվերի համեմատությամբ  
ավելի պակաս ներդրումներ են կատարվելու արդյունաբերության մեջ: Երրորդ՝ բա-  
ցատրվում է այն հանգամանքով, Վոր շրջանառու կապիտալի ներդրումների մեջ յես  
զլխավորապես հաշվի յես առնում նյութական շրջանառու միջոցների ներդրումները,  
իսկ հնգամյակի ստուգիչ թվերը, ինչպես նաև տարեկան պլանները, արդյունաբերու-  
թյան ներդրումների մեջ հաշվում են այն հավելյալ ներդրումները, Վորոնք կատար-  
վում են տարեկան շինվածքների մնացորդներն ավելացնելու համար և այլն, Վորոնք,  
բայտ էյության, շրջանառության (առևտրի) պրոցեսսին են վերաբերում և Վոչ թե  
ապրանքների արտադրության պրոցեսսին: Առևտրական շրջանառությունը պետք է  
ֆինասավորվի Վոչ թե արդյունաբերության հաշվին, այլ առևտրի հաշվին. արդյու-  
նաբերության ավելորդ կուտակումները, Վորոնք հաշված են վերոհիշյալ աղյուսա-  
կում, պետք է հատկացվեն ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ֆինասա-  
որմանը, Վորոնք թվում նաև՝ պետական առևտրական ցանցի շրջանառու միջոցներն  
ավելացնելուն:

Մանր և թեթև արդյունաբերության կուտակումների և անհրաժեշտ ներդրում-  
ների այդ նույն հարաբերությունները ակնառու ցույց են տրված 11 դիագրամում:

Իսկ ի՞նչ են ցույց տալիս այդ հաշիվներն ու թվերը. նրանք միա-  
գամայն պարզ կերպով ցույց են տալիս, Վոր ինքնարժեքի և գների  
իջեցման վերոհիշյալ պայմաններում արդյունաբերության նախագծ-  
ված աճման իրագործումը լիովին հնարավոր է, ցույց են տալիս, Վոր  
արգյունաբերությունը, ծածկելով իր բոլոր պահանջները հիմնա-  
կան կապիտալը բնագործակելու յեվ նյութական ԵՐՋանառու միջոց-  
ներն ավելացնելու ասպարիզում, 15 Եարում կարող է ժողովրդա-  
կան ԵՏԵՏԱՈՒՔյան մյուս նյութերի Զիճանսավորման համար հաս-  
կացնել մոսավորապես 140 միլիարդ ուրբի, իսկ 20 Եարվա ԵՃ-  
քացում — մոսավորապես 500 սիլիարդ ուրբի:

Այս դեպքում ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերից ֆի-  
նանսավորման համար անհրաժեշտ միջոցները կուտակման փունկցիա-



11. Անհրաժեշտ ներդրումները (չիճան կապիտալ, և նյութ, շրջան, միջոցներ մեջ) և սեփական կուտակումները (փաստակ և անորոշագ) ծածկ ու թեթև արդյուն, և ավելորդ արդյունաբեր. մեջ (միլիարդ ուրբ. համար. տար. գնանառ.):

ները, բնականաբար, գլխավորապես ընկնում են թեթև արդյունաբերության վրա: Չնայած ծանր արդյունաբերության մեջ կատարվող կուտակումները հսկայական աճմանը, նա այդ կուտակումներով առավելագույն ծածկում է հիմնական և շրջանառու կապիտալի ուժեղացման հետ կապված ծախքերը, միայն չերրորդ հնգամյակի վերջին տարիներին սկսած էյական չափերով ավելորդ կուտակումներ անելով: Ծանր արդյունաբերության անհրաժեշտ ներդրումների գումարը 15 տարվա ընթացքում կազմում է նրա կուտակումների 71 տոկ., իսկ 20 տարվա ընթացքում — 52,5 տոկոսը:

Թեթև արդյունաբերության մեջ անհրաժեշտ ներդրումների գումարը 1-ին հնգամյակում կազմում է նրա կուտակումների 44,5 տոկ., 2-րդ հնգամյակում — 27,2 տոկ., 3-րդ հնգամյակում — 18,1 տոկ., 4-րդ հնգամյակում — ընդամենը 7,5 տոկ.: 15 տարվա ընթացքում թեթև արդյունաբերության ներդրումների գումարը կազմում է նրա կուտակումների 22 տոկ., իսկ 20 տարվա ընթացքում — ընդամենը 13,3 տոկ.: Այսպիսով իր կուտակումների մոտավորապես 78 տոկ. թեթև արդյունաբերության կարող է սալ ժողովրդական ցեղանորսյան մյուս ճյուղերին, իսկ ծանր արդյունաբերությունը կարող է ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին սալ իր կուտակումների 29 տոկ. 15 տարվա ընթացքում. չորրորդ հնգամյակում թեթև արդյունաբերությունը կսա իր կուտակումների արդեն 92,5 տոկ., իսկ ծանր արդյունաբերությունը — մոտավորապես 53 տոկոսը:

Այսպիսով, ստեղծելով աստիճանաբար ընդարձակվող նյութական արժեքներ — ապրանքներ, արդյունաբերությունը զրա հետ միասին ստեղծում է նաև հսկայական ֆինանսական միջոցներ, վորոնք բավական են վոչ միայն ընդլայնված վերարտադրության համար հենց իր իսկ արդյունաբերության մեջ, այլև կարող են ընդլայնված վերարտադրության արագ պրոցեսի բազա ստեղծել ժողովրդական տնտեսության նաև այլ ճյուղերում:

Մրանով կարելի է և պետք է պատասխանել այն չափազանց տարածված պատճառարանությանը, թե մենք ազգատ ենք, և վորպես թե, արդյունաբերության զարգացման արագացրած տեմպը պահանջում է բոլոր միջոցները հատկացնել արդյունաբերությանը և մեզ զրկում է ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համար ներդրումներ անելու հնարավորությունից, վորով և կասեցվում է նրանց զարգացումը: Ընդհակառակը, արդյունաբերության անմահ արագ ցեղանորսյան մյուս ճյուղերը յեվ այդ միեվնույն ժամանակ ինքն ար-

դյունաբերությունը սեղծում է զրա համար անհրաժեշտ միջոցները — թե ֆինանսական միջոցների ձևով և թե արտադրության անհրաժեշտ գործիքների ու միջոցների ձևով (ռելսեր, վագոններ, շոգեկառքեր, տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, պարարտանյութեր, շինանյութեր և այլն):

Իսկ ինչպիսիք հեռանկարներ են բացվում մեր առաջ ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում, չերը մենք այսպիսի հսկայական հավելյալ կուտակումների հնարավորություններ ունենք արդյունաբերության մեջ:

### Գ Լ Ո Ւ Խ XI

### Տ Ր Ա Ն Ս Պ Ո Ր Տ

Տրանսպորտը ամենանեղ տեղերից մեկն է մեր ժողովրդական տնտեսության զարգացման մեջ: Յերկաթուղային ցանցի խտության տեսակետից մենք, թերևս, ամենավերջին տեղն ենք բռնում այսպես կոչված՝ քաղաքակիրթ յերկրների շարքում: Մեզանում 100 ք. կլմ. տարածության ընկնում է 0,36 կլմ. յերկաթուղային ճանապարհ, կանադայում — 0,7, Ռումինիայում — 2,5, ճափոնիայում — 3,2, Հ. Ա. Մ. Նահանգներում — 4,3, Լեհաստանում — 5, Գերմանիայում — 12,3, Մեծ Բրիտանիայում — 16,3, Բելգիայում — 36,5 և այլն: Քիչ հետ չենք մնում մենք նաև ջրային տրանսպորտի ասպարիզում. մեր ջրային տրանսպորտը շատ թույլ չափերով է ոգտագործվում, հատկապես տեղական տրանսպորտը՝ թե ճանապարհների վիճակի և թե փոխադրության միջոցների տեսակետից: Բավական է մատնանշել, վոր յեթե մեր համեմատաբար թույլ զարգացած յերկաթուղային տրանսպորտի հիմնական կապիտալը գնահատվում է 10.270 միլ. ռուբլի, յերկրագնդի  $\frac{1}{6}$  մասին սպասարկող մեր տեղական տրանսպորտի հիմնական կապիտալը գնահատվում է ընդամենը 780 միլ. ռուբլի, ինչպես նաև ջրային տրանսպորտինը — 755 միլ. ռուբլի:

ա) Յերկաթուղային տրանսպորտ.

Արդյունաբերական արտադրանքը 15 տարում 27,5 տոկոսով ավելանալու և գյուղատնտեսության արտադրանքը բավական զգալի չափերով ավելանալու հետևանքով պետք է ավելանա նաև յերկաթուղիների բեռնաշրջանառությունը առնվազն 5—6 անգամ նույնիսկ այն

դեպքում, չեթե շատ մեծ չափերով ծավալվի ավտոտրանսպորտը, և բավական զգալի չափերով ավելանա ջրային ուղիներով կատարվող փոխադրութունը: Ընթացիկ տարում 1 կլմ. ճանապարհին ընկնող բեռնաշրջանառութիւնը մեզանում կազմում է մոտավորապես 1.545 հազ. տոն-կիլոմետր այն ժամանակ, յերբ Միացյալ Նահանգներում կազմում է 1.900 կլմ., իսկ Գերմանիայում—2.200 կլմ.: Թեև 1 կլմ. ճանապարհի բեռնավածութիւնը մի շարք շրջաններում, անշուտ, ավելանալու չէ, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր մենք պետք է շատ մեծ թվով չերկաթուղիներ կառուցենք նոր շրջաններում՝ առաջին անգամ, ուստի և այդ դեպքը մի ամբողջ շարք տարիների ընթացքում չեն կարող լիակատար բեռնավածութիւն ունենալ: Ուստի կարելի չէ ընդունել, վոր հազիվ թե 1 կլմ. բեռնավածութիւնը մեզանում շատ մեծ չափերով ավելանա, այն ժամանակ պետք է ընդունել վոր բեռնաշրջանառութիւնը 5—6 անգամ ավելացնելու դեպքում չերկաթուղային դժի չերկարութիւնը ևս պետք է մոտավորապես նույն չափով ավելանա, այսինքն մեք պե՛տք է առնվազն հեզապատկե՛ք մեր չերկաթուղային ցանցը կամ 15 անգամ կառուցե՛ք վոյ պակաս քան 300 հազար կիլոմետր չերկաթուղագիծ:

Չափազանց դժվար է, թեկուզ ավելի կամ պակաս մոտավոր հաշվով, վորոշել, թե 20 տարուց հետո մենք քանի անգամ պետք է ավելացնենք մեր չերկաթուղային ցանցը, յերբ խոշոր արդյունաբերութիւն արտադրութիւնը կավելանա 100 անգամ. պայմանականորեն յես ընդունում եմ, վոր չերկաթուղային գիծը մինչև 1947/48 թ. պետք է ավելանա մոտավորապես 12 անգամ, այսինքն 4-րդ հնգամյակում մենք պետք է 500 հազար կիլոմետրից ավելի չերկաթուղագիծ կառուցենք:

Այս թվերը ապշեցնում են իրենց բացառիկ հսկայականութեամբ և կարող են անհավանական թվալ: Սակայն, պետք է նկատի ունենալ, վոր նույնիսկ այնպիսի բոլորովին չսեսցված օբեարաուրայան գեպում մեք գարնայալ 20 անգամ հետո չերկաթուղային ցանցի խոսքայան սեսակեթից չեք հասնի այն գրուքայան, վոր գոյութիւն ունի այժմ Միացյալ Նահանգներում, գեո յիսուելով վերջ հիւսած մշուս չերկրների մասին, վորտեղ չերկաթուղացանցն ավելի թիւ է:

Յերկաթուղային այդպիսի ծրագիր իրագործելու համար անհրաժեշտ է 1 հնգամյակում կառուցել մոտավորապես 20 հազ. կլմ. ուղի, 2-րդ հնգամյակում—մոտավորապես 80 հազ. կլմ., 3-րդ հնգամյակում—մոտավորապես 200 հազ. կլմ. և 4-րդ հնգամյակում—մոտավորապես 525 հազ. կլմ.:

Միայն չերկաթուղային տրանսպորտի մշակված ընդհանուր պլանը կարող է նշել նոր չերկաթուղային ճանապարհների կառուցում ըստ տարիների: Ուստի այստեղ յես կսահմանափակվեմ միայն այն մասնաշուկում, վոր մոտավոր հաշիվների համաձայն այդ պլանն իրագործելու համար մենք պետք 1932/33 թ. կառուցենք մոտավորապես 8 հազ. կլմ. նոր չերկաթուղային, 1937/38 թ.—մոտավորապես 22 հազ. կլմ. (այսինքն՝ մի տարում պետք է այնքան կառուցենք, վորքան կառուցվել է ամենալավ մինչպատերազմյան տասնամյակում,—մոտ 20 հազ. կլմ.), 1942/43 թ.—50 հազ. կլմ., իսկ 20 անուց հետո 1947/48 թ.—մոտավորապես 140 հազ. կլմ.:

Կարելի չէ, արդյոք, իրագործել չերկաթուղային շինարարութիւն մի այնպիսի վիթխարի ծրագիր, և ինչի համար է անհրաժեշտ այդ: Անկասկած է, վոր նոր արտադրութիւնը ըստ Ա խմբի (առավելապես արտադրութիւն գործիքներ ու՝ միջոցներ արտադրող ձյուղեր) 15 տարում 35 անգամ, իսկ 20 տարում 184 անգամ ավելացնելու դեպքում—չերկաթուղային շինարարութիւն այդպիսի մասշտաբը կարող է ապահովվել թե ուստի, կամընդհանրով, շինանյութերով և այլն և թե շարժական կազմով: Բանվորական ուժի պակասութիւն մենք հազիվ թե զգանք. ընդհակառակը, տարածված կարծիքն ասում է, վոր մեզ լուրջ կերպով սպառնում են ավելորդ բանվորական ձեռքերը. յես համամիտ չեմ այս կարծիքին, և ինչպես հետո կերևա, գտնում եմ, վոր գերաբնակչութիւն և գործազրկութիւն մասին գրեթե չերրորդ հնգամյակում խոսք լինել չի կարող:

Սակայն չի կարելի չենթադրել, թե չերկաթուղային շինարարութիւն այդպիսի պլանի իրագործմանը կարող է արգելք լինել բանվորական ձեռքերի պակասութիւնը, քանի վոր այստեղ մեզ ոգնութիւն կարող է հասնել աշխատանքների խիստ մեքենայացումը, վորը հնարավորութիւն կտա կարիքը բավարարել առկա բանվորական ձեռքերով:

Ամենամեծ խոչընդոտը, առաջին հայացքից, կարող է ծառայել միջոցների պակասութիւնը, սակայն, մոտավոր հաշիվը ցույց է տալիս, վոր նոր չերկաթուղային շինարարութիւն այդ ամբողջ հսկայական ծրագիրը, հաշված նաև գոյութիւն ունեցող ցանցի վերանորոգումը, պետք է 15 անգամ ընթացքում պահանջի օտարձական կազմի հետ միասին 20—25 միլիարդ ուստի (նկատի ունենալով շինարարութիւն արժեքի իջեցումը): Այդ գումարները կազմում են փոքր մասը այն կուտակումների, վոր տալու չէ միմիայն արդյունաբերութիւնը ժողովրդական տնտեսութիւն մշուս

ճշուղերի համար, և—ինչպես այդ ցույց են տալիս համապատասխան հաշիվները—ազատ կերպով զետեղվում են ժողովրդատնտեսական կուտակումների և պետական ծախքերի մոտավոր հաշվեկշռի մեջ: Մասնավորապես, 60 հազ. կլմ. չերկաթուղու կառուցումը 1942/43 թ., հաշված այժմյան գներով (1000 կլմ—130—150 միլ. ուրբլի), պետք է նստի 8—9 միլիարդ ուրբլի, իսկ շինարարության ինքնարժեքն իջնելու դեպքում—3 միլիարդ ուրբլուց վոչ ավելի: մինչդեռ չերկաթուղային տրանսպորտի հիմնական աշխատանքների համար 1942/43 թ. կարող է հասկացվել նույն հաշիվների համաձայն մոտավորապես 4 միլիարդ ուրբլի: Այսպիսով, Ֆինանսական տեսակետից նոր չերկաթուղային շինարարության մատնանշված ծրագիրը վորևե արգելքի կարող հանդիպել:

Այդ աշխատանքները կատարելուց հետո չերկաթուղային տրանսպորտի հիմնական կապիտալը, վոր 1927/28 թ. հաշվվում է մոտավորապես 10,3 միլ. ուրբլի, 1942/43 թ. կհասնի 50 միլիարդ ուրբլու, իսկ 1947/48 թ.—120 միլիարդ ուրբլու (1927/28 թ. անփոփոխ գներով):

բ) Ջրային տրանսպորտ.

Հսկայական աշխատանքներ պետք է կատարել նաև ջրային տրանսպորտի ասպարիզում, վորը պետք է ընդգրկի ջրանցքներով կապված գետային ու ծովային հաղորդակցութունների միասնական ցանցը: 15 տարվա մեջ մենք պետք է մեր գետային ուղիները այնպիսի դրության հասցնենք, վոր նրանք կարողանան նույնպիսի տարողունակութուն ունենալ, ինչպես, որինակ, Գերմանիայում կամ Միացյալ Նահանգներում: Մենք պետք է ջրանցքներով այնպես կապենք միմյանց հետ համեմատաբար խոշոր ջրային չերակները, վորպեսզի ջրային ճանապարհներով կարելի լինի նույնքան չերկար տարածություններ անցնել՝ առանց ընդհատումների, ինչպես և չերկաթուղիներով: Մենք պետք է ստեղծենք թե գետային և թե ծովային բավական մեծ առևտրական տորմիդ:

Կանգ չառնելով մանրամասնորեն ջրային տրանսպորտի ասպարիզում կատարվելիք աշխատանքների չափերի վրա, մատնանշենք, վոր ջրային փոխադրութունները մենք պետք է բավական ավելի մեծ չափով ավելացնենք, քան չերկաթուղայինը, քանի վոր ջրային տրանսպորտը այժմ մենք բացառապես աննշան, աղքատիկ չափերով ենք ոգտագործում. ուստի և ջրային տրանսպորտի հիմնական կապիտալի ավելացումը չես այսպես են նախագծում. 1927—28 թ. 755 միլ.

ուրբլին 1942—43 թ. դառնալու յե 10 միլիարդ ուրբլի (1927—28 թ. անփոփոխ գներով), այսինքն ավելանալու յե մոտավորապես 13,5 անգամ, իսկ 20 տարվա ընթացքում—30 միլիարդ ուրբլի, այսինքն՝ ավելանալու յե մոտավորապես 40 անգամ:

Այս թվերը, իհարկե, չափազանց մոտավոր բնույթ ունեն և ցույց են տալիս, թե ինչ կարգի մեծությունների մասին է խոսքը:

գ) Տեղական տրանսպորտ.

Այնուհետև, բացառիկ հսկայական աշխատանքներ կատարելով՝ պետք է կառուցել հաղորդակցության տեղական ճանապարհները, վորոնք հարմար լինեն ավտոմոբիլային տրանսպորտի համար և խիտ ցանցով միացնեն Միության բոլոր բնակելի վայրերը: Ճանապարհների բացակայությունը, թերևս, մեր դարգացման հետագա արագ տեմպի գլխավոր խոչընդոտներից մեկն է, ուստի մեր տնտեսության այս ճյուղի վրա պետք է բացառիկ ուշադրութուն դարձնել: Փոխադրության տեղական միջոցների շարքում ավտոմոբիլը պետք է դերակշռող տեղ գրավի:

Վերոհիշյալ նկատառումով, տեղական տրանսպորտի հիմնական կապիտալը, վոր չերկրագնդի մեկ վեցերորդ մասին հավասար մեր տերրիտորիայի համեմատությամբ ծիծաղելիության չափ փոքր է (780 միլ. ուրբ.), 15 տարուց հետո մոտավորապես 50 միլիարդ ուրբլու պետք է հասնի (1927—28 թ. անփոփոխ գներով), այսինքն՝ իր մեծությամբ չերկաթուղային տրանսպորտից պակաս չպետք է լինի: 20 տարուց հետո ջրային տրանսպորտի հիմնական դրամագուլթը պետք է ավելի մեծ չափով ավելանա, քան չերկաթուղային տրանսպորտը, չես այդ կապիտալի ավելացումը նշում էմ մինչև 150 միլիարդ ուրբլի, այսինքն՝ համարյա 200 անգամ ավելի 1927—28 թ. կապիտալից և 30 միլիարդով ավելի չերկաթուղային տրանսպորտի այն ժամանակվա 120 միլիարդ կապիտալից:

դ) Ավիատրանսպորտ.

Վերջապես, անկասկած, չափազանց մեծ չափեր է ընդունելու ավիատրանսպորտը, վորը սպասարկելու չե վոչ միայն մարդատար շարժման, այլ նաև ապրանքատար շարժման կարիքներին: Ավիատրանսպորտի հարցը—նոր հարց է, և հենց այժմ արտասահմանում համառ աշխատանք է կատարվում ավիացիան մարդատար և ապրանքատար հաղորդակցության մասսայական միջոց դարձնելու ուղղությամբ: Այս ասպարիզում արդեն մեծ հաջողություններ են ձեռք բերված:

Յերբ և ինչ չափով կլուծվի այս հարցը—գիշար և ասել. հավանականաբար, այս ասպարեզում մենք մեծ անակնկալներ ենք ունենալու:

Անկասկած, մենք այս գործին մեծ միջոցներ պետք և հատկացնենք, ուստի և յես նշում եմ, վոր 15 տարուց հետո ավիտորանսպորտի հիմնական կապիտալը մոտավորապես կազմելու յե 5 միլիարդ ուրբլի (1927-28 թ. դնբրով), իսկ 20 տարուց հետո—15 միլիարդ ուրբլի: Այս յենթադրությունները, անշուշտ, համեստ են: Յեթե ավիացիայի ասպարեզում մարդկային միտքը իրոք մեծ քայլեր կանի, և ավիտորանսպորտը շատ դեպքերում կկարողանա ավտոմոբիլի ու յերկաթուղու հետ մրցել, ապա, ըստ յերևութին, տրանսպորտի մյուս ճյուղերին հատկացված ներդրումների մի մասը հարկ կլինի ավիտորանսպորտի վրա գործադրել:

Այսպիսով, միջանի տասնյակ միլիարդ ուրբլի կպահանջի մեղներից տրանսպորտի բոլոր տեսակների այն հսկայական նոր շինարարությունը, վորը ապահովելու յե արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և այլ ճյուղերի անխափան զարգացումը ընդհանուր պլանի տևողության ժամանակամիջոցում և վորը կշանքի յե կոչելու խՍՀՄ լայնածավալ տերրիտորիայի նորանոր շրջաններ:

Վերևում ցույց տրվեց, վոր արդյունաբերությունը կկարողանա 15 տարվա ընթացքում ստեղծել և հավաքել հավելյալ կուտակումների այնպիսի մասսա, վորով հնարավոր կլինի ազատ կերպով ծածկել սըրանսպորտի զանազան տեսակների համար անհրաժեշտ ներդրումները: Սակայն հարցը այսպես դնելը սխալ կլինի. տրանսպորտը կարող է և պետք է ինքը կուտակումներ ստեղծի:

Ներկաչում տրանսպորտի զուտ յեկամուտը (վաստակը) համեմատաբար մեծ չե, սակայն կարող է շատ մեծ չափերով ավելացվել. այս հնարավոր կլինի միայն տրանսպորտի տեխնիկական վերակառուցման միջոցով, վորի ուղիները պարզորոշ կերպով նշվում են, և վորը հնարավորություն կտա մեծ չափերով իջեցնելու արտադրության ծախքերը տրանսպորտում. այս ուղղությամբ աղդեցություն կունենա նաև շինարարության և շարժական կազմի եժանացումը, շուգեկառքերի ու վագոնների պարկի ավելի ինտենսիվ և լավագույն ոդտագործումը և վառելիքի եժանացումն ու տնտեսումը, և այլն և այլն: Այդ ինկատի ունենալով, յես տրանսպորտի բոլոր տեսակներում կատարվելիք կուտակումների գումարը 1942-43 թ. նշում եմ 21,8 միլիարդ ուրբլի (վորի թվում և՛ մոտավորապես 3 միլիարդ ամորտիզացիոն հատկացումները), իսկ 1947-48 թ.—մինչև 77 միլիարդ ուրբլի (վորից 8,5 միլիարդ ուրբլի—ամորտիզացիա):

Արդյունաբերության հսկայական, տարեցտարի աճող (ինչպես վերևում ցույց տրվեց) կուտակումների ավելցուկները և հենց տրանսպորտի տարեցտարի աճող կուտակումները ապահովում են տրանսպորտային շինարարության այնպիսի ընդարձակ ծրագրի իրագործումը, վորը խիստ տարբերվում է մինչև այժմ նախագծված բոլոր պլաններին:

### Գ Լ ՈՒ Խ XII

#### ԳՅՈՒՂԱՍՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Միության ժողովրդական տնտեսության ամենահետամնաց ճյուղն է: Տնտեսության տեխնիկայի ու սխտեմի տեսակետից այս ճյուղը այժմ արդեն բոլորովին չի համապատասխանում ժողովրդական տնտեսության զարգացման մակարդակին և առանձնապես հետամնաց է արդյունաբերության համեմատությամբ, թեև վերջինը ևս տեխնիկական զարգացման չափազանց ցած մակարդակի վրա յե գտնվում: Միանգամայն բնական է, վոր արդյունաբերության ու տրանսպորտի զարգացման նախագծվող չափազանց արագ տեմպի համեմատությամբ գյուղատնտեսության արդի տեխնիկական մակարդակը աղաղակող չափերով հետ է մնում: Ուստի, գյուղատնտեսության մեջ արագ տեխնիկական հեղափոխություն առաջ բերելը արդյունաբերության և տրանսպորտի զարգացման նախագծված տեմպի իրականացնելու ամենահիմնական պայմաններից մեկն է:

Կարճ ենք, արդյոք, հուսալ, վոր համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մենք կկարողանանք այդ տեխնիկական հեղափոխությունն առաջ բերել մեր փոշխացած, 25 միլ. ծխերի բաժանված հետամնաց ու պրիմիտիվ գյուղատնտեսության մեջ:

Այս հարցը արդեն մենք շարժել ենք այն «ոռոտիստական» հոռետեսության մեռյալ կետից, վորը միայն անցյալի ու ներկայի վերլուծության վրա յե հիմնվում և չի կարողանում մերձավոր ապագայի հեռանկարը տեսնել: Այս հարցի շուրջը տեղի ունեցած դիսկուսիայի ժամանակ նախկին հնգամյակների համեստ յենթադրությունների հակառակ՝ առաջադրվեցին ու հիմնավորվեցին բերքատվությունը մոտավորապես թաս տարվա ընթացքում կրկնապատկելու խնդիրները: Այս վերջին յենթադրություններն, անշուշտ, ունեն բոլոր անհրաժեշտ հիմնավորումները:

Առանց գյուղատնտեսութեան հիմնական վերադիման, բացառապէս միայն այնպիսի բազմազան պարզ ձեռնարկութեան ընդարձակ կերպարկութեամբ, վորոնք բարելավելու յեն հողագործական տնտեսութեան վարելու տարրական յեղանակները,— ՍՄՍՄ կենտրոնացումի դեկրետը նշում է հացաբուսերի բերքատուութեան բարձրացում 5 տարվա մեջ 30-35%: Գյուղատնտեսութեան մեջ նոր տեխնիկայի տարրեր կիրարկելով՝ մենք հնարավորութեան կստանանք եւ ավելի մեծ արդշունքների հասնելու այս ասպարիզում:

Արդեն բավականաչափ պարզ կերպով նշվում են տեխնիկական հեղափոխութեան այն տարրերը, վորոնք կարող են հիմնովին փոփոխել մեր գյուղատնտեսութեան դեմքը և նրան հետամնաց ու արխայիկ տնտեսութեանից դարձնել մեր ժողովրդական տնտեսութեան առաջավոր ու հեղափոխական ճյուղը: Չիու և յեղի ուժի փոխարեն արակտոր, գյուղատնտեսութեան լայն մեքենայացում ու ելեկտրոֆիկացիա, վորոնք հնարավորութեան կտան վոչ միայն ձեռքի աշխատանքը մեքենայով փոխարինելու, այլ նաև սովորական, բավական պրիմիտիվ գյուղատնտեսական մեքենաներից ու գործիքներից անցնելու նորագույն բարդ կոմբինացված մեքենաների, վորոնք միաժամանակ մի շարք ոպերացիաներ են կատարում (հնձում են, կալում, տեսակավորում և այլն), այլև գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականութեանը շտեմնված չափերով բարձրացնում են, վերջապես, գյուղատնտեսութեան լայն քիմիացում, այսինքն՝ մեր ուժասպառ հողի բարելավում զանազան տեսակի հանքային պարարտանյութերի կիրարկութեամբ, և, վերջապես, մեր հողի մշակութեանը կազմակերպված բնույթ տալը՝ կանոնավոր տնտեսութեան ձեռք կիրառելով, վորի շնորհիվ, համաձայն պրոֆ. Վիլյամսի կարծիքի, բացառիկ չափերով բարձրանալու յե բերքատուութեանը և լավացվելու յե հացահատիկների և այլ կուլտուրաների վորակը,— ահա այս ամենը բավականաչափ բազա յե ստեղծում գյուղատնտեսութեան մեջ լիակատար տեխնիկական հեղափոխութեան առաջ բերելու և այն տնտեսական ու կազմակերպչական լիակատար վերակառուցման յենթարկելու համար:

Սրան միանում են ուրիշ յերկու հանգամանք, վորոնք, հավանականաբար, գյուղատնտեսութեան առաջ բացառիկ նպաստավոր հեռանկարներ են բաց անում. առաջինը — Գերմանիայում հնարած այն մեքենան է, վորը հացահատիկների ցանքը կատարում է անկելով. ըստ եզրութեան՝ այդ չինական բանջարանոցային սխտեմի մեքենայացումն է, վորի շնորհիվ բերքատուութեանը միջանի անգամ ավելանում է, և միջանի տասնյակ անգամ եւ պակասում է սերմանյութը: Այս յեղանա-

կը դժբախտաբար, դեռ գործնականում բավականաչափ փորձված ու ըստուգված չէ, սակայն դարնանային պարարտացման և հողի արակտորային մշակման հետ զուգընթացաբար կիրարկվելով՝ կարող է միջանի անգամ ավելացնել աշխատանքի արտադրողականութեանը գյուղատնտեսութեան մեջ, հսկայական չափերով բարձրացնել վերջինի ընդհանուր յեկամուտը և չափազանց եժանացնել հացի և այլ հատիկային բուսերի արտադրութեանը:

Մյուս գլուխը՝ ելեկտրական գործիքների միջոցով արհեստական անձրևացումն է, այսինքն՝ անձրև առաջ բերելը. այս գլուխը լրականանալու դեպքում կարող է ընդհանրապես և հատկապես մեր գյուղատնտեսութեան համար վիթխարի նշանակութեան ունենալ: Ինչպիսի արդշունքներ եւ սված լինեն առաջին փորձերը, այնուամենայնիվ, խնդիրը տեխնիկապես շրված է, և պետք է հուսալ, վոր վորոշ ժամանակից հետո այդ խնդրի լուծումը մոտ կլինի, մանավանդ յեթե մենք ինքներս անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք: Արհեստական անձրևացման հարցի հաջող լուծումը միզ միլիարդների ոգուտ կտար:

Սակայն նույնիսկ առանց վերջին հանգամանքների յել ժամանակակից տեխնիկան բավականաչափ պայմաններ է կուտակել գյուղատնտեսութեան մեջ լիակատար տեխնիկական հեղափոխութեան առաջացնելու համար անհրաժեշտ միջոցներին: Այստեղ ևս, ինչպես և այլ դեպքերում, արդյունաբերութեանը պետք է հանդիսանա և հանդիսանում է իսկական ղեկավար սկզբունքը, իրապես հեղափոխական ողակը գյուղատնտեսութեան մեջ: Մեր արդշունաբերութեանը, վոր զարգացման նախադրված տեմպի համաձայն 15 տարում պետք է ավելանա 35 անգամ, իսկ 20 տարում— 185 անգամ, հնարավորութեան ունի գյուղատնտեսութեանն ապահովելու անհրաժեշտ քանակութեամբ արակտորներով, ցանոզ և հնձող մեքենաներով, նոր, կոմբինացված գյուղատնտեսական մեքենաներով, քիմիական պարարտանյութերով, տնկացան մեքենաներով, տեխնիկական բուսերի բերքը ժողովելու հատուկ մեքենաներով (Ամերիկայում, որինակ, հնարել են բամբակը հավաքող հատուկ մեքենա) և այլն: Մյուս կողմից, արդյունաբերութեանը ստեղծում է նաև այն անհրաժեշտ ֆինանսական միջոցները, վորոնք միջանի տասնյակ միլիարդ ուրբլիներով պետք է զրվեն գյուղատնտեսութեան մեջ:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ յես գտնում են, վոր գյուղատնտեսութեան մեջ հատիկային կուլտուրաների բերքատուութեանը 10 տարվա ընթացքում կարող է առնվազն կրկնապատկվել, իսկ 15 տա-

քում—անվազն չեռապատկվել, վոր նույնիսկ հատիկային ցանքերի տարածութունը վորոշ չափով կրճատվելու դեպքում ընդհանուր բերքը կարող է մոտավորապես կրկնապատկվել, իսկ 15 տարում—չեռապատկվել: Տեխնիկական բույսերի ցանքերը կարող են ավելացվել 5-6 անգամ, վորը բերքատվության կրկնապատկման դեպքում (իսկ այդ, միջին հաշվով, միանգամայն հնարավոր պետք է համարել) ընդհանուր բերքը կավելացնի 10-12 անգամ, իսկ ապրանքային բերքը—զգալի չափերով ավելի: Գյուղատնտեսական արտադրության մնացած տեսակների ցանքերի տարածութունը (խոտացանութուն, պարտեզներ, այգիներ և այլն) կարող է ավելացվել մոտավորապես յերեք անգամ:

Վերոհիշյալ նկատուումներով չես գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի ծավալը 1942-43 թ. համար մոտավորապես հետևյալ չափերով եմ նշում (1927-28 թ. գներով, միլիոն ուրբիներով, տես 14 աղյուսակը):

**Աղյուսակ 14.**

Գյուղատնտեսության ընդհ. արտադրանքի (առանց ձկնորսութ. յեվ վորսորության)

	1927—28 թ. միլ. ուրբիներով		1942—43 թ.		Ընդհանուր արտադրանքի բաշխումը 1942—43 թ. (1927—28 թ. վերով)				
	Փանի անգամ կրկնված արգելանքները	Միլիոն ուրբիներով 1927—28 թ. գներով	Գյուղատնտես. վերահանգման և քնդարձակ վրա գործադրող մասը	Արդյուն. վերամշակման յինքնարժեքի մասը	Արտածվող մասը	Անձնական սպամ. մասը			
						Ընդամենը	Վորից		
	Հողագ. բնական սպամ. մասը	Վորհանգ. բնական սպամ. մասը	Ընդամենը	Հողագ. բնական սպամ. մասը	Վորհանգ. բնական սպամ. մասը		Ընդամենը		
Հատիկային. . . . .	3.700	3	11.100	1.665	1.100	900	7.435	2.840	4.595
Տեխնիկ. կուլտուր.	970	10	9.700	485	8.730	485	—	—	—
Այլ . . . . .	6.200	9,7	60.000	18.000	6.000	600	35.400	13.500	21.900
Ընդամենը բուսաբուծութուն . . .	10.870	7,42	80.800	20.150	15.830	1.985	42.835	16.340	26.495
Կենդանաբուծութ.	5.500	9,4	51.700	7.750	10.330	1.030	32.590	12.400	20.190
Ընդամ. գյուղատ.	16.370	8,1	132.500	27.900	26.160	3.015	75.425	28.740	46.685

Ընդհանուր արտադրանքի ավելացումը 15 տարվա ընթացքում յես նշում եմ, մոտավորապես 8 անգամ, ընդվորում հատիկային ցանքերինը 3 անգամ, իսկ մնացածներինը—մոտավորապես 9,5—10 անգամ:

Հատիկային բույսերի ընդհանուր արտադրանքի յեռակի ավելացումը հնարավորութուն է տալիս մոտավորապես յերկու անգամ (1,8 անգամ) ավելացնելու հացի շնչական (душевое) պարենային սպառումը, արտահանելու մոտ 900 միլ. ուրբու հացահատիկ—1927-28 թ. գներով, և բավական զգալի չափերով ավելացնելու հացահատիկային բույսերի արդյունաբերական սպառումը (յեղիպտացորենը—ոսլա, շաբապ և ձևթ պատրաստելու համար, ցորենն ու տարեկանը—կոնդիտերային ապրանքներ, մակարոն և տեխնիկական նպատակներով սպիրտ պատրաստելու համար և այլն):

Տեխնիկական բույսերի ընդհանուր արտադրանքի 10-պատիկ ավելացումը ապահովում է նրանց արդյունաբերական սպառումը մոտավորապես 17-18 անգամ, քանի վոր այժմ խոշոր արդյունաբերութունը սպառում է տեխնիկական բույսերի ընդհանուր արտադրանքի միայն մոտավորապես 50% -ը (մնացածը տնային վերամշակման համար է մնում կամ անաչնապործական արդյունաբերության կողմից և վերամշակվում), մինչդեռ 1942-43 թ. համար յես նշում եմ արդյունաբերական սպառման բաժինը մինչև 90% (մնացած 10 տոկոսի կեսը գնում է վորպես նյութ ընդլանված վերարտադրության համար—սերմացու և այլն, իսկ մնացած կեսը—արտահանվում է):

Բուսաբուծության «այլ» կուլտուրաների ընդհանուր արտադրանքը ևս ավելանալու յե մոտավորապես 10 անգամ.—բանջարաբուծության և պարտիզպանության արտադրանքը ավելանալու յե մոտավորապես 6 անգամ, այգեգործութունը—15 անգամ, խաղողաբուծութունը—30 անգամ և այլն: Այսպիսի ավելացումը նշելով յես յելակետ ունեմ այն հանգամանքը, վոր յեթի մրգերը, խաղողն ու մյուս թանկ բանջարեղենները այժմ հասարակության համեմատաբար սահմանափակ խավի սպառման առարկան են կազմում, ապա 15 տարուց հետո նրանք պետք է դառնան քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորների սպառման առարկան: Բացի դրանից «այլ» կուլտուրաների ընդհանուր արտադրանքը պետք է ապահովի անասնապահության հսկայական աճումը (խոտացանութուն և մարգագործութուն), արդյունաբերական սպառման հսկայական աճումը (բանջարային և մրգի պահածոներ, մուրաբաների արտադրութուն կանդիտերային և անմիջական սպառման համար և այլն) և մոտավորապես 600 միլ. ուրբու արտահանում 1927—28 թ. գներով: Ընդհա-



նուր առձամբ, այդ մթերքների շնչական պարենային սպառումը ավելանալու յե 15 տարվա ընթացքում մոտավորապես 6 անգամ (1927-28 թ. գներով):

Կենդանաբուծութան ընդհանուր արտադրանքը ավելանալու յե մոտավորապես 9,5 անգամ, վորը պետք է ապահովի կենդանիների ու թռչնաբուծության բավական արագ աճումը, պետք է ավելացնի անմիջական շնչական պարենային սպառումը մոտավորապես 5 անգամ (1927/28 թ. գների արժեքային արտահայտությամբ), պետք է խոշոր չափերով ավելացնի արդյունաբերական վերամշակությունը (կաշվի հումք, կոշտ և մերինոսի բուրդ, միս պահածոների և բեկոնային արտադրության համար, կաթ-յուղագործության և պանրագործության համար) և ապահովի արտածումը մոտավորապես մեկ միլիարդ ռուբլու սահմաններում 1927/28 թ. գներով:

Գյուղատնտեսության առանձին ճյուղերի ընդհանուր արտադրանքի նախագծվող աճման պայմաններում հացահատիկի և գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռը 22,5 %-ից կիջնի մինչև 8,4 %-ի, և ի հաշիվ իջեցման կավելանա տեխնիկական կուլտուրաների տեսակարար կշիռը՝ 5,9 %-ից մինչև 7,3 %, բուսաբուծության «այլ» կուլտուրաներինը—38 %-ից մինչև 45,3 % և կենդանաբուծությանը—33,5 %-ից մինչև 39 %: Գյուղատնտեսության ապրանքայնությունը (հաշված և ներգյուղացիական շրջանառությունը) 36,6 տոկ. բարձրանում է մինչև 79 տոկ., իսկ գյուղատնտեսական արտադրանքի այն մասը, վոր գնում է ներգյուղական շուկա, 18,3 տոկ. բարձրանում է մինչև 37,3 տոկ.: Գյուղատնտեսական արտադրանքի այն մասը, վոր արդյունաբերական վերամշակության նյութ է ծառայում (բացի ալյուրագործությունից ու հացագործությունից), 4,5 տոկ. ավելանում է մոտավորապես մինչև 20 տոկ.: Գյուղատնտեսական արդյունքների շնչական պարենային սպառումը քանակապես ավելանալու յե մոտավորապես 4,5 անգամ (1927/28 թ. գների արժեքային արտահայտությամբ), իսկ չեթե նկատի ունենանք գների իջեցումը,—մոտավորապես 2 2,2 անգամ:

Գյուղատնտեսության հիմնական կապիտալը, առանց անասունների և բնակարանային շենքերի, ՍՍՀՄ Պետպլանը հաշվում է 1927 28 թ. համար 9,975 միլ. ռուբլի. տնտեսական կառուցվածքների արժեքը կազմում է 5,734 միլ. ռուբլի կամ 57,5 տոկ., մեռյալ ինվենտարի արժեքը—3,333 միլ. ռուբլի կամ 33,4 տոկ., մեկտորացիայինը—892 միլ. ռուբլի կամ 8,9 տոկ. և ելեկտրոֆիկացիայինը—16,2 միլ. ռուբլի կամ 0,2 տոկ.: Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանք-


ը վերահիշյալ չափերով ավելացնելու համար նրա հիմնական կապիտալը պետք է մոտավորապես 8 անգամ ավելանա ծավալով, այսինքն կազմի մոտ 80 միլիարդ ռուբլի 1927/28 թ. գներով: Այս դեպքում, իհարկե, պետք է խիստ աճի արտադրության գործիքների, ելեկտրոֆիկացիայի, մեկտորացիայի և այլ ճյուղերի բաժինը ի հաշիվ տնտեսական կառուցվածքների տեսակարար կշռի խիստ իջեցման. այս կառուցվածքներն այժմ չափազանց բարձր տոկոս են տալիս, վորը բավականաչափ ցայտուն կերպով բնորոշում է մեր գյուղատնտեսության արդի ամբողջ հետաձգությունն ու պրիմիտիվ վիճակը:

Միջանի խոսք ել մեր գյուղատնտեսության հնարավոր յեկամտաբերության հարցի մասին: 1942/43 թ. գնահատությամբ գյուղատնտեսության հիմնական կապիտալը կազմելու յե մոտավորապես 24 միլիարդ ռուբլի: Յեթե գյուղատնտեսության հիմնական կապիտալի բարոյական մաշվածքը տարեկան հաշվենք մոտավորապես 15-17 տոկ., ապա մենք կստանանք ամորտիզացիոն հատկացումների գումար մոտավորապես 4 միլիարդ ռուբլի տարեկան: Արտադրության միջոցները (սերմացու, պարարտացում, անասունների կեր և այլն) կկազմեն մոտավորապես արտադրության 25 տոկ.: Աշխատավարձը հաշված է՝ մեկ բանվորի միջին-տարեկան 1870 ռուբ. վարձատրությունից յելնելով և նկատի ունենալով, վոր գյուղատնտեսության մեջ զբաղված կլինի 15,7 միլիոն լրիվ բանվոր (այս մասին տես հաջորդ գլխում): «Այլ» ծախքերը յես հաշվել եմ արտադրության ինքնարժեքի 8 տոկ. չափով: Գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի արժեքը, վոր 1942/43 թ. կազմում է 104,6 միլիարդ ռուբլի—ըստ 1927/28 թ. գործարանային գների,—1942/43 թ. գներով (գործար. գները 40 տոկ. իջեցրած) կկազմի 62,8 միլիարդ ռուբլի: Այս պայմաններում մենք ստանում ենք գյուղատնտեսական արտադրության հետևյալ ուղենիշ նախահաշվի ուրվագիծը (միլիարդ ռուբլիներով).—

	Աղյուս. 15
Արտադրության միջոցներ	. . . 12,5
Աշխատավարձ	. . . 29,4
Այլ ծախքեր	. . . 4,1
Ամորտիզացիա	. . . 4,0
	գումար 50,0
Կուտակում (վաստակ)	. . . 12,8
	ընդամենը 62,8

Գյուղատնտեսական արտադրության ուղենիշ նախահաշիվը մասնաբաժանորեն ցույց է տրված 12 դիագրամում (յեր. 80).—

Այսպիսով, վաստակը կազմում է գյուղատնտեսական ապրանքա-  
 յին արտադրանքի ինքնարժեքի մոտավորապես 25 տոկ. և նրա իրաց-  
 ման արժեքի մոտավորապես 20 տոկ: Կուտակումների ընդհանուր  
 գումարը գյուղատնտեսության մեջ (հաշված ամորտիզացիան) կկազմի  
 մոտավորապես 16-17 միլիարդ ուրբլի: Այս հաշիվները, իհարկե, վերին  
 աստիճանի որոշումներ են կրում, և չես գյուղատնտեսության  
 հնարավոր կուտակումների վերոհիշյալ չափը (գների 40 տոկ, իջեց-  
 մամբ) գտնում եմ ավելի շուտ նվազեցված, քան չափազանցված:



12. Գյուղատնտեսական արտադրության ուղենիշ հաշիվները 1942/43 թ.,  
 միլիարդ ուրբլներով (1942/43 թ. գներով):

Ահա այն տեխնիկական հեղափոխության մոտավոր արդյունք-  
 ները, վոր մենք մերձավոր 15 տարվա ընթացքում պետք է կատա-  
 րենք գյուղատնտեսության մեջ:

Սակայն, գյուղատնտեսության մեջ կատարվելիք տեխնիկական  
 հեղափոխությունը և նրա արտադրական ուժերի նախագծվող հսկա-  
 յական աճումը, անշուշտ, պահանջում են նաև տնտեսական նոր ձե-

վեր: Այժմյան պայմաններում, չեք մեր գյուղատնտեսությունը բա-  
 ժանված է 25 միլ. մանր գյուղացիական ծխերի, այդպիսի տեխնիկա-  
 կան հեղափոխություն կատարելը և գյուղատնտեսության արտադրա-  
 կան ուժերը այդպիսի չափերով բարձրացնելը, իհարկե, հնարա-  
 վոր չէ:

Ուստի, գյուղատնտեսության մեջ կատարվելիք այլ տեխնիկա-  
 կան հեղափոխությունը պետք է առաջացնի և անխուսափելիորեն կա-  
 ուղացնի խոշոր սոցիալական փոփոխություններ նաև գյուղում: Գըլ-  
 խավոր դերը պետք է վերապահել խոշոր, մասնավորապես պետական,  
 իսկ գլխավորապես՝ կոլլեկտիվ տնտեսություններին, վորոնք հազա-  
 րավոր ու տասնյակ հազարավոր հեկտար տարածություն պետք է ու-  
 նենան: Մեեն պես է նպասակ դեեն 15 արուց վոյ ոււ միանգա-  
 մայն վերացնել մանր գյուղացեսուրյունը չեվ լիակատար չափով  
 կոլլեկտիվացման լեքարկել բուր գյուղացիական ճեեսեսուրյունեք,  
 ուժեղ քափով զուգընթացաբար կազմակերպելով խոշոր պեսակաե  
 խորհրդային ճեեսեսուրյունեք նոր հողերում չեվ նոր երջանեերում:  
 Հնարավոր է, արդյոք, այս ծրագիրն իրագործել մոտավորապես 15  
 տարի ժամանակամիջոցում:

Անպաշտան հնարավոր է: Կոլլեկտիվ տնտեսությունների շարժ-  
 ման այս կամ այն հաջողություններն ու անհաջողությունները, վոր  
 մենք մինչև այժմ ունեցել ենք և դեռ կունենանք մատակա յերկու,  
 դուցե և չերեք տարվա ընթացքում, չեն կարող վճռական նշանակու-  
 թյուն ունենալ գյուղացիական տնտեսության կոլլեկտիվացման հնա-  
 րավոր տեմպի հարցում: Վճռական նշանակություն կունենան այն  
 հսկայական տնտեսական առավելությունները, վոր ունի խոշոր, տեխնի-  
 կապես կատարյալ գյուղատնտեսությունը փոշիացած, մանր և արխա-  
 յիկ գյուղացիական տնտեսության հանդեպ, և վորոնք պարզ կլինեն  
 չքավոր ու միջակ գյուղացիության մեծամասնության համար, հենց  
 վոր պատշաճ ձևով կազմակերպված և բոշոր անհրաժեշտ միջոցներն  
 ստացած խոշոր կոլլեկտիվ տնտեսություններն սկսեն իրենց աշխա-  
 տանքի պտուղները տալ: Վճռական նշանակություն կունենան այն  
 նյութական ու ֆինանսական միջոցները, վոր մենք կունենանք մեր  
 արամադրության տակ այդպիսի կոլլեկտիվ տնտեսություններ կազ-  
 մակերպելու համար: Իսկ վերևում ասածներից պարզ յերևում է, վոր  
 թե մեկը և թե մյուսը բավարար չափերով ստեղծել կարող է արդյու-  
 նաբերությունը՝ նախագծված թափով աճելու դեպքում: Հենց վոր  
 խոշոր կոլլեկտիվ, սկզբում նույնիսկ փոքր թվով, սակայն նոր տեխ-  
 նիկայի հիման վրա կազմակերպված տնտեսությունները ցույց տան

իրենց աշխատանքի արդյունքները, գյուղացիութեան ամենաչքավոր, իսկ հետո նաև միջակ խավերը մեծ թափով կձգտեն դեպի կոլլեկտիվ տնտեսութունները, և կոլլեկտիվացման աշխատանքը չափազանց արագ կընթանա:

Մենք քննութեան առանք ժողովրդական տնտեսութեան յերեք հիմնական ճյուղերը—արդյունաբերութիւնը, գյուղատնտեսութիւնը և տրանսպորտը:

Կատարված վերլուծութիւնը ցույց տվեց, վոր մեր արդյունաբերութիւնը նախագծված տեմպով զարգացնելու դեպքում՝ մենք հնարավորութիւն կունենանք 15 տարվա ընթացքում, հիմնված միայն ներքին ռեսուրսների վրա, ժողովրդական տնտեսութեան հիմնական ճյուղերը հսկայական չափով բարձրացնելու: Իսկ ամենազլխավորը այն է, վոր տեխնիկական ու տնտեսագիտ անհամեմատ ալիւի բարձր զարգացման այդ ժակարդակի վրա հիմնված, մեք կկարողանանք հազարաւոր սեփական մանր գյուղացիական ձեւեր, փոխարինելով այն խոշոր սեփական կառուցված ձեւով, կօչնչացնենք մանր սեփականութիւնը, վորը «ծնում է» կապիտալիզմ յեվ բուրժուազիա հեզգիտեք, ամեն որ, ամեն ժամ յեվ մասսայական չափերով. (Լենին, XVII հատ. չեր. 18): Ժողովրդական տնտեսութեան վերջին ամենախոշոր ճյուղի հանրայնացումը մեր առաջ ճանապարհ է բաց անում դեպի հասարակութեան վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով: Ուստի, մենք կարող ենք ասել, վոր ընդհանուր պլանը—այդ սոցիալիզմ կառուցելու պլանն է, վորը սոցիալիզմը կառուցելու չն արդեն նոր, համեմատաբար ալիւի բարձր տեխնիկական ու տնտեսական հիմքի վրա: Սրագ թափով զարգացնելով արդյունաբերութիւնը, նրա համար հզոր ենք դեպի հիմք ստեղծելով, լայն շահերով ելեկտրոֆիկացման յենթարկելով ամբողջ չերկիրը, նոր յերկաթուղիներ կառուցելով և նորանոր շրջաններ կշանքի կոչելով, կուղեկէտիվացման յենթարկելով գյուղատնտեսութիւնը և միաժամանակ ընդարձակելով խոշոր պետական տնտեսութիւնը, մենք աստիճանաբար պետք է մեր ամբողջ տնտեսութիւնը վերակառուցենք սոցիալիստական հիմունքներով: Ընդհանուր պլանի մեջ ընդգրկելով 15 տարվա ժամանակաշրջան, մեք պեթ է ընդհանուր պլանն այնպէս կառուցենք, վորպեսզի այդ Երջանն ավարտվելուց հետո մեր Միութիւնը զարգանա միանգամայն ձեւակերպված սոցիալիստական նախկարակարգի պայմաններում:

Սակայն մեր յերկրում լիակատար սոցիալիզմ կառուցելու համար անհրաժեշտ են դեռ միջանի պայմաններ—աշխատանքի իրա-

վունքի իրագործում, կուլտուրական հեղափոխութիւն և կենցաղի հեղափոխութիւն՝ բառի լայն իմաստով:

Գ Լ Ո Ի Խ XIII

ԳԵՐԲՆԱԿԶՈՒՅՅԱՆ ՊՐՈՒԼԵՍԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՇՎԵԿՇԻՌԸ

(«Աշխատանքի իրավունք»)

Հասարակութեան սոցիալիստական կազմակերպութեան սկզբունքներինց մեկը այսպէս կոչված՝ «աշխատանքի իրավունքն է»,—աշխատանքի ընդունակ ամեն վոր իրավունք ունի հանրորեն անհրաժեշտ աշխատանքով զբաղվելու, իրավունք ունի պահանջելու, վորպեսզի հանրային աշխատանքի արդյունքից համապատասխան քանակութիւն ստանա: Սրան միանում է մի այլ սկզբունք,—լիակատար սոցիալական ապահովութիւն ստանալու իրավունք պետք ունենան այն բոլոր անձինք, ովքեր չեն կարող աշխատել (տարիքի կամ անաշխատունակութեան պատճառով) կամ անց են կացրել այն հասակը, վորի վրա տարածվում է հանրորեն անհրաժեշտ աշխատանքով զբաղվելու պարտականութիւնը:

«Աշխատանքի իրավունքի» սկզբունքն իրագործելու համար անհրաժեշտ է, վորպեսզի հասարակութեան կողմինց լիովին ոգտագործվի վորոշ տարիքի աշխատունակ բոլոր անձանց աշխատանքը, այլ յոսքով այդ սկզբունքն իրագործել յերբեք չի կարելի, յերբ կա գործազրկութիւն կամ գերբնակչութիւն թեկուզ վորեք ձեւով: Իսկ ինչպիսի հեռանկարներ կարող ենք նշել մենք այս տեսակետից ընդհանուր պլանի վերջին. կարող ենք, արդյոք. մենք «աշխատանքի իրավունքը» իրագործել 15 տարուց հետո: Քաղաքներում տիրող մեծ շափերի գործազրկութիւնը, գյուղատնտեսութեան մեջ առաջացած արդի գերբնակչութիւնը բնակչութեան մի քանի տասնյակ միլիոնի աճումը 15 տարվա ընթացքում, աշխատանքի արտադրողականութեան չափազանց մեծ աճումը արդյունաբերութեան մեջ, գյուղատնտեսութեան, շինարարութեան, տրանսպորտի, առևտրի և այլ ասպարեզներում՝ վորպէս տեխնիկայի կատարելագործութեան հետևանք,—այս ամենը ցույց է տալիս, վոր, կարծես թե, գործազրկութիւնն ու գերբնակչութիւնը սպառնում են մնալ նաև ընդհանուր պլանի վերջին, և առաջին հաջաքից՝ գուցե վոչ միայն չնվազեն, այլև ալիւանան:

Յես կարծում եմ, վոր այդ յերկյուղը բոլորովին անհիմն է: Ընդհակառակը, բոլոր տվյալներից յերևում է, վոր մենք մոտավորապես յերկրորդ հնգամյակի կեսերից, համենայն դեպս՝ վերջից, մեր զարգացման պրոցեսում ավելի շուտ բանավորական ձեռքերի պահասութուն կղզանք, և հատկապես այդ հանգամանքը մեզ կստիպի մենք կերպ արագացնել արտադրության մեքենայացումը, արագացնել մարդկային աշխատանքի փոխարինումը մեքենայով՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում:

Ստորև յես բերում եմ համապատասխան հաշիվներ, վորոնք առաջին կողմից-մոտավոր վործն են՝ լուծելու աշխատանքի հաշվեկշիռի պրոբլեմը ընդհանուր պլանի մեջ: Աշխատանքի այդպիսի հաշվեկշիռ կարգվելու համար չափազանց աղքատիկ նյութեր կան, ուստի առաջին ուրվագծի համար յես, վորպես յեղակետ, ոգտադործել եմ ժողովրդական տնտեսության 1927/28 թ. պետականային ստուգիչ թվերի «ԽՍՀՄ բնակչության թիվն ու զբաղմունքը» աղյուսակը և հետևյալ աղյուսակները. —

«Գյուղական բնակչության աշխատանքի հաշվեկշիռը» և «ԽՍՀՄ քաղաքային բնակչության աշխատանքի ոգտադործման հաշվեկշիռը», վորոնք վերցրած են ԽՍՀՄ Պետականի 1927/28—1931/32 թ. թ. «Հետևողական տվյալներից»:

Կսկսեմ գյուղատնտեսությունից, հիշյալ աղյուսակում բերված 1926/27 թ. վերաբերյալ տվյալները հակադրելով 1942/43 թ. վերաբերմամբ իմ կազմած տվյալների հետ (տես 16 աղյուսակը):

Իհարկե, բերված հաշիվներն ու յենթադրությունները չափազանց մոտավոր են, սակայն նրանք բավական են գաղափար կազմելու համար այն մասին, թե ինչ կարգի մեծուքուցների կարող է վերաբերել խոսքը:

Յես աշխատանքի արտադրողականության միանգամայն բացառիկ աճում եմ նախագծում գյուղատնտեսության մեջ, — սակայն այդպիսի աճում կարող է կատարվել միայն գյուղատնտեսության մեջ լիակատար տեխնիկական հեղափոխություն առաջ բերելուց և այդ տնտեսությունը բոլորովին նոր հիմունքներով կազմակերպելուց հետո, այսինքն՝ չերբ փոշիացած և պրիմիտիվ մանր-գյուղացիական տնտեսության փոխարեն մենք կունենանք խոշոր հատիկաղաց գործարաններ, արդյունաբերության համար գյուղատնտեսական հումք պատրաստող խոշոր գործարաններ (տեխնիկական կուլտուրաների գործարաններ), խոշոր կենդանաբուծական գործարաններ, գյուղատնտեսական արտադրության խոշոր կոմբինատներ և այլն, վորոնք կառուցված լինեն գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների հիման վրա և առավելագույն չափերով ելիկտրոֆիկացած լինեն: Գաղապարհականության և կենդանաբուծության ասպարեզում աշխատանքի արտադրողականության աճումը յես նախագծում եմ 15—30 անգամ, այգեգործության և խաղողաբուծության ասպարեզում՝ 4—5 անգամ: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսական աշխատանքների բոլոր ճեսակների համար յես

Գյուղական բնակչության աշխատանքի հաշվեկշիռի վերաբերյալ.

	1927/28 թ. լեկ տարեկան բանվորների քանակը	Աղյուսակ. ավելացումը 15 տար. հետո (քանի անգամ)	Աշխատանքի անհրաժ. գործադրող միլիոն տարեկրով (1926/27 թ. նորմաներով) 1942/43 թ.	Աշխատ. սրբական արտադրողական. ավելացումը (առանց բանվոր. ուր կլնանուր) 15 տ. մեջ (քանի անգ)	Աշխատ. գործադ. 1942/43 թ. միլ. տարեկ. արտ. բարձրացմ. տակալ տրանց քանով. ուր կբնաակուլ.	Աշխատ. գործադ. 1942/43 թ. միլ. տարեկ., բանվ. ուր կբնաակումը
<b>I Գաղապարհում.</b>						
Տեխնիկ. կուլտուրաներ	1,51	10	15,1	20	0,75	—
Արմատակահեղեղային	2,35	6	14,1	15	0,94	—
Հատիկային	7,38	3	22,1	30	0,74	—
<b>Գումար . .</b>	<b>11,24</b>	<b>—</b>	<b>51,3</b>	<b>21,1</b>	<b>2,43</b>	<b>4,86</b>
<b>II. Այլ գյուղատ. կուլտուրաներ</b>						
Մարգագործ.	2,35	9	20,0	30	0,67	—
Այգեգործ.	0,21	15	3,2	5	0,64	—
Խաղողագործ.	0,07	30	2,1	4	0,53	—
<b>Գումար . .</b>	<b>2,63</b>	<b>—</b>	<b>25,3</b>	<b>13,8</b>	<b>1,84</b>	<b>3,68</b>
<b>III. Կենդանաբուծում.</b>						
Անասնապահ.	10,55	9	95,0	30	3,17	—
Թռչնաբուծ. և մեղվաբուծում.	0,54	15	8,5	20	0,42	—
<b>Ընդամենը . .</b>	<b>11,09</b>	<b>—</b>	<b>103,5</b>	<b>28,8</b>	<b>3,59</b>	<b>7,18</b>
<b>Ընդամենը ըստ. գյուղատնտես.</b>	<b>24,96</b>	<b>—</b>	<b>180,1</b>	<b>23,0</b>	<b>7,86</b>	<b>15,72</b>
<b>IV Գյուղատնտես. նոտ չկապված աշխատանքներ.</b>						
Կառուցումներ և նորոգում.	3,49	5	17,5	10	1,75	3,5
ՉՔՊագայութ. և հասար. աշխատ.	12,27	—	10,0	—	4,00	4,0
Տնային տնտեսութ.	13,01	—	10,0	—	3,50	3,5
Այլ աշխատանքներ						
<b>Գումար . .</b>	<b>28,77</b>	<b>—</b>	<b>37,5</b>	<b>—</b>	<b>9,25</b>	<b>11,0</b>
<b>Ընդամենը . .</b>	<b>53,73</b>	<b>—</b>	<b>217,6</b>	<b>—</b>	<b>17,11</b>	<b>26,72</b>
Նույնը — ֆեկիկակ. անձանց	59,70	—	—	—	—	26,72

աշխատանքի արագորոգականության միջին անուսը վեցնում է 23 անգամ (բանվորական որվա միատեսակ տեղություն պայմաններում, բանվորական որը յերկու անգամ կրճատելու դեպքում աշխատանքի որական արտադրողականությունը կապիլանա 11,5 անգամ):

1926/27 թ. համար Պետպլանը «1927/28—1931/32 թ. հեռակա- նըկարային ավյալները» մեջ գյուղատնտեսության մեջ գործազրվելիք աշխատանքը հաշվում է 25 միլ. բանվորական տարի. աշխատանքի արտադրողականության միևնույն նորմաներով 1942/43 թ. համար կլահանջվեր մոտավորապես 180 միլ. տարի: Յես 1942/43 թ. համար գյուղատնտեսության մեջ գործազրվելիք աշխատանքը հաշվում է 15,7 միլ. տարի, բանվորական որը յերկու անգամ կրճատելու դեպ- քում (անփոփոխ տեղությունը բանվորական որվա հաշվով կպահանջվեր անվազն 8 միլ. բանվորական տարի): Պետպլանը 1926/27 թ. համար գործազրվելիք գյուղատնտեսության հետ չկապված աշխատանքները հաշվում է 28,8 միլ. բանվ. տարի, վորից շատ խոշոր դեր է վերապահվում տնային տնտեսությունը—12,3 միլ. բանվ. տարի, և այնուհետև մնացած բոլոր աշխատանքները—13 միլ. բանվ. տարի:

1942/43 թ. ամեն տեսակ հասարակական և այլ աշխատանքները մոտավորապես ավելանալու յեն 5 անգամ, սակայն այս աշխատանքների համար պայմանականորեն մի ժամվա աշխատանքի արտադրողականությունը 10 անգամ ավելացնելով և բանվորական որը յերկու անգամ կրճատելով՝ կարելի յե մոտավոր հաշվով ընդունել, վոր գործազրվելիք աշխատանքի բացարձակ չափը կմնա մոտավորապես նույն մակարդակի վրա—3,5 միլ. բանվորական տարի: Տնային և այլ տեսակ աշխատանքները կարող են մեծ չափերով կրճատվել, նկատի ունենալով կենցաղի զգալի հանրայնացումը, ինչպես նաև այն հանգամանքը, վոր տնային աշխատանքների մի մասը կկատարեն աշխատանքային հասակն անցկացրած անձինք: Այս կապակցությամբ կարելի յե մոտավոր հաշվով ընդունել, վոր այդ աշխատանքները բացարձակապես կկրճատվեն 25,3 միլ. բանվ. տարուց մոտավորապես մինչև 7,5 բանվ. տարի: Ընդհանուր առմամբ, գյուղական բնակչության անհրաժեշտ աշխատանքները, վորոնք 1926/27 թ. կազմում էին 53,7 միլ. բանվ. տարի, 1942/43 թ. իջնում են մինչև 26,7 միլ. բանվ. տարի: Այստեղ պետք է նշել վոր Պետպլանի «հեռանկարային ավյալներ»-ը հաշվի յեն առնում կիսաբանվորների ու կանանց մասնակի աշխատանքը (կնոջ աշխատանքը Պետպլանը ընդունում է չափահաս տղամարդու աշխատանքի 0,9-ին հավասար), ուստի և տարվա ընթացքում լիովին զբաղված՝ գյուղական բնակչության ֆիզիկական անձանց թիվը 1926/27 թ. համար հաշվում են 59,7 միլ. մարդ: 1942/43 թ. համար յես ընդունում է 26,7 միլ. բանվոր (լրիվ բանվորակ. տարիներին հավասար), քանի վոր գտնում են, վոր աշխատելու յեն միայն չափահասները, և վոր գյուղատնտեսությունը մեծ չափերով մեքենայացման յենթարկելու դեպքում կնոջ աշխատանքը տղամարդու աշխատանքին հավասարաթեք կլինի:

Անցնում են ԽՍՀՄ բնակչության հողագործական զբաղմունքներին 1942/43 թվականում: Աշխատանքի զանազան ճյուղերում զբաղված անձանց թիվը յես հետևյալ չափերով է հաշվում (տես 17 աղյուս.):

Ժողովրդական տնտեսության 1927/28 թ. սուղիչ թվերի հաշիվներով այդ տարում խոշոր արդյունաբերության մեջ զբաղված և յեղել մոտավորապես 2.865 հազ. մարդ, վորից վարձու բանվորներ մոտավորապես 2.860 հազ. և մանր արդյունաբերության մեջ (հաշված տնայնագործությունը)—մոտավորապես 2.355 հազ. մարդ (վորից վարձու բանվորներ՝ մոտավորապես 260 հազ. մարդ): Յես գտնում են,

Պ. Պ. Պ. 17

Վոչ-հողագործական բնակչության բաշխումը յես աշխատանքի հիմնական յյուղերի.

ԱՇԽԱՏԱՆԻ ԾՅՈՒՂԵՐԸ	Ինքնագործ անձանց թիվը 1927/28 թ.				1942/43 թ.		
	Ընդամենը հազարներով	ի % 10-ով	վորից վարձու	% 10-ով	վարձու ան- ձանց մոտավ. ավելացումը (բանի անգամ) 1927/28 թ. հա- մեմատությամբ	Աշխատ. թիվը 1000-ներով	ի % 10-ով
Արդյունաբերություն	5.220	35,5	3.120	36,9	3,5	10.900	24,2
Շինարարություն	725	5,0	560	6,6	10	5.600	12,4
Առևտուր (բաշխում)	1.164	7,9	550	6,5	6	3.300	7,4
Յերկաթուղի և ջրային տրանսպորտ	1.560	10,6	1.200	14,2	4	4.800	10,6
Տեղական տրանսպ.					50	7.000	15,5
Ժողովրդ. կապ	94	0,6	94	1,1	5	470	1,0
Ժող. բուսով. և արվեստ	750	5,1	750	8,9	8	6.000	13,3
Ժող. առողջապ.	365	2,5	365	4,3	10	3.650	8,1
Պետակ. և հասար. ալլ հիմնարկ.	922	6,3	922	10,9	2	1.840	4,2
Անձնական ծառայողն.	300	2,0	300	3,6	—	—	—
Այլ բնակչություն.	3.600	24,5	460	5,4	—	1.500	3,3
	14.700	100	8.460	100	—	45.060	100

վոր 15 տարվա մեջ արդյունաբերության մեջ զբաղված վարձու աշխատավորների թիվը կավելանա մոտավորապես 3,5 անգամ<sup>1)</sup> և կկազ-

1) Ամբողջ արդյունաբերության համար (հաշված այլուրաղացները, հացագործությունը, պատրաստի անդի արտադրությունը գործարան-խոհանոցներում և այլն) յես նույն աճումն են ընդունում—3,5 անգամ, ինչպես և ՖՏԳՍ յենթակա խոշոր արդյունաբերության համար (տես V դր.—«Աշխատանքի հիմնական ցուցանիշներ»):

մի մոտավորապես 11 միլ. մարդ, և մանր արդյունաբերութեան մեջ զբաղված աշխատավորների թիվը կհազմի 1 միլ. մարդուց պակաս: Տնայնագործական արդյունաբերությունը, վորպես ինքնուրույն մասն գրազմուցե, հավանականաբար, բոլորովին կանհետանա:

ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում շինարարական աշխատանքներով զբաղված աշխատավորների թիվը պետք է հրակայական չափով աճի, չնայած աշխատանքի արտադրողականութեան չափազանց զգալի բարձրացման: Յես կառուցող բանվորների թիվը 1942—43 թ. համար ընդունում եմ 5.600 հազար մարդ (ավելանում է 10 անգամ): Բանվորների այս քանակությունը կլանվելու չե արդյունաբերական շինարարութեան մեջ, վորի ծավալն ավելանալու չե համարյա 25 անգամ, ելեկտրոֆիկացիոն շինարարութեան մեջ, վորի ծավալն ավելանալու չե մոտ 30 անգամ, նոր յերկաթուղիների շինարարութեան մեջ, վորի ծավալը 1942—43 թ. հասնելու չե 60 հազար կիլոմետրի, տեղական ճանապարհների և շրջային հաղորդակցութեան ճանապարհների վրա կատարվող հսկայական աշխատանքների մեջ, բնակարանային ու կոմունալ վիթխարի շինարարութեան մեջ և այլն:

Բաշխման (այժմ առևտրի) ասպարեզում բաշխման ապրատը ևս պետք է շատ մեծ քանակությամբ հանրայնացված աշխատանք կլանի, նույնիսկ նկատի ունենալով նրա ուսցիոնալացման ու մեքենայացման ծայրահեղ աստիճանը, վորովհետև արդյունաբերական արտադրութեան ավելանալու չե ավելի քան 25 անգամ, իսկ գյուղատնտեսութեան ապրանքային արտադրանքը, վոր արտադրողային շուկա չե հանվում, ավելանալու չե մոտավորապես 35 անգամ: Այս ասպարեզում զբաղված անձանց թիվը 1942—43 թ. համար չես, վորպես մինիմում, ընդունում եմ 3.300 հազ. մարդ,—առևտրի մեջ այժմ վարձու աշխատանքով զբաղված անձանց թվից 6 անգամ ավելի:

Յերկաթուղային և ջրային տրանսպորտում զբաղված անձանց թիվը չես ավելացնում եմ մոտավորապես 4 անգամ, նկատի ունենալով, վոր յերկաթուղիների ցանցը ավելանալու չե մոտավորապես 5 անգամ, բեռնաշրջանառութեանը—մի քանի անգամ, և շատ յերկաթուղիներ ունենալու չեն այսպես ասած՝ պիոնիերական բնույթի, այսինքն՝ կառուցվելու չեն նոր շրջաններում, վորի պատճառով լրակատար բեռնվածութուն չեն, ունենա, սակայն այդ միևնույն ժամանակ բավական մեծ քանակությամբ աշխատանք կկլանեն:

Հսկայական չափերով ավելանալու չե տեղական տրանսպորտում, առավելապես ավտոմոբիլային գործում զբաղված անձանց թիվը. ավտոմոբիլային հաղորդակցութեանը համեմատաբար սահմանափակ տա-

րածութունների վրա բեռնատարական ֆունկցիաներ կկատարի և ժամանակի կերպով այս տեսակետից կփոխարինի յերկաթուղային և սալի տրանսպորտը: Բացի դրանից, անշուշտ չափազանց մեծ չափեր կընդունի մարդատար ավտոտրանսպորտը: Ժողովրդատնտեսական և հասարակական կարիքները բավարարող ավտոմեքենաների թիվը 1942/43 թ. հասնելու չե մի քանի միլիոնի, և ավտոտրանսպորտը պետք է զբաղեցնի 1942—43թ. համար նշված 7 միլիոն մարդու գերակշռող մասին: Բացի դրանից, աշխատավորների զգալի մասը կըբաղեցնեն տեղական ելեկտրական ճանապարհները (տրամվայ, սնորերկրյա ճանապարհներ և այլն): Ուստի 7 միլիոնը պետք է համարել նվազագույն թիվ, մանավանդ յեթե նկատի ունենանք, վոր բանվորական որն այստեղ ևս, ինչպես արդյունաբերութեան մեջ, կըճատվելու չե մինչև 5 ժամ:

Կապի ասպարեզում (փոստ, հեռագիր, հեռախոս, ռադիո) բնակչութեան սպասարկող անձանց թիվը պետք է մի քանի անգամ ավելանա, հատկապես նկատի ունենալով ԽՍՀՄ հսկայական տերրիտորիան և այն վայրերի չափազանց թույլ սպասարկութունը, վորոնք այժմ հեռու չեն ընկած խոշոր քաղաքներից և յերկաթուղիներից: Այս ասպարեզում զբաղված անձանց թվի հնդապատկումը չես վերցրել եմ այլ և միջնակարգ կրթութեանը բանվորական ու գյուղացիական յերիտասարդութեան միջին շատ սահմանափակ մասի համար և մատչելի, ապա 15 տարուց հետո միջնակարգ կրթութեան պետք է ստանա ամբողջ յերիտասարդութունը, առանց բացառութեան, իսկ բարձրագույն (կամ բարձրագույնի ու միջնակարգի միջինը) կրթութեան ձրապույն (կամ բարձրագույնի ու միջնակարգի մեծ մասը.—մանապետք է ստանա յերիտասարդութեան բավական մեծ մասը.—մանապետք է ստանա յերիտասարդութեան շատ մեծ չափով մոտեցած և վանդ վոր՝ այդ ժամանակ կրթութեանը շատ մեծ չափով մոտեցած և կապված պետք է լինի արտադրութեան հետ: Բացի դրանից, այդ ժամանակ շատ մեծ չափերով տարածված պետք է լինի յերեխաների մանակ շատ մեծ չափերով տարածված պետք է լինի յերեխաների մասարակական դաստիարակութունը, յեթե մեզ չհաջողվի 15 տարուց հետո լիովին իրագործել յերեխաների դաստիարակութեան հանրայնացումը, սկսած ամենավաղ մանկական հասակից: Զգալի չափով ավելանալու չե նաև ժողովրդական արվեստով զբաղված անփով ավելանալու չե իսկ հասարակական աշխատանքի շատ մեծ մասը: Ուստի, չես ժողովրդական կրթութեան և ժողովրդական արվեստի ասպարեզում զբաղված անձանց թվի աճումը նշում եմ մինչև 6 միլիոն մարդ,—մոտավորապես 8 անգամ ավելի 1927—28 թ. համեմատութեամբ:

Ձգալի չափով ավելանալու չի նաև ժողովրդական առողջապահության ասպարիզում զբաղված անձանց թիվը: Բնակչության առողջության բարելավման խնդիրը, վորին մենք այժմ չենք կարողանում բավականաչափ միջոցներ և ուժեր հատկացնել, 15 տարուց հետո պետք է դառնա հասարակական աշխատանքի կիրարկման ամենակարևոր ճյուղերից մեկը: Պետք է կարծել, վոր 15 տարուց հետո ամբողջ չերկիրը սանիտարական վիճակի մեջ գնելու խնդիրը չի կարող գեռես ոեալ կերպով իրագործելի խնդիր համարվել. այդ խնդրի իրագործումն արդեն կլինի մարդկության զարգացման սոցիալիստական շրջանի գործ: Սակայն բնակչությանը հիվանդանոցներով, ամբուլատորիաներով, հատուկ ինստիտուտներով (թոքախտավորների, ջղալին հիվանդությունների և այլն) առավելագույն չափերով սպասարկելու խնդիրը ԽՍՀՄ հակաչական տերրիտորիայի ամբողջ տարածության վրա պետք է բավարար չափով իրագործվի: Բացի դրանից, չեթե այսօր հանգստյան տներից ու սանատորիումներից բանվորների ու գյուղացիների բոլորովին չնչին մասն է ոգտվում, ապա մեր նըպատակը պետք է լինի 15 տարուց հետո այդ հանգստի տներն ու սանատորիումներն ընդունել չեթե վոչ բոլոր ցանկացողներին, ապա վրդական առողջապահության մեծ մասին: Ուստի, ժողովրդական առավաղն 10 անգամ և հասնի մոտավորապես 3.5 միլիոնի:


Ձափազանց դժվար է վորոշել այն մարդկանց թիվը, վորոնք պետք է զբաղված լինեն պետական և հասարակական հիմնարկներում: Պայմանականորեն կարելի է ընդունել, վոր այդ թիվը մոտավորապես կկրկնապատկվի:

«Անձնական ծառայողների» ինստիտուտը 15 տարուց հետո պետք է բոլորովին վոչնչանա, նկատի ունենալով կենցաղի զգալի չափերով հանրաչնացումը (գործարան-խոհանոցներ և հասարակական ճաշարաններ, հասարակական լվացքատներ, բավարար թվով հասարակական բնակարաններ, հասարակական դաստիարակություն և այլն):

Վերջապես յես 1.5 միլիոն ել հաշվում ես «այլ» բնակչության թիվը: 1927-28 թ. այս սյունյակի մեջ մտնում են նաև զգալի թվով գործազուրկներ. 15 տարուց հետո այս սյունյակում կմնան միայն հաշմանդամները, աշխատանքի անընդունակ տկարները, գուցե և սակաթիվ, այսպես կոչված՝ «տնային տնտեսուհիները» և այլն:

Այս բոլոր հաշիվների համաձայն ինքնագործ հողագործ բնակչության թիվը 14,7 միլիոնից բարձրանում է մինչև 45,1 միլ., կամ ավելանում է 3 անգամ, իսկ վարձու աշխատանքով զբաղված ան-

ձանց թիվի համեմատությամբ (8,46 միլ. մարդ) — համարչա 5,5 անգամ: Այստեղ պետք է կրկին ընդգծել, վոր վերոհիշյալ բոլոր հաշիվները կատարված են, այսպես ասած, մեծ լարումով և, գուցե, բազ-



13. Հասարակական աշխատանքի դանդաղան ճյուղերում զբաղված ինքնագործ բնակչության բաշխումը:

մաթիով ճշուդերի նկատմամբ նվազեցված են,—հատկապես յեթե նը-  
կատի ունենանք բանվորական օրվա կրճատումը մինչև 5 ժամ:

Աշխատավոր բնակչության կազմի այս սուր փոփոխությունը  
պարզ յերեվում է 13 դիագրամից:

Թե հողագործական և թե վոչ-հողագործական բնակչության  
նկատմամբ յես այդպիսի լարում թույլ տվեցի, նկատի ունենալով,  
վոր 15 տարուց հետո մենք պետք է կրճատենք կյանքի այն ժամա-  
նակի տեվողությունը, վոր յուրաքանչյուր աշխատավոր պարտավոր  
և հասարակական աշխատանքին նվիրել: Մենք պետք է այնպես ա-  
նենք, մենք պետք է 15 տարում այնպիսի կացություն ստեղծենք,  
վորպեսզի մինչև 20 տարեկան հասակը յերիտասարդությունն ազա-  
տենք հանրային—պարտադիր աշխատանքից և նրան հնարավոր  
ություն տանք իր ուժերը նվիրելու ընդհանուր և արտագրական  
կրթության, ինչպես նաև իր ֆիզիկական զարգացմանը: Միաժամա-  
նակ աշխատավորը 50 տարին լրացնելուց հետո պետք է ազատվի  
հանրային-պարտադիր աշխատանք կատարելուց և լիովին ազահով-  
ված պետք է լինի պետության կողմից:


Բանվորական օրը և հանրային-պարտադիր աշխատանքի ժամա-  
նակամիջոցը մենք ելլ ավելի կրճատել կկարողանանք հետագայում,  
մասնավորապես, արդեն չորրորդ հնգամյակում, հավանականաբար:

Ընդհանուր առմամբ, հողագործական և վոչ-հողագործական աշ-  
խատանքով զբաղված բնակչության թվի հարաբերությունը մոտա-  
վորապես հետևյալ կերպով կփոփոխվի.—

Աղյուսակ 18

	1927/28 թ.	% -ով	1942/43 թ.	% -ով
Ամբողջ բնակչությունը միլիոններով .	149,6	100,0	196	100,0
Վորից հողագործականը . . . . .	119,2	79,7	75	38,3
» վոչ-հողագործականը . . . . .	30,4	20,3	121	61,7
Ամբողջ ինքնազործ. բնակչությունը (16—59 տ. 19/2728 թ. համար և 21—49 տ. 1942/43 թ. համար) . . . . .	75,4	100,0	71,6	100,0
Վորից հողագործական բնակչությունը	60,7	80,5	26,5	37,0
» վոչ-հողագործական . . . . .	14,7	19,5	45,1	63,0

Այլ փոփոխությունները ցույց են տրված 14 դիագրամում:



14. Միութայն բնակչության բաշխումը հողագործականի և վոչ-հողագոր-  
ծականի (պետականի շրջանի սկզբին և վերջին)



Ինչպէս այդ թվերը ցույց են տալիս, հողագործական բնակչութիւնը, վոր այժմ ամբողջ բնակչութեան մօտ չորս հինգերորդ մասն է կազմում, շատ զգալի չափով կապակասի վոչ միայն համեմատաբար, այլ բացարձակ կերպով, մտատվորապէս իր մեկ յերրորդով: Մեր յերկիրը անգրարային-արդյունաբերականից կփոխվի արդյունաբերութեան մեջ (շինարարութեան հետ միասին), տրանսպորտում և բաշխման գործի մեջ և 37%—գյուղատնտեսութեան մեջ (անմիջապէս գյուղատնտեսական աշխատանքով զբաղված կլինի միայն 22%, ինչպէս ցույց տրվեց վերևում): մինչդեռ 1927/28 թվին աշխատունակ բնակչութեան 80,5% (հաշված և պատանիներին) զբաղված է գյուղատնտեսութեան մեջ (անմիջապէս գյուղատնտեսութեամբ մօտ 37,5%), իսկ արդյունաբերութեան, շինարարութեան, տրանսպորտի և առևտրի մեջ—քնդամենը 11,7%: Այլ ճյուղերում (ժողովրդական լուսավորութեան, առողջապահութեան և պետական ու հասարակական այլ հիմնարկներ) զբաղված կլինի 16%—ը 1927/28 թ. 2,6%—ի փոխարին:

Վերոհիշյալ հաշիվները, վորքան էլ մտատվոր լինեն նրանք, բավականաչափ պարզ կերպով ցույց են տալիս, վոր ընդհանուր պլանի վերջին տարում գործազրկութեան և դերբնակչութեան մասին խոսելու առիթ մենք չենք ունենա: Միայն աշխատանքի արտադրողականութիւնը ժողտնտեսութեան բոլոր ճյուղերում հսկայական չափերով բարձրացնելու դեպքում մենք կկարողանանք բանվորական ուրը կըրճատել մինչ 5 ժամ և հանրորեն-պարտադիր աշխատանքներից ազատել 21 տ. փոքր և 49 տ. մեծ բոլոր անձանց: Յերկրորդ հնգամյակի կեսերից կամ վերջից մեր զարգացումը, հավանականաբար, կընթանա, բանվորական ձեռքերի պակասութեան պայմաններում, և այդ հանգամանքը մեզ կհարկադրի չափազանց ինտենսիվ կերպով մեքենայացման չենթարկելու, աշխատանքը ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում, ռացիոնալացման չենթարկելու արտադրութիւնը և շատ մեծ չափերով բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը:

### Գ Լ Ո Ւ Խ XIV

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՀԱՆՐԱՅՆԱՅՈՒՄ

ա) Կենցաղի հանրաճացում.

Նյութական և սոցիալական նախադրյալները (արտադրողական ուժերի զարգացման բավական բարձր մակարդակ, դասակարգերի վոչընչացում և արտադրութեան բոլոր գործիքները ու միջոցները հանրայնացում) դեռ բավական չեն սոցիալական հասարակութիւնը կառուցելու համար: Անհրաժեշտ է նաև կուլտուրական հեղափոխութիւն, — պետք է բոլորովին վերամշակել մարդուն, իսկ դրա համար անհրաժեշտ է միանգամայն փոխել մարդկութեան գոյութեան կենցաղային պայմաններն ու ձևերը:

Կենցաղի պայմանները պետք է փոփոխել ամենից առաջ այն ուղղութեամբ, վորպեսզի վոչնչացվի անհատական տնային տնտեսութիւնը, այն ընտանեկան «ոջախը», վոր միշտ յեղել է և այժմ էլ է կնոջ ստրկացման աղբյուրը: Վերոհիշյալ հաշիվները, վորոնք ցույց են տալիս, թե 1942/43 թ. ինչ թվով աշխատավորներ պետք է զբաղված լինեն հասարակական աշխատանքի զանազան ճյուղերում, մեզ բերում են այն յեզրակացութեան, վոր մինչև իսկ աշխատանքի արտադրողականութիւնը զգալի չափով բարձրացնելու դեպքում բանվորական ձեռքերի պակասութիւնը մենք 15 տ. հետո հաղաթահարել կարող ենք միայն այն ժամանակ, յիժե 21—49 տ. բոլոր աշխատունակները հանրորեն-պարտադիր աշխատանքով արգելի և կանաչք զբաղվեն հանրորեն-պարտադրմբ տնային ստրկութեամբ: Հետևապէս, կնոջ լիակատար ազատագրումը տնային ստրկութեանից և անհասկանալի սնային սնեսուքայն վոչնչացումը վոչ միայն մի խնդիր է, վորը ցանկալի յե իրագործել բնդիմուր պլանի վեջին, մի խնդիր է, վորի իրագործումը մի անխուսափելի անհրաժեշտապլ նաեղ մի խնդիր, վորի իրագործումը մի անխուսափելի անհրաժեշտ է և կարևոր նախադրյալներից մեկը՝ ընդհանուր պլանի հիմնական խնդիրները իրագործելու և, ամենից առաջ, ամբողջ ժողովրդական տնտեսութեան արտադրողական ուժերը նախագծված չափերով զարգացնելու համար:

Անհատական տնային տնտեսութիւնը վոչնչացնելուց հետո նրա փոխարեն պետք է կազմակերպել աշխատավորների հիմնական կարիքների հասարակական սպասարկութիւնը: Անհրաժեշտ թվով հսկայական գործարան-խոհանոցները պետք է լիովին մատակարարեն տանը պատ-

րատվող կերակուրը. այս հանգամանքը ղգալի չափով կեժանացնի սնունդը: Վոչ միայն կերակուր պատրաստելու, այլ նաև բնակչութանը ավելի հարմար սննդառուծյան հնարավորութուններ տալու համար պետք է ստեղծել պատասխանատու, բավական բարդ և մեքենայացված ապարատ, այսինքն՝ պետք է կազմակերպել ընդարձակ հասարակական ճանաչարաններ աշխատանքի վայրերում, հանգստի վայրերում, մսուրներում, հասարակական դաստիարակութան հիմնարկներում և այլն. պետք է հսկայական չափերով ընդարձակել և կատարելագործել պահածոյական արդյունաբերությունը և այլն. մի ամբողջ շարք գեպլեբերում նպատակահարմար կլինի պատրաստի կերակուրը «տուն» տանելու գործը կազմակերպել մեքենայական հիմունքներով, և այլն:

Սպիտակեղենը տանը լվանալու անախորժ սովորությունը բոլորովին կվերանա, չերբ կկազմակերպվեն տեխնիկապես-կատարելագործված մեքենաներով ոժտված հասարակական մեքենական լվացքատները, վորոնք միքանի տասնյակ րոպեներում ախտահանում, լվանում, չորացնում և հարթուկում են սպիտակեղենը (այդպիսի լվացքատներ այժմ կան Ամերիկայում և Արևմտյան Յիվրոպայի միքանի յերկրներում): Տանը լոգանք (վաննա) պատրաստելու անհրաժեշտութունը ևս կվերանա, չերբ աշխատանքի, հանգստի, սաման և այլ վայրերում կկառուցվեն բոլոր աշխատավորների համար մատչելի հասարակական բաղնիքներ, ավազաններ, ջրցաններ (душ) և այլն: Զգեստի ու սպիտակեղենի գործարանները, կարկաման մեքենայական գործարանները պետք է լիովին վերջ տան տանը կարելու և կարկատելու անհրաժեշտ աշխատանքին, վորն այժմ այնքան շատ ժամանակ է խլում գլխավորապես կնոջից: Վերջապես, բնակարանների մեքենայական մաքրումը, դարձյալ գլխավորապես կնոջը կազատի այս ասպարիզում նրա գործադրած բավական մեծ աշխատանքից:

Այսպիսով, ընդհանուր պլանի վերջին շրջանում պետք է վոչընչանա այն ամենը, ինչ վոր այժմ անհատական տնային տնտեսություն վարելու անհրաժեշտութուն է առաջ բերում և կնոջը կապում է այդ տնտեսության հետ: Սակայն այդ բավական չէ: Կենցաղի գոյութուն ունեցող ձևերը պահպանող պատճառներից մեկը՝ այդ փոքր յերեխաներին չորաքանչուր ընտանիքում առանձին, անհատական ձևով դաստիարակելն է. այս մի չարիք է թե յերեխաների համար, վորոնք չենթարկվում են դաստիարակութան բոլորովին անընդունակ ծնողների դաստիարակչական ազդեցութանը, և թե ծնողների, հատկապես մայրերի համար, վորոնք այդ պատճառով ստիպված են յերեխաների դաստիարակութան գործին շատ մեծ ժամանակ և ուժեր տրամադրելու և

այդպիսով զրկվելու այլ գործով կամ հասարակական աշխատանքով զբաղվելու հնարավորութունից: Այս կարիքի դեմ մենք արդեն սկսել ենք պայքարել՝ կազմակերպելով մսուրներ, մանկապարտեզներ, մանկական հրապարակներ, ավելացնելով դպրոցների քանակը և այլն: Սակայն ներկայումս մենք դեռ աղքատ ենք և այդ ուղղությամբ դեռ առաջին քայլերն ենք անում: 15 տարուց հետո, չեթե դեռ մեզ չհաջողվի լիովին իրագործել դաստիարակութան հանրայնացումը, այսինքն՝ յերեխաներին ամենավաղ հասակից լիովին դաստիարակել հատուկ պետական հիմնարկներում և պետական միջոցներով, ապա համենայն դեպս մանկատների, մսուրների, մանկապարտեզների և այլ հիմնարկների կազմակերպութան գործը մենք պետք է այնպիսի բարձրության վրա դնենք, ինչպես նաև դաստիարակութան գործը ղգալի չափով այնպես պետք է կազմակերպենք, այնպիսի լայն չափերով, վոր ցերեկը լիովին ազատենք կնոջը յերեխաների հոգսից, իսկ նրանց ղգալի, դուցե և մեծ մասին բոլորովին ազատենք յերեխազերին դաստիարակելու անմիջական հոգսից, և յերեխաների մտավոր ու Ֆիզիկական դաստիարակութունը հանձնենք պետությանը, վորը այդ գործը կարող է կազմակերպել ավելի ռացիոնալ և նպատակահար ձևով՝ թե իրենց իսկ, յերեխաների և թե ամբողջ հասարակության շահեղի տեսակետից:

Վերջապես, յերբ լայն չափերով կազմակերպվեն պարտադիր հասարակական աշխատանքներից ազատ ժամանակ ղբաղվելու համար անհրաժեշտ հասարակական շենքեր («գիտության պալատներ», գրադարաններ, ընթերցարաններ, պարապելու առանձին կարճիստներ և այլ) և աշխատանքից ու ղբաղմունքներից ազատ ժամանակ հանգըտտանալու հարմարութուններ (ակումբներ, Ֆիզկուլտուրայի դահլիճներ և հրապարակներ, պարտեզներ՝ կամ հոտկապես սարքավորված տերրասներ՝ թարմ ողում հանգստանալու համար), — այդ ժամանակ միանգամայն անիմաստ կլինի առանձին ընտանիքներով ապրելը, կվերանա մեկուսացված բնակարաններում ու տներում հատուկ «ընտանեկան ոճախներ» սարքելն ու առանձին կյանք վարելը:

Աշխատավորների կյանքի կենցաղային պայմանները կփոխվեն, սակայն իրենց իրագործման համար նրանք կպահանջեն բոլորովին այլ բնակարանային պայմաններ, քանի վոր ժամանակակից տներն ու ժամանակակից քաղաքները ամենևին հարմարեցված չեն կենցաղի այդպիսի հանրայնացման համար: Ժամանակակից քաղաքը կապիտալիստական կուլտուրայի արդյունք է, վորտեղ հիմնական որենքը — շահն է, և վոչ թե աշխատավորների համար հարմարութուններ և կյանքի առողջ պայմաններ ստեղծելը:

Երկարօֆիկացիայի խիտ ցանցը, վոր պատելու չե ամբողջ յերկիրը և եներգիա չի մատակարարելու հսկայական հեռավորութեան վրայ, միքանի անգամ ավելացրած յերկաթուղային ցանցը, ջրային հաղորդակցութեան բավականաչափ բարեկալված ճանապարհները և ընդարձակ չափերով ապրանքատար ավտոմոբիլներ շարժման համար հարմարեցված տեղական ճանապարհների խիտ ցանցը,— այս ամենը զգալի չափերով կգրկի այժմյան քաղաքները, վորպիս արդարև արեւելեան կենտրոններ, իրենց առավելութուններից և հնարավորութունն կտանոր արդարև արեւելեան ձեռնարկութունների ցանցը տարածելու ամբողջ Միութեան տերիտորիայում, հաճախ— փոխադարձ համաձայնութեամբ պետական կողմերով կամ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկութուններին հետ: Աստիճանաբար զրկվելով իրենց արդարև արեւելեան նշանակութունից (իսկ իրենց առևտրական նշանակութունից, վոր հատուկ է կապիտալիստական քաղաքներին, մեր քաղաքներն արդեն այժմ կամաց-կամաց զրկվում են), այդ քաղաքները հետզհետե դադարելու չեն բնակչութեան կուտակման խոշոր կենտրոններ լինելուց, և բնակչութունը հետզհետե և համաչափ կերպով տարածվելու չե Միութեան սահմաններում, ձգտելով դեպի այն վայրերը, վորտեղ կը կազմակերպվեն արդարև արեւելեան ու գյուղատնտեսական նոր խոշոր ձեռնարկութուններ:

Յերբ ընդհանրապես կաճի կուտուրան, և հետզհետե ավելի կմեծանա ու կամրանա դաստիարակութեան ու ուսուցման և արտադրական պրոցեսի (ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում) միջև յեղած փոխադարձ կապը, այժմյան քաղաքները կսկսեն հետզհետե կորցնել իրենց բացառիկ նշանակութունը, վորպես կուտուրական ու կազմակերպութունները (ստորին, միջին և բարձրագույն զբոսայրոցներ, դիտական ինստիտուտներ, դրադարաններ և այլն), ավելի սերտ կերպով կապվելով այս կամ այն ձեռնարկութեան հետ, նույնպես համաչափորեն կտարածվեն Միութեան տերիտորիայում:

Այսպիսով, կապիտալիստական հասարակակարգից մեզ ժառանգութունն մնացած այժմյան մեր քաղաքները, վորոնք անբարեկարգ են, վորոնք վտանգավոր են՝ վանդակներում կուտակված ապրող, բնութեանից զուրկ բնակչութեան համար, հետզհետե կսկսեն կորցնել իրենց գոյութեան իմաստը: Այդ քաղաքները հարկ կլինի փոխարինելու մի այլ տիպի բնակավայրերով: Նույն ձևով պետք է վորևե այլ տիպի բնակավայրերով փոխարինվեն բնակչութեան կուտակման փոքր, բայց վոչ պակաս չեթե վոչ էլ ավելի վայրերի կենտրոնները— մեր այժմյան գյուղերը:

Այն հարցը, թե մարդկութունը ինչպիսի առավելագույն նպատակահարմար ձևով պետք է ապրի սոցիալիստական հասարակակարգում, բավարար չսփով մշակված չե, մենք պետք է առանց հետաձգելու ձեռնարկենք այդ հարցի ուսումնասիրութեան, քանի վոր մեզ համար այդ հարցը արդեն հսկայական գործնական նշանակութուն ունի: Չնշելով առաջիկայ հարցի կոնկրետ լուծումը, կարելի չե համենայն դեպս վստահ ասել, վոր այժմյան տիպի քաղաքները մեզանում կը վերանան, անկախ այն հանգամանքից, թե, արդյոք, ապագայում ինչ կունենանք մենք նրանց փոխարեն— քաղաք-այգիներ, խոշորագույն արդարև արեւելեան գյուղատնտեսական կոմբինատների տերիտորիաներում կառուցվելիք ֆալանստերներ, վոր չերբեմն ուրվագծում եր սոցիալիստ-ուստպիստ Փուրիեն, թե վորևե այլ տիպի բնակավայրեր: Համենայն դեպս ժամանակակից քաղաքներն այլևս անպետք են սոցիալիստական հասարակութեան հանրայնացված կենցաղի համար, ինչպես նաև անպետք են մեր այստրվա գյուղերը, վորոնք պետք է փոխարինվեն այլ տիպի բնակավայրերով:

Հնարավոր է, արդյոք, այս ծրագիրն իրագործել մի այնպիսի կարծես «կարճ» ժամանակամիջոցում, ինչպես 15 տարին է, արդյոք կարող ենք մենք գտնել դրա համար անհրաժեշտ վիժխարի միջոցներ և ի՞նչ միջոցներ կարող են լինել այդ նպատակի համար մեր արամագրութեան տակ:

Ամբողջ բնակարանային ֆոնդի արժեքը 1927—1928 թ. ԽՍՀՄ պետականը հաշվում է 24 միլիարդ ուրբլի, վորից քաղաքային բնակարանային ֆոնդի արժեքը հաշվվում է 13,3 միլիարդ ուրբլի (հաշված և արդարև արեւելեան բնակարանային ֆոնդը), իսկ գյուղական բնակարանային ֆոնդը— 10,8 միլիարդ ուրբլի: Ընդհանուր պլանի այդ հիպոթեզով բնակարանային ֆոնդի արժեքը 15 տարուց հետո, այսինքն՝ 1942—43 թվին կարող է հասցվել 200 միլիարդ ուրբլու (1927—28 թ. նույն գներով), այսինքն բնակարանային ֆոնդը իր Ֆիզիկական ծավալով կարող է ավելացվել 8,3 անգամ:

1927/28 թ. բնակչութեան յուրաքանչյուր շնչին ընկնում եր ընդամենը 161 ուրբլի բնակֆոնդ, 1942/43 թ. այդ թիվը կավելանա մինչև 1,020 ուրբ., այսինքն՝ մոտավորապես 6,5 անգամ: Սակայն, պետք է նշել, վոր 1927/28 թ. քաղաքի և գյուղի բնակարանային ֆոնդերի միջև մեծ տարբերութուն կար, — քաղաքում բնակչութեան մեկ շնչին ընկնում եր 437 ուրբ. բնակֆոնդ, մինչդեռ գյուղում ընդամենը 91 ուրբլի, այսինքն համարյա 5 անգամ պակաս: Ծիշտ է, գյուղում շնչերն ավելի եժան են գնահատվում, այնպես վոր ֆիզիքական ծավալի

տեսակետից (կամ ըստ հատակի տարածութեան) տարբերութիւնը մի փոքր պակաս կլինի, սակայն այնուամենայնիվ այդ տարբերութիւնը չափազանց մեծ է: Յեթե ընդունենք, վոր 15 տարուց հետո բնակարանային շէնքերի տիպը, վորակը և արժեքը քաղաքում և գյուղում մոտավորապես հավասարվելու յեն, ապա միջին հաշվով բնակչութեան մեկ շնչին կընկնի 1,020 ուրբի բնակֆոնդ, այսինքն քաղաքային բնակչութեան մեկ շնչին ընկնող բնակֆոնդի գումարը կավելանա մոտավորապես 2,5 անգամ, իսկ գյուղական բնակչութեան մեկ շնչին ընկնող բնակֆոնդի գումարը մոտավորապես 11 անգամ. իսկ յեթե քաղաքային բնակչութեան 1 շնչին ընկնող բնակֆոնդի արժեքը ավելանա յերեք անգամ, ապա գյուղական բնակչութեան 1 շնչին ընկնող բնակֆոնդի գումարը կավելանա մոտավորապես 6,5 անգամ: Յեւ մեկ և մյուս դեպքում բնակչութեան 1 շնչին ընկնող բնակֆոնդը բավական զգալի չափով ավելանում է: Իսկ յեթե նկատի ունենանք, վոր միայն 1942/43 թ. մենք կկարողանանք բնակարանային ֆոնդին հատկացնել 35 միլիարդ ուրբի (1927/28 թ. գներով), ապա պարզ կլինի, վոր ընդհանուր պլանի վերջին հնգամյակում մեծ իրոք կկարողանանք քաղաքի գոյութիւնը ունենցող գաղափարի մասը յեւ նրանց սեղ կառուցել նոր տիպի բնակավայրեր, վորոնք հարմարեցված լինեն աշխատանքային հանրայնացված կենցաղին և ստեղծեն այդ կենցաղը: Սակայն յերրորդ վորպես սեպտեմբեր փորձ: Այս ուղղութեամբ ամենամեծ արդունքներն, ըստ յերևույթին, կարող են ստացվել շորրորդ հնգամյակում, վորի վերջում, իմ հաշիվներով, բնակարանային ֆոնդը կարող է ավելացվել մինչև 600 միլիարդ ուրբի (1927--28 թ. անփոփոխ գներով), այսինքն կավելանա մոտավորապես 25 անգամ, 1927--28 թ. համեմատութեամբ, իսկ կոմունալ տնտեսութեան հիմնական ֆոնդերը կարող են ավելացվել մինչև 100 միլիարդ ուրբի (նույն գնահատութեամբ), այսինքն՝ կարող են 20 անգամ ավելացվել 40 անգամ: Չորրորդ

Այսպիսով, մենք է վիճակի կլինենք ավելի կամ պակաս բավարար չափով հիմնովին փոխելու ՍՍՀՄ աշխատավորութեան բնակարանային պայմանները, «ջնջել յերկրի յերեսից» բոլոր գոյութիւն ունեցող քաղաքները և գյուղերը՝ իրենց այսուրեւ գրութեամբ և նրանց փոթարեն կառուցել նոր բնակավայրեր, վորոնք հարմարեցված լինեն հանրայնացված կենցաղին և ստեղծեն այդ կենցաղը: Սակայն յերրորդ վորպես սեպտեմբեր փորձ: Այս ուղղութեամբ ամենամեծ արդունքներն, ըստ յերևույթին, կարող են ստացվել շորրորդ հնգամյակում, վորի վերջում, իմ հաշիվներով, բնակարանային ֆոնդը կարող է ավելացվել մինչև 600 միլիարդ ուրբի (1927--28 թ. անփոփոխ գներով), այսինքն կավելանա մոտավորապես 25 անգամ, 1927--28 թ. համեմատութեամբ, իսկ կոմունալ տնտեսութեան հիմնական ֆոնդերը կարող են ավելացվել մինչև 100 միլիարդ ուրբի (նույն գնահատութեամբ), այսինքն՝ կարող են 20 անգամ ավելացվել 40 անգամ: Չորրորդ

հնգամյակում, վոր յես արդեն մեր գոյութեան սոցիալիստական շրջանի մեջ էմ հաշվում, մարդկային գոյութեան բոլոր բնակարանային պայմանների հիմնական վերակառուցման աշխատանքները կարող են բացառիկ վիթխարի ծախսով կատարվել և այնպիսի արդունք կտան, վորը այժմ մինչև անգամ դժվար է մոտավորապես պատկերացնել:

**բ. Աշխատավորների կուլտուրական մակարդակի բարձրացումը.**

Հանրորեն պարտադիր աշխատանքից 21 տարեկանից փոքր բոլոր սնձանց աշխատելու խնդիրը, գիտութիւնն ու տեխնիկական գիտելիքները ամենալայն չափերով աշխատանքի բոլոր ձևերում տարածելու անհրաժեշտութիւնը և նոր մարդուն, սոցիալիստական կուլտուրա կառուցող նոր մարդուն ստեղծելու խնդիրը, այս ամենը պահանջում է չափազանց մեծ ուշադրութեամբ վերաբերվել կուլտուրական հատվածին և մեծ ծախքեր կատարել ընդհանուր պլանի ժամանակաշրջանում:

Ամենից առաջ, պետք է զգալի չափերով ավելացնել բոլոր մասնագիտութիւնների ու աստիճանների զարգացման հաստատութիւնների քանակը, այլև լավացնել նրանց կահավորութիւնն ու սարքը: Շատ մեծ չափերով պետք է ավելացնել գիտական ինստիտուտների, լաբորատորիաների և համապատասխան այլ հիմնարկների թիվը: Սրա համեմատ պետք է բավականաչափ ավելանա նաև ժողովրդական լուսավորութեան հատվածի հիմնական ֆոնդը (գույքը): Այդ հիմնական ֆոնդը 1927/28 թ. գնահատվում է 2 միլիարդ ուրբի. 1942--43 թ. նա կարող է ավելացվել մինչև 30 միլիարդ ուրբի իր ֆիզիքական ծախսով (նույն գնահատութեամբ), այսինքն՝ 15 անգամ: Կատարված մոտավոր հաշիվներով 1942--43 թ. լուսավորութեան հատվածի հիմնական աշխատանքները մոտավորապես կկազմեն 6,7 միլիարդ ուրբի 1927--28 թ. գներով, այսինքն՝ ավելի քան յերեք անգամ կգերազանցեն լուսավորութեան հիմնական ֆոնդի արժեքից: Չորրորդ հնգամյակում այդ աշխատանքները կարող են իլ ավելի վիթխարի չափերի հասցվել 1947/48 թ., 20 տարի հետո լուսավորութեան հատվածի հիմնական աշխատանքները կարող են հասնել 16 միլիարդ ուրբու մեկ տարվա ընթացքում, իսկ լուսավորութեան հիմնական ֆոնդի արժեքը (1927--28 թ. գներով) կհասնի 57 միլիարդ ուրբու, այսինքն 20 տարվա ընթացքում կավելանա 35 անգամից էլ ավելի:

Ժողովրդական լուսավորութեան ծախքերը վորոնք 1927--28 թ. կազմում են մոտավորապես 750 միլիոն ուրբի, 15 տարուց հետո կարող են հասնել 16 միլիարդ ուրբու, այսինքն ավելանալ 20 անգամ,

բնակչութեան մի շնչին ընկնող ծախքի գումարը, վոր 1927—28 թ. 5 ուրբի յեր, 15 տարուց հետո կհասնի 82 ուրբու, այսինքն կավելանա 16,5 անգամ: Լուսավորութեան ծախքերի այս հսկայական աճումը, իհարկե, վոչ միայն քանակապես, այլ նաև վորակապես շատ մեծ չափով հիմնական փոփոխութեան կենթարկի լուսավորութեան գործը և կբարձրացնի այնպիսի աստիճանի, վորը միջանի անգամ կգերազանցի լուսավորութեան գործի այժմյան մակարդակից ամենաառաջավոր կապիտալիստական յերկրներում:

Լուսավորութեան գործը, իհարկե, հիմնված պետք է լինի ձրի ուսուցման սկզբունքների վրա: Առաջիկ հարց կարող է համարվել միայն այն, թե հնարավոր կլինի, արդյոք, այդպիսի ծախքերով բոլոր յերեխաներին ամենավաղ հասակից հասարակականորեն դաստիարակել պետութեան հաշվին (հաշված սնունդը, հագուստը և այլն): Ըստ յերևութիւնի, այդ միջոցները բավարար չեն լինի: Ուստի, կարելի չէ յենթադրել, վոր կամ 15 տարուց հետո անհատական դաստիարակութեան վոչնչացման և դաստիարակութեան լիակատար հանրայնացման պրոցեսը դեռ ամբողջովին ավարտված չի լինի, կամ, յեթե դաստիարակութեան հանրայնացման պրոցեսը լիովին ավարտված լինի, ապա, ըստ յերևույթի, այդ ժամանակ ծնողները դեռ լիովին ազատված չեն լինի իրենց յերեխաների պահպանման համար վորոշ ծախքեր անելու պարտականութունից, ընդ վորում այդ ծախքերը վորոշակի մուծանքների ձևով նրանք կվճարեն հոգուտ հասարակական դաստիարակութեան պետական ֆոնդի: Սակայն այդ դրութիւնը կարող է շատ կարճ ժամանակով տեղի ունենալ, — ընդամենը մի քանի տարի, քանի վոր 20 տարուց հետո արդեն, 1947/48 թ. դաստիարակութեան և լուսավորութեան տարեկան ծախքերը կարող են ավելացվել մինչև 63,5 միլիարդ ուրբի (բնակչութեան մեկ շնչին 279 ուրբի), այսինքն կարող են այնպիսի չափերի հասնել, վոր արդեն կարելի լինի յերեխաների հասարակական դաստիարակութիւնը պետութեան հաշվին կատարել:

Բնական է, վոր այդ պայմաններում բնակչութեան կուլտուրական մակարդակը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կարող է մեծ չափերով բարձրանալ: Յեթե պարտադիր ուսում ասելով՝ առաջավոր կապիտալիստական յերկրներում հասկացվում է բնակչութեան ամբողջ մասնաչի պարտադիր տարրական կրթութիւն ստանալը, յեթե մենք այժմ ձգտում ենք առաջին հերթին՝ վերացնել անգրագիտութիւնը, — ցարիզմի այդ բարբարոսական մնացորդը, — ապա 15 տարուց հետո մենք կկարողանանք պարտադիր ուսումը կիրարկել ամենվայն

այսպես կոչված, միջնակարգ դպրոցները—9-ամյակների և տեխնիկումների ծրագրերի ծավալով:

#### գ) Բճակչութեան առողջութեան բարելավումը.

Բնակչութեան առողջութեան բարելավումը ամենից առաջ կախված է այն պայմաններից, վորոնց մեջ նա ապրում ու աշխատում է: Ուստի, բանվորական որը 8 ժամից 5 ժամ դարձնելով, ձեռնարկութիւններում աշխատանքի ավելի սուղը պարագաներ ստեղծելով և բնակարանային պայմանները հիմնովին փոխելով, մենք արդեն բավականաչափ բարելաված կլինենք բնակչութեան առողջութիւնը: Սակայն մարդկութեան ֆիզիքական առողջութեան հիմնական բարելավման պրոցեսը համեմատաբար դանդաղ պրոցես է: Ուստի, հիվանդութիւնների դեմ պայքարելու, նրանց կանխելու և նրանց հետևանքները վերացնելու հոգսը դեռ յերկար ժամանակ աշխատավորների պետութեան ամենակարևոր խնդիրներից մեկն է լինելու:

Առողջապահութեան ծախքերը 1927/28 թ. կազմել են մոտավորապես 550 միլ. ուրբի, կամ բնակչութեան շնչին 3 ու. 68 կոպ: Այս նախագծի հաշիվներով այդ գումարը 15 տարուց հետո կարող է հասնել մինչև 9,8 միլիարդ ուրբու, այսինքն՝ մոտավորապես ավելանալ 18 անգամ, (իսկ բնակչութեան մի շնչին 51 ու., կամ 14 անգամ). իսկ 20 տարուց հետո—28,5 միլիարդ ուրբի, այսինքն՝ ավելի քան 50 անգամ (բնակչութեան մի շնչին 125 ու., կամ 34 անգամ ավելի):

Հսկայական քանակութեամբ սանատորիումներ, հանգստի տներ, բուժավայրեր, կլինիկաներ, ամբուլատորիաներ, դիսպանսերներ և այլ հիմնարկներ են կառուցվելու: Յեթե այժմ մենք սանատորիումներն ու հանգստի տներն ենք ուղարկում աշխատավորութեան բոլորովին աննշան տոկոսը, ապա 15 տարուց հետո նրանք պետք է այնպիսի քանակութեամբ ծավալվեն, վորպեսզի հնարավոր լինի այնտեղ ուղարկել յեթե վոչ բոլոր աշխատավորներին, աշակերտ-ուսանողներին և յերեխաներին, ապա գեթ նրանց մեծ մասին: Այս հաշվով չես նախագծում առողջապահութեան հիմնական ֆոնդի ավելացում 1,07 միլիարդ ուրբուց մինչև 17 միլիարդ ուրբի 1942/43 թ. համար, իսկ 20 տարուց հետո մինչև 50 միլիարդ ուրբի (1927/28 թ. գնահատութեամբ), այսինքն՝ համարյա 50 անգամ:

#### գ) Մոցիալական ապահովութիւն.

Գործազրկութեան լիակատար վերացումը և աշխատանքի իրավունքի սոցիալիստական սկզբունքի իրագործումը անհրաժեշտ են

զարձնում այն բոլոր անձանց սոցիալական ապահովագրությունը, վորոնց աշխատանքային հասակն արդեն լրացել է, վորոնք ի ծնն կամ չերեխայական հասակից անաշխատունակ են կամ հաշմանդամ, Վորովհետև ըստ ընդհանուր պլանի այս ուրվագծի յենթադրվում է վոր 15 տարուց հետո պարտադիր աշխատանքային հասակը պետք է լինի 21-ից մինչև 49 տ. հասակը, ուստի բոլոր անձինք, սկսած 50 տարեկան հասակից, իրավունք կունենան պետությունից լիակատար սոցիալական ապահովություն ստանալու:

Ներկայումս սոցիալական ապահովության վրա ծախսվում է մոտավորապես 500 միլ. ուրբլի, այսինքն՝ բնակչության մի շնչին 3 ու 34 կոպ.: 1942/43 թ. այդ ծախքերը կարող են ավելանալ մինչև 35 միլիարդ ուրբլի (70 անգամ), կամ այն ժամանակվա բնակչության մի շնչին 179 ուրբլի: Այս գումարը հնարավորություն կտա ապահովելու պարտադիր աշխատանքի տարիքը լրացրած անձանց այնպես, վոր նրանք մոտավորապես կյանքի նույն մակարդակի վրա գտնվեն, ինչպես և միացած բոլոր աշխատավորները: 20 տարուց հետո պետության կողմից սոցիալական ապահովության վրա ծախսվող գումարը կարող է ավելացվել մինչև 50 միլիարդ ուրբլի (այսինքն՝ 100 անգամ ավելի, քան 1927/28 թ. գումարը), վորով մի շնչին կընկնի մոտավորապես 220 ուրբլի: Հնարավոր է, վոր այդ ժամանակ պարտադիր աշխատանքի հասակը ել կըճատվի և վորոշ չափով իջնի 50 տարուց:

Սակայն, պետք է նկատի ունենալ, վոր սոցիալական ապահովությունը, վոչ թե անաշխատունակների ապահովությունն է, այլ պետության կողմից այն աշխատավորների ապահովությունը, վորոնք ազատված են պարտադիր հաստրակական աշխատանքից: Բնական է, վոր 50 տարին լրացնելուց հետո ևս բոլոր ցանկացողները հնարավորություն կունենան աշխատելու, և անշուշտ, նրանցից շատ շատերը կաշխատեն, վորովհետև աշխատանքը հետզհետե ավելի ու ավելի բնական պահանջ կըրա՞ն մարդու համար, կըրա՞ն ևս բավականություն և վոչ թե բեռ, սակայն նրանք կարող են զբաղվել այն աշխատանքով, վոր նրանց հետաքրքրում է, և կարող են աշխատանքի համար ընտրել և աշխատանքի նվիրել այնքան ժամանակ, վորքան իրենք կկամենան:

ԳՆՈՒԽ XV

ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

Նախորդ պլանում մենք խոսեցինք այն անհրաժեշտ ներդրումների մասին, վորոնք պետք է կատարվեն ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերում, և այն ծախքերի մասին, վորոնք անհրաժեշտ են աշխատավորների կուլտուրական և այլ պահանջները բավարարելու համար (լուսավորություն, առողջապահություն, սոց. ապահովություն, բնակարանային շինարարություն և այլն): Այս ճյուղերից յուրաքանչյուրի համար ներդրումների բավական խոշոր գումարներ են նշված: Բնականաբար, հարց է ծագում, թե արդյոք պետությունը միջոցներ կունենա՞ այսպիսի հսկայական ներդրումներ անելու համար:

Այդ հարցին պատասխանելու համար, ամենից առաջ, պետք է հաշվել ավյալ տարվա ընթացքում կատարվելիք անհրաժեշտ ներդրումների ու ծախքերի ընդհանուր գումարը և ապա համեմատել նույն տարում հնարավոր ժողովրդատնտեսական կուտակումների ընդհանուր գումարի հետ. այլ խոսքով, պետք է ժողովրդատնտեսական հաշվեկշիռ կազմելու փորձ անել:

Ժողովրդական տնտեսության հաշվեկշիռի հարցը ամեն մի հեռանկարային պլանի հիմնական հարցերից մեկն է, սակայն այս հարցը միաժամանակ նաև ամենադժվար հարցերից մեկն է: Բավական է հիշել, վոր մենք դեռ չունենք ժողովրդական տնտեսության հաշվեկշիռ մեր զարգացման նախորդ տարիներից վորվե մեկի համար: Բավական է, որինակ, հակադրել, համեմատել թեկուզ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի վերաբերյալ այն ավյալները, վորոնք հրատարակված են ԽՍՀՄ Պետպլանի կողմից 1927. 28 թ. ստուգիչ թվերի մեջ, այն ավյալների հետ, վորոնք բերված են 1928. 29 թ. ստուգիչ թվերի մեջ, վորպիսով պարզ լինի, թե վորքան անկայուն են մեր հաշիվները անցած տարիների այնպիսի հիմնական տարրերի նկատմամբ, ինչպես ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերի հիմնական ֆոնդերն են: Բնական է, վոր հաշվեկշիռի ամեն մի կառուցվածք ընդհանուր պլանում կարող է միայն չափազանց պայմանական նշանակություն ունենալ: Հենց այդ պատճառով էլ չես յերբեք չեմ դիմել հաշվեկշռային մեթոդի ուղնությանը ընդհանուր պլանի խնդիրներին նվիրված եմ նախնական ուրվագծում,

վոր հրատարակված է «Սոցիալիզմի կառուցումը ընդհանուր պլանի սեփական խնդիրն է» հոդվածում («Торж. Пром. газета» — 1928 թ. նոյեմբերի 7-ին):

Այս ավելի մանրամասնորեն կազմված ու հիմնավորված վարիանտում, գիտակցելով այսպիսի հաշիվների ամբողջ պայմանականությունը, չես այնուամենայնիվ անհրաժեշտ եմ գտնում վորոշ փորձ անել՝ տալու ժողովրդական տնտեսության կուտակումների և նրանց բաշխման հաշիվները մոտավոր ուրվագիծը, վորպեսզի թեկուզ ամենակոպիտ հաշիվներով պարզեմ, թե ժողովրդական տնտեսության կուտակումները ինչ աղբյուրներ են ունենալու ընդհանուր պլանի վերջին, և ինչ ուղղություն պետի տրվի այդ կուտակումներին աշխատավորների պետության առաջ այդ ժամանակ զբաղված խնդիրները իրագործելու համար: Վերոհիշյալ հաշիվները չես կատարում եմ վոչ թե միայն 1942-43 թ., այլ նաև 1947-48 թ. համար, վորպեսզի ցույց տամ, թե ընդհանուր պլանի վերջին տարին (1942-43 թ.) մի ինչ վոր վերջին սահման չե, այլ մի անցողիկ, ավելի շուտ՝ նույնիսկ նոր շրջանի սկզբնական տարի:

Վորպես յեկակտային տարվա նյութ, չես վերցնում եմ 1928-29 թ. վերաբերյալ Պետպլանի կազմած ստուգիչ թվերի «ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը» աղյուսակը, վորպես վերջին տվյալներ, վորոնց վրա կարելի չե հիմնվել այժմ:

**ա) Ժողովրդական տնտեսության կուտակումները չեվ պետական ծախսերը**

Սկսեմ ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերից (հիմնական գրամպլանից) և այն անհրաժեշտ ներդրումներից, վորոնք պետք է կատարվեն ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում:

Ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը վերը բերված մոտավոր հաշիվների համաձայն 25 տարվա ընթացքում 62,5 միլիարդ ուրբուրաց ավելանալու և հասնելու չեն 670 միլիարդ ուրբուրաց, այսինքն՝ ավելանալու չեն համարյա 11 անգամ, իսկ 20 տարվա ընթացքում՝ մինչև յերկու չեռիլիոն ուրբուրաց, այսինքն՝ ավելանալու չեն մոտավորապես 32 անգամ:

Ամենամեծ չափով ավելանալու չեն արտադրական—բաշխման հատվածի հիմնական ֆոնդերը, վորոնց տեսակաբար կշիռը 15 տարվա մեջ 51,1% -ից բարձրանում է մինչև 56,7% և կուտակողական հատ-

**Աղյուսակ 19.**

**Ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդեր չեվ հիմնական ներդրումները.**

ԺՈՂՎՐԴ. ՏՆՏ. ՃՅՈՒՂՆԵՐԸ	1927/28 թ.		1942/43 թ.			1947/48 թ.		
	Հիմնական ֆոնդեր	Հիմնական ներդրումներ	Հիմնական ֆոնդեր		Հիմնական ներդրումներ	Հիմնական ֆոնդեր		Հիմնական ներդրումներ
			1927/28 թ. գնելով	1942/43 թ. գնելով		1927/28 թ. գնելով	1947/48 թ. գնելով	
			(Միլ. ուրբ.)					
1. Արդյունաբ. . . . .	9.500	1.666	137	41,1	12,8	500,5	110,1	37,6
Վորից՝ արդյուն. բնակ. ֆոնդ . . . . .	1.159	144	—	—	—	—	—	—
2. Ելեկարոֆիկացիա	840	340	30	8,9	2,9	100	22,0	7,5
3. Գյուղատնտեսութ. (առանց անասուն.)	9.973	1.132	80	24,0	6,5	228	50,0	8,8
4. Տրանսպորտ . . . . .	11.806	907	115	34,5	9,3	315	69,3	26,0
Վորից՝ յերկաթուղ. Ջրային . . . . .	10.270	707	50	15,0	4,0	120	26,4	9,0
Տեղական . . . . .	755	123	10	3,0	0,9	30	6,6	2,5
Ավիոտրանսպորտ . . . . .	781	80	50	15,0	4,0	150	33,0	13,0
5. Ժողովրդ. կապ . . . . .	—	—	5	1,4	0,5	19	3,3	1,5
6. Առևտուր (բաշ- խում) . . . . .	285	41	3	0,9	0,3	7	1,5	0,7
722	208	15	4,5	1,0	22	4,8	0,2	
Ընդամենը (1—6)	33.126	4.294	380	113,9	32,8	1.172,5	257,8	81,8
Առանց արդ. բնակ. ֆոնդի	31.967	4.150	—	—	—	—	—	—
7. կոմ. տնտեսութ. . . . .	2.491	232	40	12	2,6	100	22	10,0
8. Բնակ. ֆոնդ (ամբ.) Վորից բաղաբաշխ (հաշիվ. արդ. բնակ. ֆոնդը) . . . . .	24.122	1.684	200	60	10,5	600	132	40,0
13.289	763	—	—	—	—	—	—	—
10.833	921	—	—	—	—	—	—	—
ԳՈՒՄԱՐ . . . . .	26.613	1.916	240	72	31,1	700	104	50,0
9. Լուսավորութ. . . . .	2.013	97	30	9,0	2,0	75	16,5	3,5
10. Առողջապահ. . . . .	1.118	99	17	5,1	1,8	50	11,0	3,5
11. Վարչական ապար. . . . .	745	116	3	0,9	0,9	4,5	1,0	0,1
ԳՈՒՄԱՐ . . . . .	3.876	312	50	15,0	3,9	129,5	28,5	7,1
ԸՆԴԱՄՄԵՆԸ	62.456	6.378	670	200,9	49,8	2002,0	440,2	138,9

վածի ֆոնդերը, վորոնց տեսակարար կշիռը 5,1<sup>0</sup>/<sub>0</sub>-ից բարձրանում է մինչև 7<sup>0</sup>/<sub>0</sub>, կոմունալ-բնակարանային ֆոնդերի տեսակարար կշիռը 42,6<sup>0</sup>/<sub>0</sub>-ից կիջնի մինչև 35,8<sup>0</sup>/<sub>0</sub>, վսկ վարչական ֆոնդերը—1,2<sup>0</sup>/<sub>0</sub>-ից կիջնի մինչև 0,5<sup>0</sup>/<sub>0</sub>։

ժողովրդական տնտեսության հիմնական ներդրումների ընդհանուր գումարը, վոր 1927-28 թ. կազմում է 6,4 միլիարդ ռուբլի, 15 տարուց հետո ավելանում է մոտավորապես մինչև 50 միլիարդ ռուբլի դրամական արտահայտությամբ (ֆիզիքական ծավալով բավական ավելի), իսկ 20 տարուց հետո ավելանում է մինչև 140 միլիարդ ռուբլի (ըստ ֆիզիքական ծավալի, այսինքն՝ 1927-28 թ. գնահատությամբ այդ կազմում է 635 միլիարդ ռուբլի, այսինքն՝ 100 անգամ ավելի, քան 1927—28 թ.)։

Սակայն հիմնական կապիտալի (հիմնական ֆոնդերի) ներդրումները կազմում են միայն մի մասը այն ծախքերի, վոր պետութունը կատարում է ժողովրդական տնտեսության վրա. նրանց պետք է ավելացնել նաև շրջանառու ֆոնդերի (շրջանառու միջոցներ) ներդրումները. նյութական շրջանառու ֆոնդերի ներդրումները 1942-43 թ. համար հաշվվում է մոտավորապես 11 միլիարդ ռուբլի, իսկ 1947—48 թ. համար—մոտավորապես 26,5 միլիարդ ռուբլի։ Պետության բոլոր ծախքերի ամբողջ գումարն ստանալու համար դրան պետք ավելացրել նաև սոցիալ-կուլտուրական և վարչական ծախքերը, վորոնց չափերի մասին խոսք չեղավ վերևում։ Այդ ժամանակ պետական ծախքերի ընդհանուր գումարը կարտահայտվի այն թվերով, վորոնք ցույց են տրվում ված 20 աղյուսակում (տես 109 յեր.)։

Ինչպես չերևում է բերված հանրագումարային թվերից, 1942-43 թ. ժողովրդատնտեսական ծախքերը կկազմեն համապետական ծախքերի ընդհանուր մասսայի կեսից մի փոքր պակաս (45<sup>0</sup>/<sub>0</sub>)։ Սոցիալ-կուլտուրական ծախքերը մի փոքր ավելի կլինեն ժողովրդատնտեսական ծախքերից և առանձնապես խոշոր հոգված կկազմի սոցիալական ապահովության ծախքը—35 միլիարդ ռուբլի, կամ բոլոր պետական ծախքերի մեկ քառորդից ավելի։

20 տարուց հետո, այսինքն՝ 1947-48 թ. ժողովրդական տնտեսության ծախքերի բաժինը կաճի մինչև 51<sup>0</sup>/<sub>0</sub>, վարչական և այլ ծախքերի բաժինը 1942-43 թ. համեմատությամբ կկրճատվի յերկու անգամ. մեծ չափով կնվազի սոցիալական ապահովության ծախքերի բաժինը (չնայած մեծ, բացարձակ աճմանը—35 միլիարդից մինչև 50 միլիարդ ռուբլի), իսկ ժողովրդական լուսավորության և առողջապահության ծախքերը հսկայական չափերով կաճեն թե հարաբերաբար և

թե բացարձակապես, վորովհետև այդ ժամանակ բոլոր չերեխաների դաստիարակութունը կկատարվի պետական միջոցների հաշվին, և կսկսվեն չերկրի առողջացման վիթխարի աշխատանքները։

Աղյուսակ 20

Պետական ծախքեր

ԾԱՆՔԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ	1942/43 թ.		1947/48 թ.	
	Միլիարդ ռուբլի	Տեսակ- կշիռը	Միլիարդ ռուբլի	Տեսակ- կշիռը
I ժողովրդատնտես.	45.1	45.0	158.2	50.8
II Սոցիալ-կուլտուր.	60.8	48.0	142.0	45.7
Վորից՝				
Լուսավ. և առողջ.	25.8	20.4	92	29.6
Սոցիալ. ապահով.	35.0	27.6	50	16.1
III Վարչական և այլ.	8.8	7.0	10.7	3.5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ . . .</b>	<b>126.7</b>	<b>100.0</b>	<b>311.0</b>	<b>100.0</b>

բ) Պետական ռեսուրսյաճ կուսակումները

Պետական ծախքերի մատնանշված չափերին պետք է համապատասխանեն նաև պետական չեկամուտների վորոշ չափերը. սակայն ամենից առաջ անհրաժեշտ է սահմանել պետական չեկամուտների հիմնական աղբյուրները, իսկ նրա համար պետք է հաշիվ տալ ինքն իրեն, թե 15 տարուց հետո պետութունը ինչ չափով կտարբերվի այսօրվա պետութունից։

Հիմնական տարբերությունն այն կլինի, վոր 15 տարուց հետո արտադրության բոլոր գործիքները, առանց բացառության, հասարակական (պետական) սեփականություն կլինեն, քանի վոր մանր տնտեսությունը բոլորովին անհետացած կլինի, իսկ այժմյան մանր անհատական արտադրող-գյուղացիների մասսան բանվոր դարձած կլինի, կամ, ավելի ձիշտ, աշխատելիս կլինի պետական կամ կոլլեկտիվ խոշոր դյուրաստնտեսական ձեռնարկություններում, նույն հիմունքներով, ինչ-



պէս արդջունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում և այլ ասպարիզում աշխատող բանվորները կամ աշխատավորները: Պետութունը ամբողջ ժողովրդական անտեսութեան բոլոր հիմնական ֆոնդերի միակ տեր ու տնօրենը կլինի: Միաժամանակ պետք է հաշվի առնել և այն հանգամանքը, վոր 15 տարուց հետո աշխատավարձի տարբերականությունը (դիֆերենցիացիա) կամ արդեն վերացած կըլինի, կամ շատ նեղ սահմաններում գոյութուն կունենա:

Այդ պայմաններում, միանգամայն ակնհայտ է, վոր աննպատակահարմար կլինեն, վորպես պետական լեկամուտների հիմնական աղբյուր, հարկեր սահմանել, վորովհետև այդ ժամանակ աշխատավորների գոյութեան հիմնական աղբյուրը պետությունից ստացած աշխատավարձը կկազմի, իսկ նրանց վրա հարկ դնել—կնշանակի ուղղակի նրանց աշխատավարձի մի մասը պահել. ուրիշ խոսքով՝ այդ միևնույնն էր, թե անվանական աշխատավարձը պակասեցվի, իսկ այդ կարելի չի առնել պարզ ձևով, առանց անխմաստ հաշվապահական ձևականություններ ու հաշիվներ կատարելու: Անխմաստ կլինի նաև պետական ձեռնարկությունների հարկումը, քանի վոր այդ ժամանակ ամբողջ ժողովրդատնտեսական գույքի տերը և ժողովրդական տնտեսութեան բոլոր կուտակումների միակ տնօրինողը պետությունն է լինելու: Միանգամայն պարզ է, վոր անխմաստ կլինեն նմանապես թողնել լեկամատի այն բազմաթիվ աղբյուրները, ինչպես բաժը, մաքսը, կոճղատուրքը և այլն:

15 տարուց հետո մենք մեր չերկիրը կվերակառուցենք սոցիալիստական հիմունքներով: Դրամական չափանիշը յեթե բոլորովին չանհետանա (կապիտալիստական աշխարհի հետ վորոշ արտաքին տնտեսական կապեր պահպանելու անհրաժեշտութեան հետևանքով), ապա կկորցնի իր ֆետիշային բնույթը. դրամական միավորներից մենք կամ բոլորովին կամ զգալի չափով կանցնենք աշխատանքային միավորների: Ժողովրդատնտեսական կուտակումները բնույթը ևս այն ժամանակ միանգամայն պարզ կլինի ամեն մեկի համար,—աշխատավորը կստանա իր աշխատանքի վոշ թե լրիվ վարձատրութունը, և նրա աշխատանքի արդյունքի այն մասը, վոր կտարվի պետութեան կողմից, — ժողովրդատնտեսական կուտակումների մի մասը կկազմի ու կգործադրվի ժողովրդական տնտեսութեան հետագա ընդլայնված վերարտադրութեան վրա և աշխատավորների կարիքների հասարակական բավարարման վրա (լուսավորութուն, առողջապահութուն, բնակարան, սոցիալական դաստիարակութուն, սոցիալական ապահովութուն և այլն): Աշխատավորների և պետութեան այս պարզ փոխհարաբերութուններն էլ հենց պետք է արտահայտված լինեն պարզ ձևերով:

Կարելի չէ այդ փոխհարաբերութունները սահմանելու հետևյալ չերկու չեղանակը նշել:

Առաջին չեղանակն այն է, վոր աշխատանքի յուրաքանչյուր արդյունք (արդյունաբերութեան արտադրանք կամ գյուղատնտեսութեան արտադրանք, կամ չերկաթուղով վորոշ տարածութեան անցում և այլն, այդ բոլորը միևնույնն է) գնահատվում է վորոշ աշխատանքային միավորներով, վորը անհրաժեշտ է գործադրել այդ արդյունքը արտադրելու համար. սակայն աշխատավորը, արտադրելով որական, չենթադրենք, 30 առարկա, ստանում է միայն, որինակ, 10 առարկայի արժեքին հավասար վարձատրութուն, իսկ մնացած 20 առարկան ստարվում է պետութեան կողմից, կազմում է ժողովրդատնտեսական կուտակում և պետութեան կողմից գործ են դրվում ընդլայնված վերարտադրութեան կամ հասարակական կարիքների վրա:

Մյուս չեղանակն այն է, վոր յուրաքանչյուր աշխատավոր պետութունից վկայական է ստանում իր կատարած հանրորեն-անհրաժեշտ աշխատանքի (պետութեանը սոված աշխատանքային միավորների) մասին, սակայն պետութունը իրեն իրավունք է վերապահում աշխատանքի բոլոր արդյունքները գնահատել այնպես, ինչպես այդ ամենից ավելի նպատակահարմար կլինի ամբողջ հասարակութեան շահերի տեսակետից: Այսպես, որինակ, սուրկաներից մեկը, վորի վրա պետք է գործ դնել, չենթադրենք, մեկ աշխատանքային միավոր, սկստութունը կարող է գնահատել 3 աշխատանքային միավոր, իսկ մի ուրիշ առարկա—1,5 աշխատանքային միավոր. այդ դեպքում 15 աշխատանքային միավորների չափ գործ կատարած աշխատավորը կարող է ստանալ առաջին տեսակի 5 առարկա և չերկրորդ տեսակի 10 առարկա:

Առաջին և չերկրորդ չեղանակների միջև մեծ սկզբունքային տարբերութուն չկա, և հարցը վերաբերում է նրանց կիրարկութեան մեծ կամ փոքր հարմարութեան: Յերկրորդ չեղանակը ինձ ավելի նպատակահարմար է թվում, վորովհետև նա պետութեանը հնարավորութուն կտա կարգավորելու այս կամ այն առարկաների սպառումը, փոփոխելով նրանց գնահատութունը: Ուստի յես կանգ եմ առնում չերկրորդ չեղանակի վրա և իմ հաշիվների մեջ չենում եմ այն տեսակետից, վոր պետութունը աշխատանքի զանազան արդյունքների վրա վորոշ գներ կնշանակի, և յուրաքանչյուր առարկայի նշանակված գնի ու արտադրութեան արժեքի միջև չեղած տարբերութունը կկազմի այն կուտակումը, վոր պետութունը հավաքում է գործադրում է ժողովրդական տնտեսութեան ընդլայնված վերարտադրութեան և աշխա-

տավորների հասարակական սպասարկութան վրա: Այս կուտակման մեջ պետք է հաշվի առնել ամորտիզացիան, այսինքն՝ հիմնական դրամագլխի այն մասը, վորից արտադրվող առարկան է ստացվում, ինչպես նաև այն մասը, վորը այժմ վաստակ է կոչվում: Հարմարության համար այս անունները յես թողնում եմ նաև ապագայի համար:

**Պղտու. 21**

ժողովրդական ցնեսուքյան կուտակումները  
(միլիարդ ուրբիներով)

	1942/43 թ.			1947/48 թ.		
	Ամորտիզ.	Վաստակ	Ընդամենը	Ամորտիզ.	Վաստակ	Ընդամենը
1. Արդյունաբեր.	4,1	47,4	51,5	13,2	142,8	156,0
2. Ելեկտրոֆիլ.	1,0	8,0	9,0	2,7	28,3	31,0
3. Գյուղատնտես.	4,0	12,8	16,8	6,0	39,0	45,0
4. Տրանսպորտ.	2,9	18,9	21,8	8,5	68,5	77,0
5. Ժողովրդակ. կապ.	0,1	0,6	0,7	0,2	1,3	1,5
6. Առևտուր.	0,5	3,5	4,0	0,5	—	0,5
7. Կոմ. տնտես.	1,2	1,3	2,5	—	—	—
8. Բնակ. ֆոնդ.	6,0	2,4	8,4	—	—	—
9. Այլ յեկամ.	—	—	12,0	—	—	—
Ընդամենը	19,4	94,9	126,7	31,1	279,9	311,0

Ժողովրդական տնտեսության կուտակումները 15 և 20 տարուց հետո, ըստ իմ նախագծի, կարտահայտվի մոտավորապես այն մեծություններով, վորոնք բերված են 21 աղյուսակում:

Կուտակման հիմնական մասսան տալիս են արտադրության հիմնական հատվածները—արդյունաբերությունը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը և էլեկտրոֆիլացիան.—1942/43 թ. նրանք տալիս են ամբողջ կուտակման 78<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ 1947/48 թ.—99<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ավելին:

1942/43 թ. ըստ կատարված մոտավոր հաշիվների անհրաժեշտ է

դեռևս թողնել առևտրից, ժողովրդական կապից, կոմունալ տնտեսությունից, բնակարանային ֆոնդից ստացվող վորոշ յեկամուտներ, ինչպես նաև պայմանականորեն թողնել մի քանի այլ յեկամուտներ—Սոցապի կենտր. Վարչությունից, Պետապից ստացվող յեկամուտները, բանկերի կողմից վարկերի համար ստացվող տոկոսները և այլն, քանի վոր ինքնարժեքի իջեցման ժամանակ այդ տարբերը հաշված են կալկուլացիայի մեջ. ավելի ճիշտ կլինեիր ընդունել վոր այդ «այլ» ծախքերը տեղի չեն ունենա, այլ դրա փոխարեն համեմատաբար կավելանա արդյունաբերությունից և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերից ստացվող վաստակը:

1947/48 թ. կարելի յե արդեն նշել, վոր բոլորովին ձրի կլինեն բնակարանը յեվ կոմունալ ծառայությունները, բոլորովին վոնցացված կլինեն «այլ» յեկամուտները յեվ առեվտրից ստացվող վաստակ. կուտակումների միակ հիմնական աղբյուրը կմնան արդյունաբերությունը, ռաբանսպորտը, գյուղատնտեսությունը յեվ էլեկտրոֆիլացիան:

Պետք է նշել, վոր տրանսպորտի խոշոր յեկամուտները գլխավորապես գոյանում են յերկաթուղիների յեկամուտներից (1942/43 թ.—9 միլիարդ և 1947/48 թ.—30 միլիարդ) և տեղական տրանսպորտի, գլխավորապես ավտոմոբիլային տրանսպորտի յեկամուտներից (1942/43 թ.—9,5 միլիարդ և 1947/48 թ.—37 միլիարդ): Ջրային տրանսպորտի այդ տարիների յեկամուտը մոտավորապես հաշվվում է 2,3 միլիարդ և 6 միլիարդ ուրբի, իսկ ավիո-տրանսպորտինը—1 միլիարդ և 4 միլիարդ ուրբի:

4) Պեսական յեկամուտների (կուտակումների) յեվ ծախքերի հաշվեկեիոր.

Ժողովրդական տնտեսության մատնանշված՝ մոտավոր հաշվով կազմած կուտակումների (պետական յեկամուտների) և ժողովրդական տնտեսության ու հասարակական պետքերի վրա կատարվելիք ծախքերի հակադրությունը մեզ տալիս է պետական բյուջեի մոտավոր հաշվեկշիռը այդ բառի լայն, ժողովրդատնտեսական իմաստով:

Այդ հակադրությունը կատարված է 22 աղյուսակում և ակնառուցուց է տրված գրքուչկիս վերջին կցած 15 դիագրամում:

Հավելյալ (անհրաժեշտ ներդրումներից գերազանցող) կուտակումների աղբյուր է համարվում արտադրական-բաշխման հատվածը, վորը 1942/43 թ. տալիս է 61 միլիարդ ուրբի ավելորդ կուտակում, իսկ 1947/48 թ.—206,7 միլիարդ ուրբի: Միաժամանակ պետք է նկատել ՍՄՀՄ 15 տարուց հետո—8

Աղյուս. 22

ժողովրդական ճեփեսուր. կուսակուսման յեկ նրանց բախումները (միլիարդ ռուբլիներով).

	1942/43 թ.			1947/48 թ.		
	Կուսակուսման	Ծախք	Կուսակ. ավելի (+) կամ պակաս (-)	Կուսակուսման	Ծախք	Կուսակ. ավելի (+) կամ պակաս (-)
I. Արտադրակ-բաշխման հատված.						
1. Արդյունար.	51,5	16,1	+ 35,4	156,0	46,9	+109,1
2. Ելեկտրոֆիկ.	9,0	3,4	+ 5,6	31,0	9,0	+ 22,0
3. Գյուղատնտեսութ.	16,8	8,0	+ 8,8	45,0	9,8	+ 35,2
4. Տրանսպորտ	21,8	11,0	+ 10,8	77,0	30,8	+ 46,2
5. Ժողովրդ. կապ	0,7	0,3	+ 0,4	1,5	0,8	+ 0,7
6. Առևտուր	4,0	4,0	—	0,5	7,0	— 6,5
Գումար	103,8	42,8	+ 61,0	311,0	104,3	+206,7
II. Կոմունալ-բնակար.						
7. Կոմուն. տնտես.	2,5	2,8	— 0,3	—	10,6	— 10,6
8. Բնակար. ֆոնդ	8,4	11,5	— 3,1	—	43,3	— 43,3
Գումար	10,9	14,3	— 3,4	—	53,9	+ 53,9
III. Սոցիալ-կուլտուր.						
9. Լուսավորութ.	—	16,0	— 16,0	—	63,5	— 63,5
10. Առողջապ.	—	9,8	— 9,8	—	28,5	— 28,5
11. Սոցիալ. ապահովութ.	—	35,0	— 35,0	—	50,0	— 50,0
Գումար	—	60,8	— 60,8	—	142,0	—142,0
IV. Այլ . . . . .						
12. Վարչական ապարատ	—	5,1	— 5,1	—	5,8	— 5,8
13. Այլ . . . . .	12	—	+ 12,0	—	—	—
14. Պահեստ . . . . .	—	3,7	— 3,7	—	5,0	— 5,0
Ընդամենը այլ	12	8,8	+ 3,2	—	10,8	10,8
Ընդամենը	126,7	126,7	—	311,0	311,0	—

տի ունենալ, վոր այդ հավելյալ կուսակուսման մեջ գերակշիռ դեր է կատարում արդյունաբերութունը, վորը տալիս է կիսից ավելին— 1942/43 թ. 35,5 միլիարդ ռուբ. կամ 58<sup>0</sup>/<sub>10</sub>, իսկ 1947/48 թ. — 109,1 միլիարդ ռուբ. կամ մոտավորապես 53<sup>0</sup>/<sub>10</sub>: Տրանսպորտը՝ 1942/43 թ. 17,7<sup>0</sup>/<sub>10</sub>, իսկ 1947/48 թ. — 22,3<sup>0</sup>/<sub>10</sub>, գյուղատնտեսութունը նույն տարիներում տալիս է 14,4<sup>0</sup>/<sub>10</sub> և 17<sup>0</sup>/<sub>10</sub>, իսկ ելեկտրոֆիկացիան — 9,2<sup>0</sup>/<sub>10</sub> և 10,7<sup>0</sup>/<sub>10</sub>:

1942/43 թ. արտադրական-բաշխման հատվածի և «այլ» յեկամուսների (3,2 միլիարդ) հավելյալ կուսակուսմանը — 61 միլիարդ ռուբլին ծածկում են սոցիալ-կուլտուրական հատվածի 60,8 միլիարդ ռուբլի ծախքերը և կոմունալ-բնակարանային հատվածի ծախքերը, վորոնք յեկամուսներից ավելի լին 3,4 միլիարդ ռուբլով:

1947/48 թ. արտադրական-բաշխման հատվածի հավելյալ կուսակուսմանը — 206,7 միլիարդ ռուբ. ծածկում են մնացած բոլոր պետական ծախքերը, վորից՝ սոցիալ-կուլտուրական հատվածինը — 142 միլիարդ ռուբլի, կոմունալ-բնակարանային հատվածինը — 53,9 միլիարդ ռուբ. և այլ ծախքեր — 10,8 միլիարդ ռուբլի:

Այսպիսով, ժողովրդատնտեսական կուսակուսմանը և պետծախքերի մոտավոր, կոպիտ հաշիվներով կատարվող հակադրութունը ցույց է տալիս, վոր ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերում կատարվելիք այն վիթխարի ներդրումները և բնակչության սոցիալ-կուլտուրական կարիքների սպասարկության այն հսկայական ծախքերը, վորոնց անհրաժեշտության մասին խոսք յեղավ վերևում, կարող են ծածկվել — նույնիսկ վորոշ հավելումով (ռեզերվ) — ժողովրդատնտեսական կուսակուսմանը: Այս կրկին անգամ հաստատում է այն, վոր մեր աղբասուրյան մասին արածված կարծիք անհիմն է, յեկ մեր յերկիրը կապիտալիստական յերկրներից ավելի հեշտ ու արագ կարող է իր ներքին ուժերով սեղծել այնպիսի վիթխարի հարսուրյուններ, վորոնց մասին այժմ դժվար է վորեվ կոնկրետ գաղափար կազմել:

ԳԼՈՒԽ XVI

ՄԵՇ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՆՈՐ ՄԱՐԴ ՍՏԵՂՏԵԼՈՒ ՊՐՈՐԼԵՄԸ

Նոր կյանքը, նույնիսկ նոր կյանքի կառուցումը պահանջում է նաև նոր մարդ. մենք պետք է վերամշակենք մարդուն: Այս, իհարկե, բացառիկ դժվար խնդիր է: Սակայն կենցաղը վորոշում է գիտակցութունը: Քնն կարծիքը, թե մարդը պահպանողական է յեկ դժվար

րուքյամբ և վերամբազման յեճարկվում,—սխալ է. կարելի չէ ասել, Վոր մարդը ինքնա է,—և այդ ճիշտ կլինի, սակայն վոչ այդ բանի կենցաղային իմաստով. տեխնիկական, տնտեսական և սոցիալական լճացման պարագայներում մարդը լճացման ինքնուրույն չէ ձեռք բերում և այդ ժամանակ ել, այսպես ասած, պահպանողական և դառնում: Իր գոյության արագորեն զարգացող տեխնիկական, տնտեսական չեմպիոններում մարդը ձեռք է բերում արագորեն առաջ շարժվելու, արագորեն փոփոխվելու չեմպիոնների փոփոխվող պայմաններին հարմարվելու ինքնուրույն:

Պատմության մեջ մենք որինակներ ունենք, յերբ արմատապես փոխվում են ամբողջ ժողովուրդների հիմնական, իրրթե«ազգային» գծերը: 40-ական թվականների Գերմանիան և ՄԱԿ դարի վերջի Գերմանիան բոլորովին միմյանց նման չեն. սանտիմենտալ գերմանացին յերկրի արագ ինդուստրացման ազդեցության տակ փոխվեց գործարար-գերմանացու, վոր յեռանդ ու նախաձեռնություն ունի: Ֆրանսիական բուրժուազիան իմպերիալիստական պատերազմից հետո, խլելով գերմանացիներից հարուստ ամխային և յերկաթահանքային շրջանը, տրագ կերպով այդ հիմքի վրա զարգացնելով ծանր արդյունաբերությունը, միաժամանակ փոխում է և իր «ազգային» գծերը.— գերմանական ամխի ու յերկաթի հետ այդ բուրժուազիան, կարծես, գերմանացիներից վերցրել ու յուրացրել է նաև նրանց հոգեբանական գծերը: Հսկայական փոփոխություններ են տեղի ունեցել նաև մեզանում համաշխարհային պատերազմից սկսվող ժամանակամիջոցում և, հատկապես, խորհրդային իշխանություն գոյություն 11 տարվա ընթացքում. բանվորական և գյուղացիական յերիտասարդությունը, վոր անցել է համաշխարհային և քաղաքացիական պատերազմի դպրոցը և վերականգնման շրջանի դպրոցը, արդեն ամենևին նման չի այն մարդկանց, վորոնք 15-12 տարի առաջ բնակչություն գլխավոր մասսան եին կազմում:

Սակայն, չեմվոր, մենք դեռ նոր ենք թևակոխել այն շրջանը, դեռ նոր ենք սկսել այն պրոցեսը, վորը պետք է հիմնովին փոխի մեր կյանքի բոլոր պայմանները: Այժմ մենք սկսում ենք աշխարհում չտեսնված մեծ կառուցման մի շրջան. ընդհանուր պլանի շրջանը այն «մեծ աշխատանքների դարաշրջանի» մի մասն է, վորը նկարագրել է Մ. Բոգդանովը իր «Կարմիր աստղ» ուտոպիայի մեջ, և վորը պետք է դառնա յերկրագնդի արմատական վերակառուցման դարաշրջանը, պետք է դառնա մարդկություն գոյություն բոլոր նյութական ու հոգեվոր պայմանների վերամշակման դարաշրջանը:

Ի՞նչ մասշտաբ ունեն այդ «մեծ աշխատանքները»: Այդ մասին քիչ թե շատ կոնկրետ պատկերացում կազմելու համար բավական է համեմատել այն, ինչ վոր մենք այժմ ունենք, նրա հետ, ինչ վոր այս հիպոթեզով յենթադրվում է 15 տարուց հետո: Միայն 1942/43 թ., մեկ տարվա մեջ, մենք պետք է հետևյալ աշխատանքները կատարենք:—

Արդյունաբերության մեջ մենք պետք է այնքան գործարաններ կառուցենք, վորոնց արժեքը 1927/28 թ. գներով, (հետևյալպես, և նրանց ֆիզիկական ծավալը) 5-6 անգամ պետք է գերազանցի այժմ գոյություն ունեցող բոլոր գործարանների արժեքից, իսկ հիմնական աշխատանքների ծավալը 1927/28 թ. կգերազանցի 33 անգամ, Այլ խոսքով չեթե խոշոր արդյունաբերության հիմնական շինարարությունը 1926/28 թ. իր ծավալով ու չափերով հավասար եր մոտավորապես 7,5 Մազնիտոգոբսկի գործարանի\*, ապա միայն 1942/43 թ. հիմնական շինարարությունը հավասար է լինելու մոտավորապես 240 Մազնիտոգոբսկի գործարանի:

Ելեկտրոշինարարության ասպարիզում միայն 1942/43 թ. մենք պետք է այնպիսի մեծ քանակություն կայաններ ու ցանցեր կառուցենք, վորը իր ֆիզիկական ծավալով 11,5 անգամ գերազանցելու յե 1927/28 թ. Ելեկտրոֆիկացիայի ամբողջ հիմնական կապիտալից: Յեթե Ելեկտրոֆիկացիայի հիմնական ծախքերը 1927/28 թ. իրենց ծավալով կարող են հավասարվել 1,7 Դնեսպրոստրոյի, ապա 1942/43 թ. Ելեկտրոֆիկացիայի ծավալը հավասար է լինելու 48 Դնեսպրոստրոյի:

Գյուղատնտեսության մեջ, վորտեղ 1927/28 թ. 1,130 միլ. ուրբ. հիմնական աշխատանքները փոշիացած ձևով կատարվում են միլիոնավոր գյուղացիական տնտեսություններում, 1942/43 թ. խոշոր տնտեսություններում կատարվելու յեն մոտավորապես 19 անգամ ավելի աշխատանքներ, վորոնք հավասար են գյուղատնտեսության այժմյան հիմնական կապիտալի կրկնապատիկ գումարին (առանց անասունների և բնակելի շենքերի՝ թե մեկ և թե մյուս տարում):

Յերկաթուղային տրանսպորտում հիմնական աշխատանքները 15 տարուց հետո իրենց ֆիզիկական ծավալով ավելանալու յեն մոտավորապես 19 անգամ. կառուցվելիք նոր յերկաթուղիների յերկարությունը 1942/43 թ. լինելու յե մոտավորապես 60 հազար կիլոմետր, վորը հավասար է մոտավորապես 40 Թուրքեստան-Սիբերի յերկաթուղու:

\*) Ուրալում կառուցվող խոշորագույն մետաղածուլական գործարան, վորի արժեքը ըստ նախահաշի (1927/28 թ. գներով) հավասար է 170 միլ. ուրբու, իսկ սարեկան արտադրողականությունը—650-750 հազար տոնն թուջի:

դու, կամ միևնույնն ե՛թե մի տարվա ընթացքում կառուցվի Սի-  
բիրի գլխավոր յերկաթուղադժից 4 անգամ ավելի:

Տեղական տրանսպորտում հիմնական աշխատանքները 1942|43 թ.  
իրենց ֆիզիկական ծավալով գերազանցելու յեն 1927|28 թ. հիմնա-  
կան աշխատանքներից ավելի քան 150 անգամ:

Կոմունալ տնտեսություն մեջ 1942|43 թ. կատարվելիք հիմնական  
աշխատանքների գումարը 3,5 անգամ գերազանցելու յե կոմունալ  
տնտեսության ամբողջ հիմնական կապիտալի այժմյան գումարից:

Վերջապես, բնակարանային շինարարությունը, վորը 1927|28 թ.  
իր չափերով գնահատվում էր նույնքան, վորքան և ամբողջ տրոյու-  
նաբերական շինարարությունը, 15 տարուց հետո ավելանալու յե ար-  
վելի քան 20 անգամ և իր արժեքով (1927|38 թ. գներով) գերազան-  
ցելու յե բնակարանային ֆոնդի այժմյան արժեքից մոտավորապես  
1,5 անգամ:

Այս վիթխարի շինարարությունը, վորը հետևյալ չորրորդ հնգա-  
մյակում իր ծավալով աճելու յե մոտավորապես 3,5—4 անգամ, և  
վորի չափերի մասին այժմ դժվար է վորևե կոնկրետ գաղափար կազ-  
մելը, իրոք, ստեղծում է աշխարհում չտեսնված «մեծ աշխատանքնե-  
րի մի դարաշրջան», վորը սաղմնավորվում է արդեն առաջին հնգամ-  
յակում, իսկ լիակատար ծաղկման է հասնում, հավանականաբար, ար-  
դեն ընդհանուր պլանից դուրս, չորրորդ և հաջորդ հնգամյակներում:

Այս դարաշրջանը մարդկային ենթագիտյի, գիտելիքների ու  
մարդկային հանճարի վիթխարի մասսա յե պահանջում: Հարկավոր  
են յեռանդուն և պատրաստված կառուցողները հսկայական կադրեր,  
հարկավոր են բարձր կուլտուրական մակարդակ, գիտակցական յեր-  
կաթի կամք և խանդավառություն, վոր պետք է հանդես բերին սո-  
ցիալիզմ կառուցող պրոլետարական մասսաները: Ունենք և կամ  
կունենանք, արդյոք, մենք սոցիալիզմի կառուցման համար անհրա-  
ժեշտ այդ պայմանը: Կունենանք, արդյոք, մենք այդքան տեխնիկա-  
կան ուժեր՝ «մեծ աշխատանքների դարաշրջանը» իրագործելու  
համար:

Այդ հարցերին սեռք է անպայման դրական պատասխան տալ:  
Վորովհետեմ մեծ խնդիրների կիրարկումը կյանքում սեղծում է  
ճայեմ ճեռնց իրագործման համար անհրաժեշտ մարդկանց: Յեմ վոր-  
քան արագ է ընթանում այդ պրոցեսը, այնքան ավելի արագությունը  
ել նա փոփոխում է մարդկանց աշխատանքի պայմանները և նույն-  
քան արագ ել փոխում, վերամշակում է նաև մարդկանց:

Մեր բանվոր դասակարգը ունի դրա համար անհրաժեշտ բոլոր


հատկությունները, թեև նրա ընդհանուր-կուլտուրական մակարդակը  
դեռ բարձր չէ, նրա աշխատանքի արտադրողականությունը ցած է:  
Սակայն նա 15 տարվա ընթացքում պետք է անցնի ստեղծագործու-  
թյան մեծ դպրոցը, իր թափով կատարի և իր չափերով ապշեցուցիչ  
վիթխարի կառուցման մեծ դպրոցը, վորտեղ նա միաժամանակ սլետք  
է և՛ սովորի և՛ կառուցի, և այդ ուսուցման ընթացքում ել նա կվե-  
րամշակի ինքն իրեն: Այդպիսի դպրոցի 15 տարին մի հսկայական,  
վիթխարի ժամանակամիջոց է, և այդ ժամանակամիջոցում բանվորը  
ինքը իրեն բոլորովին կվերամշակի,—նա կաճի և կսովորի, կվերա-  
պատրաստվի այն պահանջների համեմատ, վոր նրան կառաջա-  
դրի հետզհետե ավելի ընդարձակվող սոցիալիստական շինարարու-  
թյունը:

Կունենանք, արդյոք, մենք տեխնիկական պերսոնալի պակասու-  
թյուն: Իհարկե, կունենանք, քանի վոր այն կատարի տեմպը, վորով  
մենք ընթանում ենք և վորով մենք ուզում ենք նաև ապագայում  
ընթանալ, մեզանում շարունակ շատ ու շատ բաների պակասություն  
կառաջացնի, և մենք շատ քիչ դեպքերում վորևե բանի առատություն  
կղզանք: Սակայն տեխնիկական պերսոնալի պակասությունը չի կա-  
րող սոցիալիզմի կառուցման անհրաժեշտ տեմպի համար անհաղթա-  
հարելի խոչընդոտ հանդիսանալ: Մենք կստեղծենք տեխնիկական  
պերսոնալ, և նա բնականաբար, անհրաժեշտորեն, կստեղծվի վիթխա-  
րի թափով ծավալվող շինարարության ու արտադրության պրոցես-  
սում: Մենք պետք է մերձավոր տարիներում հսկայական թվով  
բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական դպրոցներ բանանք, և  
մենք պետք է ամենալավ յեղանակով այդ դպրոցներում ուսուցումը  
զուգորդենք, շղկապենք գործնական ուսուցման հետ՝ շինարարու-  
թյան և արտադրության մեջ: Մենք պետք է ստեղծենք պրոլետարա-  
կան գործին նվիրված և խանդավառ տրամադրությունը կարմիր մաս-  
նագետների բազմաթիվ և կուռ կադրեր, իսկ պակասող տեխնիկական  
պերսոնալը, հատկապես առաջին շրջանում, մենք կարող ենք ուրիշ  
յերկրներից հրավիրել:


Դասակարգային գիտակցությունը, յերկաթի կամքը և բացառիկ  
խանդավառությունը հնարավորություն տվին ցարիզմի դարավոր  
ստրկությունը և կապիտալիզմի լուծը դեռ նոր խորտակած բանվոր  
դասակարգին հրեշավոր քայքայվածություն, աղքատության և սովի  
պայմաններում հաղթահարելու իմպերիալիզմի հզորագույն գիշատիչ-  
ների, վորոնք կամենում էին յերիտասարդ պրոլետարական պետու-  
թյունը հենց իր սաղմի մեջ խեղդել: Դասակարգային գիտակցու-

բլուճը, յերկաթի կամբը յեվ սոցիալիսական շինարարության մեծ խանգավառությունը հնարավորություն կտան բանվոր դասակարգին աստիճանաբար անող բարեկեցության յեվ արագորեն զարգացող ժողովրդական սնեսության պարագաներում իրագործել սոցիալիզմի կառուցման խնդիրը մի այնպիսի վոչ-փոքր ժամանակամիջոցում, ինչպես 15 արիս է:

Մեր ընդհանուր պլանը պե՛տ է սոցիալիզմի կառուցման պլան լինի:



15. Հասարակական կուտակումների մուսավոր հաշվեկշիռը և նրանց լրացումը 1942-43 թ. և 1947-48 թ.:




4. Թեթեվ և ծանր արդյունաբերության արտադրության քանակական աճումը (իբրև միավոր ընդունված՝ 1927—28 թ. մակարդակի համեմատությամբ)\*):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Խմբագրությունը . . . . .	3
1. Ներածություն . . . . .	7
2. Տեմպերի հարցը . . . . .	12
3. Արդյունաբերական արտադրանքի աճման հեռանկարները . . . . .	24
4. Գործող հիմնական կապիտալի աճումը և հիմնական աշխատանքների անհրաժեշտ չափը . . . . .	27
5. Աշխատանքի հիմնական ցուցանիշներ . . . . .	32
6. Խնքնարժեքի իջեցում . . . . .	38
7. Հիմնական աշխատանքների արժեքների իջեցում . . . . .	44
8. Գործարանային գների իջեցում . . . . .	52
9. Արդյունաբերության կուտակումների աճումը . . . . .	56
10. Արդյունաբերության անհրաժեշտ ներդրումները և նրա կուտակումները . . . . .	60
11. Տրանսպորտ . . . . .	67
12. Գյուղատնտեսություն . . . . .	73
13. Գերբնակչության պրոբլեմը և աշխատանքի հաշվեկշիռը . . . . .	83
14. Կուլտուրական հեղափոխություն և կենցաղի հանրայնացում . . . . .	95
15. Ժողովրդատնտեսական կուտակումները և նրանց բաշխումը . . . . .	105
16. Մեծ աշխատանքների դարաշրջան և նոր մարդու ստեղծում . . . . .	115
Հավելված. դիագրամ—«Հասարակական կուտակումների մոտավոր հաշվեկշիռը և նրանց բաշխումը 1942/43 և 1947/48 թ.» . . . . .	121

\*) 39 և 35 յերեսների դիագրամների հաջորդական թվերը պետք է լինեն 5 և 6:



## ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԵԶ	ՏՈՂ	ՏՊՎԱԾ Ե	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
9	15 ն.	Եյակտն	Իրական
19	(դիագրամ)	դեկրետ.	դիրեկտիվներ
54	1 ն.	իմ	մի
56	6 վ.	սլատմականորեն	սլայմանականորեն
64	2 ն.	ճյուղերից	ճյուղերի
91	(դիագրամ)	հետևյալ գյուղերում վար- ձու աշխատավ.	հետևյալ ճյուղերում վար- ձու աշխատանքի
95	4 վ.	սոցիալական	սոցիալիստական
103	7 ն.	նախագծում	նախագծում եմ
104	1 վ.	ապահովագրու թիշուն	ապահովու թիշուն
108	1 ն.	հտրաբերաբար	համեմատաբար
109	10 ն.	նրա համար	սրա համար
121	(դիագրամ)	40	4,0





32.276

481  
800

ԳԻՆԸ 70 Կ. (Մ.) 11<sup>3</sup>/<sub>4</sub> Տ.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Л. М. САБСОВИЧ

СССР через 15 лет.

Госиздат ССР Армении  
Эривань 1929 г.